Համացեղութիւն s. descendance d'une race commune, parenté; homogénéité.

Համափառ a. qui a la même gloire.

Համաքանակ a. aliquote.

Համբակ, աց s. enfant, fils, garçon; apprenti; écolier, disciple; adj. nouveau, novice, inexpérimenté; —ղ գու, jeune homme; — նաւաստոյ, mousse.

Համբակութիւն s. apprentissage; inexpérience.

Համբառնամ, բարձի va

lever, élever, soulever, enlever; — զանձն, s'élever; — զմիտս իվեր առ Աստուած, élever l'esprit à Dieu.

Համբառնամ, բարձայ vn. s'élever, monter, se soulever, se lever; — հակառակ ումեք, s'élever contre qn.

Համբար, աց, ոց s. magasin, dépôt, grenier; provision, munitions, vivres, fourniture, approvisionnement, avitaillement.

Համբարածու, աց s. approvisionneur, fournisseur.

Համբարակ, աց s. fournisseur; réservoir, dépôt, magasin.

Համբարակապետ, աց sm. intendant, fournisseur, approvisionneur, pourvoyeur.

Համբարակեմ V. Համբարեմ.

Համբարան, ի s. anat. matrice.

Համբարանոց, աց s. entrepôt, magasin, grenier.

Համբարապան, աց s. gardien d'entrepôt, magasinier.

Համբարեմ, եցի va. faire provision, approvisionner, avitailler, ravitailler, magasiner; mettre en réserve, serrer, amasser.

Համբարձումն s. élevation, ascension; l'Ascension.

Համբարոց V. Համբարանոց.

Համբարու, աց s. sirène, fée.

Համբարտակ V. Ամբարտակ.

Համբաւ, ոց, աց s. renommée, réputation, renom, vogue, célébrité; nouvelle, bruit; —ի հարկանիլ, s'ébruiter, se divulguer; se rendre célèbre, être en vogue, avoir la vogue, être renommé; համբաւի հարեալ է խաղս, cette pièce fait fureur; — բարեաց, bonne réputation; ել — զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին, le bruit de son nom se répandit dans tout le pays; ելանէր՝ հնչէր՝ իդուրս յաճախէր՝ տարածէր —, le bruit se répandait; — ընթանայ, il court un bruit, le bruit court que; ձախողակի — հանել՝ ընթացուցանել զումեքէ, faire courir un mauvais bruit sur le compte de qn.; — քաջութեանն ընդ ամենայն կողմանս ընթանայր, la renommée de son courage se répandait partout; — հանել՝ տարածել, faire courir, semer ou répandre une nouvelle, des bruits; արագաթեւ —, la prompte renommée, la prompte courrière; յեղակարծ՝ սուտ —, étrange, fausse nouvelle; — մեծ ստանալ, acquérir un grand renom; չունել զ—, n'avoir aucun renom; աղարտել զ— ուրուք, flétrir, noircir ou ternir la renommée de qn.; վնասել անձին համբաւոյ, nuire à sa renommée; աղարտել զ— իւր, flétrir sa renommée; V. Ռամիկ.

Համբաւաբեր, աց a. porteur de nouvelles.

Համբաւակոծ առնեմ va. divulguer, ébruiter, publier, rendre public.

Համբաւաբան a. qui répand de faux bruits, brouillon.

Համբաւաւոր, **Համբաւաւոր**, աց a. renommé, fameux, célèbre.

Համբաւեմ, եցի va. célébrer, rendre célèbre; divulguer, ébruiter, rendre public, faire connaître partout; —իմ vn. devenir célèbre; être divulgué, s'ébruiter.

Համբերական, **Համբերատար** a. patient, endurant.

Համբերեմ, եցի vn. avoir patience, de la patience, patienter, prendre patience; endurer, souffrir, supporter; որ համբերեսցէ իսպառ՝ նա կեցցէ, celui qui persévérera jusqu'à la fin sera sauvé.

Համբերող a. patient, endurant.

Համբերութիւն s. patience; *— ունենալ, avoir —, de la —; կորուսանել զ—, perdre —, s'impatienter; տալ կորուսանել զ—, faire perdre —, pousser à bout; *—ս կհատնի, la — m'échappe.

Համբոյր, բուրից s. baiser; fig. douceur, affabilité, familiarité; union, jointure, liaison; spondée; a. familier, doux, affable; propice; d'accord, unanime; — տալ ումեք, donner un baiser, des baisers à qn.; գալ ի—, se familiariser, s'apprivoiser, s'adoucir; ի— ածել, familiariser, apprivoiser; adoucir; persuader; հաշտ եւ — առնել, apaiser, concilier; — Յուդայի՝ մատնչի, baiser de Judas, de traître; տալ միմեանց — խաղաղութեան, se donner le baiser de paix; համբոյր եւ կամակ բարս ստանալ, avoir un caractère doux, s'adoucir; — յարդարել, adoucir.

Համբուն adv. entièrement, tout à fait.

Համբուրասէր a. qui aime à baiser, baiseur; affable, pacifique.

Համբուրեմ, եցի va. baiser, couvrir de baisers; — զմիմեանս, se baiser; — զձեռս զաջ ուրուք, baiser les mains à qn.; համբուրեաց ընդ նմա, lui donna un baiser, l'embrassa.

Համբուրեցուցանեմ, ուցի va. familiariser, apprivoiser.

Համեղ a. savoureux, délicieux.

Համեղահամ, **Համեղաճաշակ** a. exquis, agréable au goût, savoureux, délicieux.

Համեղանամ, ացայ vn. devenir savoureux, exquis.

Համեղացուցանեմ, ուցի va. rendre savoureux, exquis.

Համեղութիւն s. bon goût, saveur exquise, goût agréable.

Համեմ, աց sm. aromate, épice; amome; V. **Համեմանք**.

Համեմանք, նաց s. épices, aromates; sauce, assaisonnement, ragoût.

Համեմանոթ, ոյ s. saucière.

Համեմատ, ից a. proportionné, qui est en rapport, analogue, symétrique; **եթէ**

իցեն իբրեւ առաքինութիւնք — ք վեհ ճակատագրիդ, si vous répondez par vos vertus à votre haute destinée; ըստ — ի, à proportion, en proportion; en comparaison.

Համեմատաբար V. Համեմատութեամբ.

Համեմատական a. proportionnel, analogue; comparatif.

Համեմատելի a. comparable.

Համեմատեմ, եցի va. comparer, confronter; proportionner; — գիրս, collationner.

Համեմատութիւն s. comparaison; proportion, analogie, rapport, harmonie, symétrie; math. proportion; — գրոց, collation; — բ, proportionnellement, en proportion, à proportion, proportion gardée; comparativement, en comparaison, par comparaison, par rapport, relativement.

Համեմաւոր, աց a. assaisonné, aromatique.

Համեմեմ, եցի va. assaisonner; aromatiser, épicer; — աղիւ, saupoudrer avec du sel.

Համեմիչ s. assaisonneur.

Համեմուկ s. vanille.

Համեստ, ից a. modeste, modéré, retenu.

Համեստաբար adv. modestement, avec modestie.

Համեստանամ, ացայ vn. être modeste.

Համեստացուցանեմ, ուցի va. rendre modeste.

Համեստութիւն s. modestie, modération, retenue.

Համետ, ից sm. selle, bât, harnais.

Համետագործ, ից s. sellier.

Համետարան, ի s. sellerie.

Համետեմ, եցի va. seller, bâter, enharnacher.

Համերամ V. երամովին.

Համերասանակ ընթանալ, courir ensemble; fig. marcher d'accord avec.

Համհարզ V. Համահարզ.

Համհօրեայ V. Համահայր.

Համոզական, աց a. persuasif; — լինել, persuader, fléchir.

Համոզեմ, եցի va. persuader, entraîner par la persuasion.

Համոզիչ a. persuasif.

Համոզումն s. persuasion.

Համր, մերց a. muet; — լինել, être muet.

Համոյք s. choses modérées.

Համրանամ, ացայ vn. devenir muet, perdre la parole.

Համրացուցանեմ, ուցի va. rendre muet.

Համրիմ V. Համրանամ.

Համրութիւն s. état d'une personne muette.

Համօրէն a. tout, total, entier; adv. tout entier, totalement, entièrement; — ի վերայ կալ, comprendre bien, saisir parfaitement.

Հայ, ոց s. a. arménien; ի —, en arménien; ի — լեզու ou բարբառ, en langue arménienne; Թարգմանել ի —, յեղուլ ի — բան, traduire en arménien, en langue arménienne; Հայք ou Հայեր, les Arméniens; Հայք, l'Arménie.

Հայաբարբառ a. qui parle la langue arménienne.

Հայաբնակ a. habité par les Arméniens.

Հայագէտ s. arméniste.

Հայագունդ a. composé par les Arméniens; s. troupe arménienne.

Հայադաւան a. arménisant, qui a la profession, la politique, les mœurs des Arméniens.

Հայադրօշ s. drapeau arménien.

Հայազարմ, Հայազն V. Հայկազն.

Հայախառն a. mêlé d'arménien.

Հայախնամ a. qui a soin des Arméniens; soigné par les Arméniens.

Հայախումբ V. Հայակոյտ.

Հայածին, Հայածնունդ a. né d'un Arménien.

Հայակոյտ a. composé, réuni par des Arméniens.

Հայամեծար a. qui honore les Arméniens; honoré par les Arméniens.

Հայանախատ a. qui outrage les Arméniens, indigne à un Arménien.

Հայանման a. semblable à un Arménien.

Հայանշան a. qui porte le signe d'Arménie; — դրօշ V. Հայադրօշ.

Հայավայել a. digne d'un Arménien, des Arméniens.

Հայասեռ a. de la race arménienne, Arménien; հայասեռքս, nous autres Arméniens.

Հայասէր a. qui aime les Arméniens, philarmène.

Հայասիրութիւն s. philarménie.

Հայասիրտ a. qui a un cœur arménien.

Հայաստան, ի s. l'Arménie.

Հայաստանեայք, եայց s. les Arméniens.

Հայաստանցի, ցւոյ s. Arménien.

Հայացի a. arménien.

Հայեացք, եցից s. regards, vue.

Հայելագիտական a. catoptrique.

Հայելագիտութիւն s. catoptrique.

Հայելագործ, աց s. miroitier

Հայելապատ a. entouré de glaces.

Հայելավաճառ, աց s. miroitier.

Հայելավաճառութիւն s. miroiterie.

Հայելի, ելւոյ, ելեաց s. miroir, glace; a. visible, observable.

Հայեկ, ի s. hune.

Հայերէն adv. en arménien; a. arménien; — խօսի՞ք, parlez-vous arménien? — գիտէ՞ք, savez-vous l'arménien? ուսանել զ—, apprendre, étudier l'arménien; — Թարգմանել, traduire en arménien; — գիր, l'écriture arménienne; — տառք, les lettres arméniennes, les caractères arméniens; — լեզու՝ դպրութիւն, la langue, la littérature arménienne.

Հայերէնագէտ s. arméniste.

Հայերէնախօս, ից a. qui parle l'arménien.

Հայեցած V. **Հայեցուած**.

Հայեցական a. contemplatif.

Հայեցի V. **Հայացի**.

Հայեցիկ a. qui sert à voir, à regarder.

Հայեցող s. contemplateur.

Հայեցողական a. contemplatif.

Հայեցողութիւն s. contemplation.

Հայեցուած, ոց s. coup d'œil, regard, vue; aspect, spectacle; անյողդողդ —, regard ferme, assuré.

Հայեցութիւն ou **Հայեցումն** V. **Հայեցուած**.

Հայեցուցանեմ, ուցի va. faire voir, faire regarder; incliner, faire pencher ou porter; appliquer.

Հայթայթամտեմ, եցի vn. s'ingénier, inventer.

Հայթայթանք ou **Հայթհայթանք**, նաց s. invention, expédient, moyen, remède; vivres, provision, préparatifs; soulagement; հայթայթանս առնել, réparer; — կենաց, subsistances, moyens de vivre; V. **Հնարք**.

Հայթայթեմ ou **Հայթհայթեմ**, եցի vn. inventer, trouver un moyen, s'aviser de, tâcher; procurer, pourvoir, fournir, subvenir à une dépense, aux besoins, gagner; réparer.

Հայիմ, յեցայ vn. regarder, jeter les yeux, jeter des regards, voir; diriger son esprit, son attention vers qch., être attentif, remarquer, observer, considérer, envisager; regarder, s'adresser, tendre à, appartenir, être relatif à, concerner, avoir rapport à, mirer, viser; se porter, aspirer à; avoir la vue, être exposé; — մտօք, contempler; գեղեցիկ հայելով, beau, charmant; ոչ ինչ հայեցեալ ի—, malgré; պշուցեալ — յոք անյագ, ne pouvoir se lasser de regarder qn., le dévorer des yeux; հայեցեալ ընդ նա, fixant sur lui ses regards; — ի վեր, regarder en haut; ընդ ականք —, V. Ակն; — յոք գորովալից աչօք, regarder qn. avec des yeux plein de tendresse; — խանդաղատանօք, regarder avec affection, couver des yeux; միմնչդեռ նա այսր անդր հայէր, comme il regardait de côté et d'autre.

* **Հայլի** V. **Հայելի**.

Հայկ, ի, իւ ou այ, աւ sm. Haïg (le premier héros de la nation arménienne, dont elle est appelée Հայ ou Arménienne); astr. Orion.

Հայկաբան, ից a. s. arméniste, qui parle, qui écrit l'arménien pur.

Հայկաբանութիւն s. arménien pur, arménisme.

Հայկաբար adv. comme Haïg, bravement, courageusement, valeureusement.

Հայկազարմ a. de la race de Haïg, arménien.

Հայկազեան, եանց. Հայ-

կազմ, զանց. Հայկազնեայ, եայց. Հայկազնեան, Հայկազուն a. haïganien, arménien; Հայկազունք, les Arméniens.

Հայկական a. haïganien, arménien; — լեզու, la langue arménienne.

Հայկաշէն a. construit par Haïg.

Հայկասիրտ a. qui a le cœur de Haïg, courageux, intrépide.

Հայկաւ s. bol d'Arménie.

Հայկեան a. arménien; — զգոհ, la nation arménienne.

Հայհոյական a. blasphématoire, injurieux; — բան, propos —.

Հայհոյանք, նաց sm. blasphèmes; injures, diffamations.

Հայհոյեմ, եցի va. blasphémer, proférer un blasphème, jurer, tenir de mauvais propos; injurier, médire, diffamer.

Հայհոյիչ s. blasphémateur, jureur; V. Հայհոյական.

Հայհոյութիւն s. blasphème, jurement; diffamation, injure, médisance.

Հայորեար, երոյ s. pl. les Arméniens, la noblesse arménienne.

Հայութիւն s. la nationalité arménienne.

Հայուհի sf. Arménienne.

Հայս, ից s. pâte; — հարկանել, pétrir la pâte.

Հայր, հօր, հարց s. père, papa; père, chef, fondateur; inventeur, auteur; père (titre donné aux prêtres religieux); հայրն Արսենիոս, le père Arsène; գերապատիւ —, révérend père; — սուրբ, saint père; հոգեւոր —, père spirituel; — խոստովանութեան, V. Խոստովանահայր; — ժողովրդեան՝ հայրենեաց՝ աղքատաց, père du peuple, de la patrie, des pauvres; — եւ մայր, le père et la mère, les parents; որդի ի հօրէ, de père en fils; իբրեւ զ—, comme un père; ազնիւ՝ քաղցրութ —, un bon, tendre père; սիրտ՝ գութ՝ սէր հօր, le cœur, la tendresse, l'amour d'un père; պատուել՝ մեծարել՝ սիրել զ—, honorer, respecter, aimer son pére; Հայրն Աստուած, Հայր երկնաւոր՝ գթութեան՝ լուսոյ, le Père céleste, de miséricorde, des lumières; Հայր մեր, Notre Père, le Pater; հարք մեր, nos pères, nos aïeux, nos ancêtres; Հարք եկեղեցւոյ, les Pères de l'Église; ննջեաց ընդ հարս իւր, il dormit avec ses pères; յաւելուլ առ հարս, aller ad patres, mourir.

Հայրաբար adv. paternellement, en père, comme un père.

Հայրաբարոյ, ից a. qui a le caractère de son père, qui ressemble à son père; comme un père, semblable à un père.

Հայրաբուն a. paternel.

Հայրագիր s. père adoptif.

Հայրազերծ a. parricide.

Հայրախեղդ a. qui étrangle son père, parricide.

Հայրախնամ a. qui a un soin paternel; qui a soin de son père.

Հայրածին, ծնի a. né du père.

Հայրակամ a. fait par la volonté du père.

Հայրական a. paternel; — օրհնութիւն, bénédiction paternelle.

Հայրակեր, ալ a. qui mange son père.

Հայրակոչ լինիմ vn. appeler son père.

Հայրահալած լինիմ va. persécuter son père.

Հայրամեծար a. qui respecte son père.

Հայրանամ, ացայ vn. être, devenir père.

Հայրանարգու a. qui méprise son père.

Հայրանուն a. qui porte le nom de son père.

Հայրանունական a. patronymique.

Հայրաշարժ a. qui est procédé du père.

Հայրապետ, աց s. patriarche, pontife.

Հայրապետական a. patriarcal, pontifical.

Հայրապետանոց, Հայրապետարան, աց s. siége, résidence d'un patriarche, d'un pontife.

Հայրապետութիւն sm. patriarcat, pontificat.

Հայրասէր a. qui aime son père.

Հայրասպան, ալ s. parricide.

Հայրասպանութիւն s. meurtre d'un père, parricide.

Հայրատեաց a. qui hait son père.

Հայրատունկ adj. qui est planté par le père.

Հայրատուր V. Հայրենատուր.

Հայրենաբուն a. indigène.

Հայրենադրուժ a. qui a trahi sa patrie.

Հայրենական a. paternel; patrimonial; — ստացուածք, patrimoine.

Հայրենասէր, սիրաց s. qui aime sa patrie, patriote; ճշմարիտ՝ անձնանուէր —, un vrai, dévoué patriote.

Հայրենասիրական a. patriotique.

Հայրենասիրութիւն s. amour de la patrie, patriotisme.

Հայրենավրէժ a. qui venge son père, sa patrie.

Հայրենատուր a. donné par le père, par les ancêtres; paternel.

Հայրենաւանդ a. transmis par le père, par les ancêtres, héréditaire.

Հայրենի, ենւոյ a. paternel; natif, natal; — գաւառ՝ աշխարհ՝ երկիր, pays natal, terre natale, foyers, patrie, pays de ses pères.

Հայրենիք, նեաց s. patrie, pays natal, lieu de la naissance; parents, ancêtres; patrimoine, biens paternels; վտարել զոք ի հայրենեաց, expatrier; ելանել ի հայրենեաց, s'expatrier; Թողուլ զհայրենիս, quitter la patrie; երթալ ի հայ-

րենիս, aller à la patrie; մտանել ի հայրենիս, rentrer dans sa patrie; յիշատակ հայրենեաց, le souvenir de la patrie; նուիրել զանձն հայրենեաց, զանձն դնել ի վերայ հայրենեաց, se dévouer pour sa patrie; ծառայել հայրենեաց, servir sa patrie, rendre des services à sa patrie; անձուկ՝ կարօտ հայրենեաց, désir de la patrie; mal du pays, hostalgie; սէր՝ հող հայրենեաց, l'amour, le sol de la patrie; արժանի լինել հայրենեաց, bien mériter de la patrie.

Հայրիկ s. petit père, papa; ընդէ՞ր ոչ ուտես —, petit père, pourquoi ne manges-tu pas?

Հայրութիւն s. paternité.

Հայրօրէն V. Հայրաբար.

Հայց sm. demande; — եւ խնդիր լինել, ընդ — անկանիլ, demander, chercher, être à la recherche.

Հայցական s. gram. accusatif.

Հայցեմ, եցի va. demander en suppliant, implorer, solliciter, prier, postuler; շնորհ —, demander une faveur, une grâce; — օգնութիւն, réclamer, implorer du secours.

Հայցող s. solliciteur, postulant.

Հայցուած, ոց s. demande, sollicitation, prière.

Հայքար s. arménite, àrmentine.

Հան V. Հանի.

Հանածոյ, ծոյից a. minéral; s. minerai; —ք, minéraux.

Հանապազ adv. toujours, à tout moment, constamment, continuellement.

Հանապազաբուղխ adj. qui coule toujours.

Հանապազախօս լինիմ vn. parler toujours.

Հանապազակիր a. qui porte toujours; adv. en portant toujours.

Հանապազահոս V. Հանապազաբուղխ.

Հանապազաջան a. qui tâche toujours, très-actif, très-assidu.

Հանապազասուտ adj. qui ment toujours.

Հանապազատարած a. toujours étendu.

Հանապազատես a. qui se voit toujours; qui voit toujours.

Հանապազափոխ a. qui se change toujours.

Հանապազորդ, աց a. quotidien, de chaque jour; continuel, assidu; adv. toujours, continuellement, assidûment; — պատարագ, sacrifice perpétuel.

Հանապազորդեայ, Հանապազորդեան V. Հանապազորդ a.

Հանապազորդեմ, եցի vn. continuer, persévérer, être assidu à, ne pas cesser de, ne pas interrompre; — յաղօթս, persévérer dans la prière.

Հանապազորդիչ s. continuateur, persévérant.

Հանապազորդութիւն s. assiduité, continuation, persévérance, persistance, suite,

Հանապազօր adv. toujours, tous les jours.

Հանապազօրեայ a. quotidien, de tous les jours.

Հանգամանք, նաց s. condition, état, nature, situation, disposition; circonstances, détails, particularités; manière, façon; modèle, preuve; — ժամանակին, les circonstances actuelles, les actualités.

Հանգանակ, ագ s. cotisation, contribution, écot, portion; — հաւատոյ, symbole; — առաքելոց, le symbole des apôtres; —աւ գործել զինչ, faire une chose en société; —աւ, à pique-nique.

Հանգանակակից s. qui cotise ensemble, compagnon d'écot, de table, convive.

Հանգանակաւոր a. cotisé, boursillé.

Հանգանակեմ, եցի va. cotiser, se cotiser, boursiller; contribuer, aider.

Հանգանակութիւն s. cotisation, écot, souscription.

Հանգէտ a. semblable, pareil, égal, conforme.

Հանգիստ, գստեան s. repos; délassement, récréation; aise, aisance, commodité, bien-être; repos, pause, relâche, halte, trêve; fig. tombeau; repos, sommeil, mort; a. tranquille, paisible, sage; — առնուլ, prendre du repos, des délassements, se reposer; — տալ, donner du repos, reposer; հանգստեամբ, commodément, à loisir, à son aise, à l'aise, aisément; Թողուլ ի հանգստեան ou *— Թողուլ, laisser tranquille, en paix; ժամերգութիւն հանգստեան, office de complies.

Հանգիտակ V. **Հանգէտ.**

Հանգիտանամ, ացայ vn. égaler, être ou se rendre égal à, se mettre de pair avec, ressembler.

Հանգիտապատիւ, տուաց a. qui jouit d'un honneur égal.

Հանգիտարագ adj. d'une égale rapidité.

Հանգիտութիւն s. égalité, parité, ressemblance, conformité.

Հանգոյն adv. comme, en guise de, à la façon de; comme, presque; a. V. **Հանգունակ.**

Հանգոյց, գուցից s. nœud, lien; station, poste; bot. nœud; fig. nœud, difficulté; գիծ հանգուցից, ligne de nœuds; վերամբարձ՝ վայրաբեր —, nœud ascendant, descendant; գորդեան —, nœud gordien; քակել՝ արձակել զհանգոյցն, défaire un nœud; — առնել, faire un nœud, nouer.

Հանգունակ ou **Հանգունական**, **Հանգունակից**, **Հանգունատիպ**, **Հանգունաւոր** adj. semblable, conforme, égal, uniforme.

Հանգուշն a. retroussé, relevé, serré; adv. en relevant, avec soin, soigneusement.

Հանգուցանեմ, ուցի va. reposer, faire reposer, laisser

respirer ou reposer; délasser, donner du repos; poser, mettre, placer, terminer, finir, arrêter (un discours); — յերկոց տուրնջեան, délasser des travaux du jour.

Հանգուցեալ a. reposé, délassé; trépassé, décédé, feu, défunt; —ն, le défunt; — տէր.... le feu monsieur...

Հանգուցիչ a. celui qui repose, délasse.

Հանգչիմ, գեայ vn. se reposer, respirer, reposer, se délasser, prendre du repos; chômer; mourir, décéder; finir, s'arrêter, faire halte; — ի վաստակոց, se délasser de ses travaux; — ի խաղաղութեան, se reposer en paix.

Հանգստաբար adv. tranquillement, à son aise.

Հանգստական a. tranquille; s. quiétiste.

Հանգստականութիւն sm. quiétisme.

Հանգստանոց V. Հանգստարան.

Հանգստասէր a. qui aime le repos.

Հանգստարան, աց s. lieu de repos, reposoir; fig. tombeau.

Հանգստաբեր, աց a. qui repose, qui donne du repos.

Հանգստաւէտ a. plein de repos, très-commode, très-sûr.

Հանգստոց, աց s. tombeau.

Հանգստութիւն sm. repos, tranquillité, aise, commodité; — չունի, il n'a pas de repos.

Հանգրիճաձև a. retroussé, relevé, serré.

Հանգրիճեմ, եցի va. trousser, retrousser, relever, serrer.

Հանգրիճումն s. retroussement.

Հանգրուան, աց s. habitation, demeure; hameau, village; étable, bercail; rade; station.

Հանգրուանապետ, աց sm. chef de station.

Հանդարտ, ից a. tranquille, paisible, posé, calme, grave; — ou —ս, tranquillement, doucement, tout doucement, avec calme; — լինել՝ կալ, être ou rester tranquille; — լինել, patienter, avoir de la patience, attendre.

Հանդարտաբարոյ a. qui a un caractère tranquille, paisible, tranquille.

Հանդարտագնաց ou Հանդարտաճեմ, ից a. qui marche tranquillement, qui coule doucement; — առու, ruisseau qui a un cours paisible.

Հանդարտամիտ a. qui a l'esprit tranquille.

Հանդարտանամ V. Հանդարտիմ.

Հանդարտասիրտ a. qui a le cœur tranquille, paisible.

Հանդարտաքայլ V. Հանդարտագնաց.

Հանդարտեմ, եցի va. tranquilliser, calmer, apaiser; faire cesser, adoucir; vn. se tranquilliser, se reposer, se tenir en repos, se calmer, s'apai-

ser; être tranquille, se tenir tranquille, cesser, se taire, demeurer dans le repos; souffrir, endurer, supporter, résister, être en état de, pouvoir; չհանդարտէր հայէր, il ne pouvait pas s'empêcher de regarder; — զկիրս՝ զամբոխեալ միտս ուրուք, calmer les passions, les inquiétudes de qn.

Հանդարտեցուցանեմ V. Հանդարտեմ va.

Հանդարտիկ adv. tranquillement, doucement, tout doucement, posément. bellement.

Հանդարտիմ V. Հանդարտեմ vn.

Հանդարտութիւն s. tranquillité, repos; tranquillité, flegme, sang-froid; — ծովու՝ կրից, le calme de la mer, des passions.

Հանդերձ, ից s. habit, vêtement, habillement; préparation, apprêt, appareil, somptuosité, pompe; — լայն՝ անձուկ ou ճեղ՝ շքեղ, habit large, étroit, magnifique; — առանց խորշխորշանի, habit sans plis;

Հանդերձ prép. avec; — կնաւ իւրով, avec sa femme; — որդւովքն, avec ses enfants; — — այնու, avec cela, en outre, de plus; այլովքն —, et cætera, ainsi de suite; — այսու ամենայնիւ, outre ou malgré tout cela, après tout, toutefois; — ամենայն թերութեամբքն, malgré tous ses défauts; — որքիմբք, avec tout cela; en même temps.

Հանդերձան, ի. Հանդերձանք, նաց s. préparatifs, apprêts; assaisonnement; composition, préparation, appareil, attirail, dispositions, meubles, bagages; machines, instruments; provision, fourniture; appareil somptueux, magnificence, pompe, éclat; vêtement, habillement; construction, édifice; — նաւու, équipement d'un vaisseau.

Հանդերձանի, նւոյ s. pl. habits, vêtements; draperies.

Հանդերձապետ, աց sm. grand maître de garde-robe, ministre du palais; linger, lingère; intendant, régisseur, économe.

Հանդերձատուն, տան. Հանդերձարան, ի s. garde-robe, lingerie, vestiaire.

Հանդերձարար, աց s. tailleur.

Հանդերձաւորութիւն s. affaire, occupation, ouvrage.

Հանդերձեալ a. préparé, composé; somptueux, splendide, magnifique; futur; — կեանք, la vie future; — աշխարհ, l'autre monde; —ք s. l'avenir; ի հանդերձելումն, dans l'autre monde.

Հանդերձեմ, եցի va. préparer, apprêter; arranger, disposer, accommoder, composer, combiner, faire, fournir, procurer; garnir, meubler, orner, habiller, vêtir; équiper, armer; faire faire, construire ou faire construire.

Հանդերձիկ sm. méchant habit.

Հանդերձիմ, **ձեցայ** vn. se préparer, s'apprêter, se mettre à, être sur le point de; s'habiller, se vêtir; **հանդերձեալ էր դարձ առնել իտուն**, il était prêt à retourner chez lui.

Հանդերձիչ s. préparateur, faiseur.

Հանդէպ prép. devant, vis-à-vis, en face ou en présence de, à l'opposite, contre; **ի—**, **իհանդիպէ**, **իհանդիպոյ** adv. devant, devant soi, par devant, de front.

Հանդէս, **դիսի**, **սաց** s. fête, solennité, réjouissances publiques; procession, cérémonie religieuse, cortége; pompe, apparat, étalage, exposition, parade, montre, appareil magnifique; caractère; preuve, argument, démonstration; témoignage, déclaration; épreuve, essai; marque, signe; exercice, pratique; examen, enquête, recherche; affaire; acte, fait, action; effets; lutte, combat; effort, tâche; bravoure, hauts faits; revue; revue (journal); compte; scène, spectacle, jeux; arène; — **Թաղման**, funérailles, obsèques, convoi; **հանդիսիւ**, solennellement, pompeusement; — **առնել**, faire la revue de, passer en revue, examiner; faire montre ou parade de, exposer, montrer, déployer, faire valoir, pratiquer, exercer; — **առնել զօրաց**, faire la revue, passer les troupes en revue; **ի— ածել**, exposer, étaler; représenter, jouer; **ի— մտանել**, entrer en lice, descendre dans l'arène; être rangé dans; **ի— մարտից**, dans les combats; — **առնել քաջութեան**, s'éprouver sur la valeur, signaler sa valeur; — **առնել հանճարոյ**, relever des talents, faire étalage d'esprit, faire le spirituel; — **առնել զօրութեան**, employer sa puissance; — **առնել իմաստութեան իւրոյ**, faire éclater sa sagesse; **ի— անցանել**, concourir, rivaliser; paraître; — **առնել պերճութեան՝ գիտութեան**, étaler un grand luxe, son savoir; — **համարոյ առնել**, examiner, contrôler, faire le dénombrement de; — **լաւութեանց**, les bonnes qualités; — **առաքինութեան**, éclat de vertu.

Հանդիպական a. opposé; s. objet; — **լուսին**, la lune en opposition.

Հանդիպաւորութիւն V. **Հանդիպումն**.

Հանդիպեցուցանեմ, **ուցի** va. faire rencontrer; adopter, appliquer.

Հանդիպիմ, **պեցայ** vn. rencontrer, se rencontrer; obtenir, trouver, gagner, atteindre; jouir de; se rencontrer, arriver, se présenter, s'offrir, coïncider, s'accorder; — **միմեանց**, se rencontrer; **մեծամեծաց — շնորհաց**, recevoir de grandes grâces, faveurs; **իծեան**

նորա հանդիպեալ այսքաննեաց բարեմասնութեանց, il lui devait tant de prospérités ; հանդիպի լինել զի, il arrive que.

Հանդիպող s. celui qui rencontre.

Հանդիպութիւն, Հանդիպումն s. rencontre ; coïncidence ; — միմեանց, entrevue.

Հանդիսադիր, դրի, բաց s. agonothète, président d'un combat, d'une lutte, des jeux ; exposant.

Հանդիսական a. solennel, public, pompeux ; s. spectateur, assistant.

Հանդիսակից s. compagnon d'une solennité, d'un combat.

Հանդիսանամ, ացայ vn. combattre, lutter, rivaliser, entrer en lice ; se donner beaucoup de peine, s'efforcer, tâcher, essayer ; se signaler, s'illustrer, se rendre remarquable, se célébrer, se distinguer par ; se montrer, paraître ; se réunir à une fête publique, célébrer une cérémonie ; բաջայաղթ —, faire des conquêtes prodigieuses, faire des merveilles ; յաղթող —, demeurer victorieux ; յաղթող — իրիք, être le vainqueur de.

Հանդիսապետ, աց s. agonothète.

Հանդիսասէր a. qui aime les solennités, les fêtes.

Հանդիսատես, աց s. spectateur ; — լինել՝ կալ, être —, assister à ; —ք, le public.

Հանդիսարան, աց s. lice, arène ; tribunal ; galerie ; exposition ; scène, spectacle.

Հանդիսաբար, աց a. qui excite au combat, belliqueux.

Հանդիսացուցանեմ, ուցի va. solenniser, célébrer avec pompe, donner en spectacle, signaler ; compter, énumérer ; անպարտելի —, rendre invincible ; Թատերախաղ —, représenter, jouer une pièce.

Հանդիսացուցումն s. solennisation ; représentation.

Հանդիսաւոր, աց a. solennel, pompeux ; public ; s. combattant.

Հանդուրժեմ, եցի vn. souffrir, supporter, endurer, résister ; pouvoir.

Հանդուրժելի a. supportable, tenable.

Հանդրին անդունդք s. la mer Adriatique.

Հանեալ a. ôté ; répudié ; իբաց —, à l'exclusion, exclusivement.

Հանելի s. celui qui ôte.

Հանելուկ s. énigme ; * —ք գտանել, deviner une — ; — մի առաջարկել, proposer une —.

Հանեմ, նի vn. faire sortir ; ôter, tirer ; enlever, extraire, soustraire, déduire, retrancher ; offrir, présenter ; divulguer, publier ; monter, élever, porter en haut ; arith. soustraire ; — յաչաց, faire perdre les bonnes grâces, la faveur, l'affection de qn. ; — յաչաց ժողովրդեան, dépopulariser ; — ընդ սուր, passer au fil de

l'épée; իվեր —, faire savoir, découvrir, manifester, révéler, annoncer, dévoiler, déceler, démasquer; — յայլ լեզու, traduire; ի քանս —, séduire, tromper; յինքն —, s'approprier, s'arroger; — զաւուրս՝ զգիշերն, passer les jours, la nuit; — զհոգին, rendre l'esprit, l'âme; — զկին, répudier; — ջուր, puiser de l'eau; — անուն չար, diffamer, dénigrer; — իրաւունս, faire droit, rendre justice; — ընդ գլուխ՝ ընդ կառափն V. Գլուխ, Կառափն; ի գլուխ —, V. Գլուխ; — ընդ աշխարհ, faire savoir à tout le monde, divulguer, publier; իբրաց —, exclure; renvoyer, congédier; — զատամն, arracher une dent; *ակռայ —, pousser une dent à qn.; — զկօշիկս՝ զմուճակս՝ զգուլպայս, ôter ou tirer ses bottes, ses souliers, ses chaussettes ou ses bas, se déchausser; — ինաւէ, débarquer; — զքառակուսի արմատ թուոյ, extraire la racine carrée d'un nombre; — ճանապարհի, conduire, aboutir, mener; — ողջակէզ, sacrifier; — ինչ յոք, attribuer, imputer à qn.; — յոք զպատճառս ամենայն չարեաց, accuser qn. de tous les maux; — առ ոք, présenter à qn.; — յոք զինն, appliquer à qn.; արիւն —, tirer du sang, saigner; — իբանտէ, tirer de prison; — հետեւանս, tirer une conséquence; վրէժ —, tirer vengeance, se venger; վիճակ —, tirer au sort, tirer une loterie; — զսուրն ի պատենէ, tirer l'épée du fourreau; — օգուտ, tirer parti, du profit, utiliser; լեզու —, tirer la langue.

Հանի, նւոյ s. grand'mère, grand'maman, aïeule.

Հանիկ, հանկան V. Հանի.

Հանճար, ոյ s. intelligence, esprit; génie, talent; sagesse, prudence; raison, raisonnement; rhét. enthymème.

Հանճարաբան, ից adj. bel esprit, spirituel, sentencieux.

Հանճարաբանութիւն s. discours ingénieux, saillie.

Հանճարաբար adv. ingénieusement, sagement.

Հանճարագիտութիւն s. sagesse, science.

Հանճարական, Հանճարաւոր V. Հանճարեղ

Հանճարեղ, աց a. ingénieux, intelligent, plein d'esprit, spirituel; — այր, homme de génie, de talent; —ք, les gens d'esprit.

Հանճարեղութիւն s. intelligence, esprit.

Հանճարեմ, եցի vn. s'ingénier, inventer, imaginer.

Հանճարիմաց V. Հանճարեղ.

Հանճարիչ s. inventeur.

Հանութ V. Խանութ.

*Հանուեցնեմ, ուցի va. déshabiller.

*Հանուիմ, եցայ vp. se déshabiller.

Հանում, հանայ va. tisser.

Հանումն s. action de faire sortir, d'ôter; extraction; arith. soustraction; *— ընել, faire une soustraction.

Հանուր, նրոց, նուրց a. tout, chaque; général, universel; ընդ —, partout; հանուրց ազգաց, à tous les peuples.

Հանրաբար adv. généralement, universellement.

Հանրագիր, գրոյ s. encyclopédiste; —ք, encyclopédie.

Հանրագէտ, Հանրագիտական a. encyclopédique.

Հանրական a. général, universel.

Հանրահաշիւ s. algèbre

Հանրահաշուական a. algébrique.

Հանրահաշուեմ, եցի va. algébriser, faire de l'algèbre.

Հանրահաշուող s. algébriste.

Հանրահաշուօրէն adv. algébriquement.

Հանրաստուած, ոց s. panthéiste.

Հանրաստուածութիւն sm. panthéisme.

Հանք, աց s. mine.

Հանքաբան,ից s. minéralogiste.

Հանքաբանական a. minéralogique.

Հանքաբանութիւն s. minéralogie.

Հանքահատ, աց s. mineur.

•.**Հանքային** a. minéral; — ջուր, eau minérale; — ածուխ V. **Հանքածուխ**.

Հանքածուխ, ծխոյ s. charbon de terre.

Հաշեմ, եցի va. consumer, faire dépérir, épuiser.

Հաշիմ, շեցայ vn. se consumer, dépérir, s'épuiser, languir; — մաշիլ, fondre, dépérir, fondre à vue d'œil.

Հաշիւ, շուի sm. compte, calcul, supputation; ի— ածել՝ արկանել՝ բերել, calculer, compter; ճիշդ՝ մանրամասն՝ վերջին —, compte exact, détaillé, final; — առնել, *— ընել, faire le compte, un compte, calculer; ի հաշիւ՝ հաշուով տալ, donner à compte, par compte; ի—, à compte, à valoir; ի— իւր, pour son compte; կլոր՝ բոլորագումար —, compte rond; — տալ, rendre compte, rendre ses comptes; *մէկուն հաշուին սեպել, tenir compte d'une somme à qn.; *— բռնել, dresser un compte, tenir les comptes; *— բանալ, ouvrir un compte; փակել՝ աչարտել զ—, *—ը գոցել, clore, régler, terminer, arrêter le compte, solder; մաքրել՝ սրբել զ—, apurer un compte; *—ը շտկել, mettre ses comptes en règle; — ցուցանել՝ ընդունել՝ քննել՝ ճշդել, présenter, recevoir, examiner, vérifier un compte; *— տեսնել, faire le compte; *ծառային —ը տեսնել ու ճամբել, donner son compte à un domestique, lui faire son compte; — ընտրութեան, compte exact; comparaison; *հաշուին անցունել՝ դնել, passer, mettre qch. en

compte, le mettre sur un compte.

Հաշմ, ից. **Հաշմանդամ** a. estropié, impotent; — ոտիւք, infirme des deux pieds, boiteux.

Հաշմիմ, մեցայ vn. s'estropier, être estropié.

Հաշմոտ a. estropié.

Հաշմութիւն s. état d'une personne estropiée, clochement.

Հաշուասեղան, **Հաշուարան**, աց s. comptoir.

Հաշուեգիր, գրոյ s. livre de comptes, journal.

Հաշուեկալութիւն s. tenue des livres.

Հաշուեմատեան, տենի V. **Հաշուեգիր**.

Հաշուետումար, ի s. tenue de livres.

Հաշուեցուցակ, աց s. facture.

Հաշուըրնկեր, աց s. associé, correspondant.

Հաշուիմ, ուեցայ va. compter, calculer, supputer; estimer, regarder comme, penser, juger, croire; vn. passer pour, être réputé; յառասպելս —, tenir pour fables, traiter de fables.

Հաշումն s. consomption, dépérissement, langueur.

Հաշտ, ից a. réconcilié; propice, favorable, doux, bienveillant; — առնել, réconcilier; rendre propice, favorable, apaiser.

Հաշտարան, աց s. propitiatoire.

Հաշտարար, աց s. conciliateur, réconciliateur; a. conciliant, pacifique.

Հաշտարարութիւն s. conciliation, réconciliation.

Հաշտելի a. réconciliable.

Հաշտեմ, եցի. **Հաշտեցուցանեմ**, ուցի va. concilier, réconcilier, accommoder.

Հաշտեցուցիչ V. **Հաշտարար**.

Հաշտիմ, տեցայ vn. se réconcilier, se raccommoder, faire la paix.

Հաշտութիւն s. conciliation, réconciliation, accommodement, paix; ի— ածել, V. **Հաշտեմ**; — առնել, V. **Հաշտիմ**; V. **Կնքեմ**, **Ուխտ**.

Հաչեմ V. **Հաջեմ**; **Հեծեմ**.

Հաչիւն, **Հաչումն** V. **Հաջիւն**; **Հեծութիւն**.

Հապ, **Հապա** adv. ensuite, après, puis; interj. allons! va! allez! hâtez-vous! hé bien!

Հապճեպ s. hâte, promptitude, précipitation; adv. en hâte, à la hâte, promptement, sur-le-champ, rapidement; — տագնապաւ, précipitamment; — տալ, se hâter, se dépêcher, se presser; hâter, dépêcher, presser.

Հապճեպեմ, եցի vn. se hâter, se dépêcher, se presser.

Հաջեմ, եցի vn. aboyer; fig. aboyer, clabauder.

Հաջեցուցանեմ, ուցի va. faire aboyer.

Հաջիւն s. aboiement.

Հառաչ V. **Հառաչանք**.

Հառաչալիր adj. plein de soupirs.

Հառաչանք, նաց s. soupirs; հառաչանս արձակել, pousser des soupirs; հառաչանօք խորոց սրտէ ասէ, après de profonds soupirs, il dit; — հեղձամղձուկ զնա առնէին, ses soupirs étouffaient sa voix; հեղձամղձուկ զհառաչանսն առնել, étouffer ses soupirs.

Հառաչեմ, եցի vn. soupirer, pousser des soupirs; — խորոց սրտէ, pousser de profonds soupirs; — առ խաղաղութիւն, soupirer après la paix.

Հառաչիւն, Հառաչումն s. soupir.

Հաս, ից sm. maturité; ի— գալ, venir à —, mûrir; arrivée; impôt, droit; fonds; rente; don, offrande.

Հասակ, աց s. taille, stature; âge; անտիականն մատաղ տխեղծ —, premier, jeune âge; ծերացեալ —աւ, avancé en âge; ծերացեալ — ou — ծերութեան, âge avancé, vieillesse; բարձր —աւ, de grande taille, grand; երիտասարդ —աւ, jeune; կարճ —աւ, de petite taille, petit; աճումն —ի, croissance; ականքնաբոյս —ին, dès son premier âge; իտղայութեան —ի նորա, pendant son bas âge; ուղղորդ —, taille droite; — նորա բարւոք կերպարանի, sa taille se dessine bien; ի— եւ ի տիս հասանել, parvenir en âge; իմիտս եւ ի— լինել, être majeur; — անձնեայ, grande taille; զարգանալ —աւ, s'avancer en âge, ի հասակի, à l'âge de; ի ծաղկեալ հասակի, à la fleur de son âge; V. Տարիկ.

Հասակաբեր, Հասակազեղ a. d'une belle taille, grand.

Հասակալից a. âgé, adulte.

Հասակակից a de même âge.

Հասակաչափ a. adulte, majeur, pubère.

Հասակաւոր, աց. Հասակեայ adj. âgé.

Հասանելի adj. compréhensible.

Հասանեմ, հասի vn. arriver, parvenir; joindre, toucher, atteindre, attraper, surprendre; arriver, obtenir; convenir, falloir, échoir; mûrir, arriver à la maturité; comprendre; — իմերայ, comprendre, concevoir, pénétrer, saisir, découvrir; — վիրաց, aboutir; յեղակարծումօյեղակարծում պահու՝ յանակնկալս իմերայ —, surprendre; tomber comme une bombe; իպատիւ —, parvenir, être promu à une dignité; — իպաշտօն, obtenir, accrocher une place; հասանէր ինձ 23 ամ տիոցս, je venais d'atteindre ma vingt-troisième année; եթէ գամ մի մեռանել ինձ հասանիցէ, si je viens à mourir; եհաս նմա պատերազմել, il eut à combattre; եհաս յաշխարհին, il gagna le pays; գուցէ հասանիցէ քեզ անձրեւ, de peur que la pluie ne te surprenne.

Հասարակ a. commun, ordinaire, vulgaire, trivial; commun, public; égal, pareil, conforme; demi, moitié; adv. en commun, ensemble; — անուն, nom commun; միտք՝ կարծիք — աց, le sens commun; ծախիւք —աց, à frais communs; aux frais du public; —աց հաւանութեամբ, d'un commun accord; իրք —աց, les affaires publiques; — տեղիք, lieux communs; օգուտ —աց, l'intérêt commun ou public; — օր, midi; jour ordinaire; ց— օր, jusqu'à midi; ի— աւուրն ou զ— աւուրբ, à midi; — գիշեր, minuit; զ— գիշերաւ, à minuit; — բայ, verbe déponent; —աց կեանք, vie commune; հասարակաց վարել կեանս, vivre en commun; — տարի, année commune; Թշնամի —աց, l'ennemi commun; —աց էր առ նոսա, il était commun chez eux; —աց ունէին զինչս, ils mettaient leurs biens en commun.

Հասարակաբար V. Հասարակօրէն.

Հասարակախառն a. commun, général.

Հասարակախօսութիւն sm. introduction.

Հասարակած, ի, աւ s. moitié; équateur; զհասարակաւ գիշերոյ, au milieu de la nuit, à minuit.

Հասարակական a. commun, public, général; commun, ordinaire; s. communiste.

Հասարակականութիւն sm. communisme.

Հասարակակշիռ V. Զուգակշիռ.

Հասարակապատիւ V. Համապատիւ.

Հասարակապետական a. s. républicain.

Հասարակապետութիւն sm. république.

Հասարակասէր a. zélé pour l'intérêt public, attaché à la cause commune.

Հասարակաստեղծ a. commun à toutes les créatures; օտար ի— մարդկանէ, qui n'est point dans le commun des hommes.

Հասարակաց a. commun, public; V. Հասարակ.

Հասարակաւորութիւն sm. égalité; — աւուր, équinoxe.

Հասարակեմ, եցի va. partager, réduire de moitié, séparer en deux; partager, donner une part égale; égaler; accomplir; — զսէրն ընդ ամենեսին, partager son amour, son cœur entre tous; — իմ vn. être à moitié, être réduit de moitié; être à midi, être au milieu de sa course; partager, avoir ou prendre part à; être égal; s'accomplir; հասարակէ գիշերն, il est minuit.

Հասարակորդ, աց a. qui participe; associé, compagnon; égal; — ս մեզ արարեր զդոսա, vous les avez traités comme nous.

Հասարակութիւն s. commu-

nauté; le public; moitié; — Հայոց, la communauté arménienne; առաջի — ն, devant le public.

Հասարակօգուտ a. utile au public, d'utilité publique.

Հասարակօր, աւուր s. midi.

Հասարակօրեայ a. de midi; équinoxial.

Հասարակօրէն adv. communément, ordinairement, d'ordinaire.

Հասարակօրութիւն s. équinoxe.

Հասնեւառիկ s. pancrace.

Հասկ, ասց s. épi; ոսկեփայլ —ք, épis dorés; քաղել —, glaner; —ս արձակել, épier, monter en épis.

Հասկաբեր a. qui porte, produit des épis; — լինել, monter en épis.

Հասկաթուռ a. bien épié, grenu.

Հասկահաս a. dont les épis sont mûrs.

Հասկահասութիւն s. maturité d'épis.

Հասկաձեւ adj. en forme d'épis.

Հասկանամ, ացայ vn. comprendre.

Հասկացողութիւն V. Հասողութիւն.

Հասկացուցանեմ, ուցի va. faire comprendre.

Հասկաքաղ a. qui ramasse des épis, glaneur; s. glanage, glane, glanure; — առնել, ramasser des épis, glaner.

Հասողութիւն sm. compréhension, entendement, intelligence.

Հասոյթ, ութի s. rente.

Հասու լինիմ vn. arriver, atteindre; saisir, comprendre, concevoir, sentir; saisir, prendre, attraper.

Հասութատէր, տեառն sm. rentier.

Հասութիւն V. Հասողութիւն.

Հասումն s. l'action d'arriver, arrivée; V. Հասողութիւն.

Հասուն a. mûr; — հասակ՝ այր՝ խորհուրդ՝ միտք, âge, homme, projet, esprit mûr; — գործել, mûrir.

Հասունանամ, ացայ vn. mûrir, devenir mûr.

Հասունացուցանեմ, ուցի va. mûrir.

Հասունութիւն s. maturité.

Հասուցանեմ, ուցի va. faire arriver, faire parvenir; faire atteindre; cuire, faire cuire, apprêter; mûrir, rendre mûr; հասոյց ինձ անբաւ աշխատութիւն, il m'a coûté bien des travaux, il m'a donné bien de la peine, bien du mal.

Հաստ adj. stable, ferme, solide, fort; épais, gros; sm. stabilité, fermeté, solidité; կալ ի հաստի, rester ferme; ի հաստոչ պահել, tenir ferme; ի հաստոչ ունել, conserver.

Հաստաբազուկ a. qui a le bras fort, au bras vigoureux, robuste.

Հաստաբերտ adj. ferme, solide.

Հաստակաշի a. dont la peau est forte, épaisse.

Հաստակապ a. fortement lié.

Հաստակառոյց a. solidement bâti, solide.

Հաստահարուստ a. fort, robuste, vigoureux.

Հաստահեղոյս adj. cloué d'une manière solide.

Հաստահիմն a. qui a le fondement solide, ferme, stable; — առնել՝ ամրացուցանել, affermir, confirmer.

Հաստաձեղուն a. dont le plafond est solide.

Հաստաձիգ adj. qui tire ferme (l'arc); bien bandé.

Հաստաղեղն a. qui a l'arc solide.

Հաստամագիլ a. qui a les griffes fortes.

Հաստամետ a. fort, robuste.

Հաստայարկ a. qui a un toit solide.

Հաստանամ, ացայ vn. se fortifier, se consolider; * devenir gros ou épais, grossir.

Հաստանդամ V. Յաղթանդամ.

Հաստաշինած a. construit solidement, solide.

Հաստապինդ a. ferme, solide.

Հաստատ a. solide, ferme, stable; sûr, positif, certain; s. géom. solide; adv. fermement, solidement, d'une manière solide; fermement, sûrement, positivement.

Հաստատաբան a. dont la parole est sûre, véridique, exact.

Հաստատաբար V. Հաստատապէս.

Հաստատագոյն a. très-solide, très-ferme; adv. fermement, sûrement.

Հաստատագրական a. stéréographique.

Հաստատագրութիւն s. stéréographie.

Հաստատական a. ferme, solide, affirmatif; — առաջարկութիւն, proposition affirmative; — բան, affirmative.

Հաստատանամ, ացայ vn. s'affermir, se consolider.

Հաստատաչափ a. stéréométrique; s. géom. solide.

Հաստատաչափութիւն sm. stéréométrie.

Հաստատապէս V. Հաստատ adv.

Հաստատատիպ, տպի a. stéréotype; s. stéréotypie; stéréotypage; — դրոշմել, stéréotyper.

Հաստատատպել, եցի va. stéréotyper.

Հաստատատպութիւն s. stéréotypie; stéréotypage.

Հաստատել, եցի va. affermir, consolider, rendre solide, ferme, raffermir, appuyer, soutenir; affermir le courage, rassurer, encourager, fortifier; affirmer, confirmer, approuver, assurer, certifier, attester, garantir; établir, fixer, fonder, déterminer, contracter; réta-

blir, remettre; fonder, créer, faire; — գերեսս, se diriger vers, se mettre en route; — զառողջութիւն, rétablir la santé; հաստատեալ էր ի խորհրդեան, il était résolu, décidé dans le conseil; հաց հաստատելոց, pain pour les forts; — անդրէն, rétablir.

Հաստատիմ, տեցայ vn. s'affermir, se raffermir, devenir ferme, solide, se consolider; s'établir, se fixer; se confirmer, se certifier; s'appuyer, compter sur, se rassurer; se rétablir, se remettre, reprendre ses forces; հաստատեցաւ յառողջութեան, il s'est rétabli, sa santé s'est rétablie; հաստատեցաւ մանուկն, l'enfant grandit; հաստատեցան որդիք նորա, ses enfants sont devenus grands; հաստատեցաւ ոգի նորա, ses forces revinrent, il recouvra son esprit; V. Խնամ.

Հաստատողական a. affirmatif, confirmatif.

Հաստատութիւն s. fermeté, solidité, stabilité, affermissement, consistance, fixité; fermeté, constance; consolidation, force, raffermissement, rétablissement; soutien, base, support; affirmation, confirmation, assertion. aveu, autorisation, certitude, ratification; firmament; — մտաց, constance; — առնուլ, s'affirmer, se confirmer, se certifier; — ի V. Հաստատուն adv.; — ի եղեալ էր ի մտի, il s'était promis, il avait pris une ferme résolution.

Հաստատուն, տնոց a. ferme, solide, stable, fixe; certain, sûr, positif; — կալ, tenir bon, se tenir ferme, se soutenir; — կերակուր, aliment, nourriture solide; V. Հաստատ adv.

Հաստարան, աց s. appui, soutien, support; contrefort; — հրետի, affût.

Հաստարմատ a. qui a de solides racines; enraciné, bien établi, ferme, solide; — առնել՝ կանգնել, enraciner, rétablir, mettre en vigueur.

Հաստեայք, եայց s. pâte; pâté.

Հաստեմ, եցի va. créer, produire; affermir, consolider; — զոք ի բարիս, confirmer qn. dans le bien; — իմ vn. se créer, se produire; s'affermir, s'établir.

Հաստիչ s. créateur, producteur.

Հաստոյր adj. violent; — վէրք, profonde plaie; տալ — հարուած, donner le dernier coup, achever.

Հաստուած, ոց s. créature, chose créée; structure, construction.

Հաստումն s. création; raffermissement, fermeté, solidité; rétablissement; production.

Հաստուն, տնոց a. ferme, solide.

***Հացէ** V. Երեսպակի.

Հացնեմ V. Հասուցանեմ.

Հատ, ոց, ից s. coupe, coupure, section; fraction, fragment, morceau, pièce; grain; *un seul; հատս առնել ճանապարհաց, brigander.

Հատալից a. grenu.

Հատաքեկ s. gros bec.

Հատած, ից, ոց s. section, paragraphe; secteur; césure; — կոնոսի, section d'un cône.

Հատական V. Հատու.

Հատակարկատ a. rapetassé, rapiécé; composé.

Հատակոտոր s. morceau, coupure, rognure, fragment; — առնել՝ կոտորել, couper en morceaux, mutiler, tronquer.

Հատահարց, ից s. qui devine par le moyen des grains, sorcier.

Հատահարցութիւն s. divination par le moyen des grains.

Հատանեմ, հատի va. couper, tailler, trancher, abattre; fendre, diviser, séparer; retrancher, ôter, enlever, étancher, diminuer; châtrer; décider, trancher, déterminer par une décision; franchir; interrompre; — ճանապարհ, ouvrir ou frayer un chemin; s'acheminer, faire chemin, traverser, voyager; զօրս —, lever des soldats, des troupes; — զծով, traverser, fendre ou sillonner la mer; — ի ստենէ, sevrer; — զանձն ի փափկութիւն, se livrer à la mollesse; ի վատութիւն —, rendre lâche; — զգլուխ, trancher la tête; — զանդամս, couper, amputer; — ընդ մէջ, interrompre; կարճառօտ՝ ի համառօտս —, couper court, trancher, abréger; — անցանել, traverser, franchir, parcourir; — զծարաւ, étancher la soif, désaltérer; — զանձն յիմեքէ, s'abstenir, se priver de qch., s'en passer; փոս —, creuser un fossé; — զծից զմիմեանս, se couper; V. Դրամ, Գին, etc.

Հատանիմ, տայ vn. se couper; être coupé, tranché, séparé; s'épuiser, manquer, user; s'abstenir; éclater, briller, lancer des rayons; se livrer, se jeter, tomber; ի ծուլութիւն՝ ի չարութիւն —, se donner, s'abandonner à la paresse, à la méchanceté; ի զեղխութիւնս —, se plonger dans la débauche; ի ծաղր —, éclater de rire; յանմտութիւն —, n'avoir pas l'ombre du bon sens; յանգործութիւն —, fomenter l'oisiveté; — գունոյ, se décolorer, pâlir; ամենայն ուրեք ոսկւոյ եւ ականց նշոյլք հատանէին, tout y reluisait d'or et de pierreries; V. Ցոլ, Քուն, etc.

Հատանող s. coupeur; sécante; tranchant.

Հատավաճառ, աց s. changeur.

Հատեալ a. coupé; châtré.

Հատընտիր adj. recueilli, choisi; s. chrestomathie, recueil; — լինել, recueillir, choisir.

Հատիկ s. petit grain.

Հատիճ s. pepin.

Հատկլիմ, եցայ vn. perdre

haleine, en perdre haleine, n'en pouvoir plus, être suffoqué; ի հեծկլկանացն հատկլեալ, empêché par les sanglots.

* **Հատնիմ** V. **Սպառիմ.**

Հատոր, ոց sm. morceau, fragment, pièce, bloc, tronçon: tome, volume; երկրորդ —, tome deux, second volume; fig. — հոգւոյս, partie de moi-même, mon âme.

Հատու a. coupant, tranchant; fig. décisif, tranchant, péremptoire; s. filou.

Հատուած, ոց, ից s. coupe, taille; section, division; fragment, tranche, morceau, pièce; retranchement, séparation; segment; transmigration, colonie, émigration; article; — գնալ ուրեք, émigrer; գրել —, écrire un article.

Հատուածակողմեան a. prismatique.

Հատուածակողմն, ման sm. prisme.

Հատուածիմ, ծեցայ vn. se séparer, se détacher; déserter à l'ennemi; changer de séjour, émigrer, aller quelque part fonder une colonie, s'établir comme colon.

Հատուածոյ a. de plusieurs pièces, composé.

Հատուածութիւն s. désertion.

Հատուկճիր, **Հատուկտիր** a. qui met en morceaux, qui tranche; coupé.

Հատումն s. incision, coupe, taille, coupure; séparation; — անդամոց, amputation.

Հատուցանելի a. payable; solvable.

Հատուցանելիութիւն s. solvabilité.

Հատուցանեմ, ուցի vn. rendre, restituer; payer, acquitter, rembourser, débourser; compenser; couper, trancher; — զվնասն, dédommager, indemniser; — ի ստենէ, sevrer; առժամայն՝ կանխիկ —, payer comptant; — զհարկ բնութեան, payer le tribut à la nature; — սէր ընդ սիրոյ, rendre amour pour amour; չար — երախտեաց, rendre le mal pour le bien.

Հատուցանող, **Հատուցիչ** s. celui qui rend, qui restitue; payant, payeur; rémunérateur.

Հատուցումն s. restitution; payement, remboursement, déboursement; rétribution, rémunération, récompense; compensation, don, offrande; coupe; — վնասուց, dédommagement, indemnité, réparation; — փոխարինի, réparation, compensation, revanche; ի—, en payement; en revanche; — առնել, récompenser; réparer.

* **Հատցնեմ** V. **Սպառեմ.**

Հարազատ, աց a. légitime, authentique; naturel, véritable, vrai, sincère, intime; s. frère; proche parent.

Հարազատաբար adv. légitimement; en frère; sincèrement, intimement.

Հարազատանամ V. **Հարազատիմ.**

Հարազատապէս V. Հարազատաբար.

Հարազատիմ, տեցայ vn. devenir frère; s'allier, contracter une parenté; եղբայր հարազատեալ, frère germain.

Հարազատութիւն s. légitimité, authenticité; fraternité; parenté.

Հարած, ի, ոյ s. plaie, ulcère.

Հարամանի, նւոյ s. serpent; démon.

Հարաւ, ոյ, ով s. sud, autan, vent du midi; le sud, le midi; նարեւելեան —, sud-est; արեւմտեան —, sud-ouest; հողմ հարաւոյ, vent du midi; շնչէ —, le vent du midi souffle.

Հարաւակողմ, Հա՛րաւակողմ s. le midi, le sud, le côté du sud; a. du côté du sud.

Հարաւահողմ sm. autan, auster, sud, le vent du midi.

Հարաւայգ s. aurore australe ou boréale.

Հարաւային a. du sud, méridional, austral.

Հարաւունք s. champ, campagne; produits de la terre, récolte, semailles, semence, moisson.

Հարբեցութիւն V. Արբեցութիւն.

Հարբուխ, բխոյ s. rhume, catarrhe; ախտանալ զ—, s'enrhumer, gagner ou attraper un rhume; ախտացուցանել զ—, enrhumer; V. Խարբուխ.

Հարեւանցի, իՀարեւանցի a. qui touche légèrement, qui effleure, superficiel, léger, passager; adv. en touchant légèrement, superficiellement, légèrement, en passant, en courant, par manière d'acquit, négligemment, d'un air distrait; — անցանել ընդ, effleurer, toucher légèrement, glisser dessus, passer légèrement sur, traiter en passant.

Հպրեւանցիկ առնեմ va. passer, sauter, toucher légèrement ou en passant, passer sous silence.

Հպրեւր V. Հարիւր.

Հարէժ V. Խերեւէջ.

Հարթ,ից a. uni, aplani, plan, plat, ras, de niveau, bien égal; uniforme, pareil, égal; adv. d'une manière unie; uniformément, également, droitement; — հաւասար, de niveau, au niveau.

Հարթածաւալ a. également étendu, plan, plat; — ծով, mer unie.

Հարթայատակ a. plan, plat, à fleur de terre, de plain-pied; au niveau de la terre, nivelé; — առնել, abattre au niveau du sol, raser; niveler.

Հա՛րթաչափ, ի s. niveau.

Հարթաչափեմ, եցի va. niveler.

Հարթաչափութիւն s. nivellement.

Հարթեմ, եցի va. aplanir, planer, unir, égaliser, rendre égal; dégrossir, raboter, adoucir; niveler, mettre au niveau de ou de niveau avec, affleurer.

Հարթիչ s. planeur, niveleur.

Հարթյատակ V. **Հարթայատակ**.

Հարթնում, թեայ vn. sauter en arrière, tressaillir de peur de, prendre de l'ombrage, s'effaroucher, s'effrayer.

Հարթութիւն sm. aplanissement, égalité, niveau.

Հարթուցանեմ, ուցի va. faire tressaillir de peur, donner de l'ombrage, effaroucher, effrayer, écarter, éloigner.

Հարիչ a. celui qui frappe; s. plectre.

Հարիւր, ոց a. cent; հինգ առ —, cinq pour cent.

Հարիւրադուռն adj. à cent portes; — Թեբէ, Thèbes —.

Հարիւրամասն adj. centigrade; — ջերմաչափ, thermomètre —.

Հարիւրամեայ, մէից. Հարիւրամեան, մենից a. âgé de cent ans, centenaire; de cent ans, séculaire.

Հարիւրամեթր, ի s. centimètre.

Հարիւրապատիկ adj. centuple.

Հարիւրապատկեմ, եցի va. centupler.

Հարիւրապետ, աց s. centurion, centenier, capitaine.

Հարիւրապետութիւն s. grade de centurion, de capitaine.

Հարիւրաստիճան V. **Հարիւրամասն**.

Հարիւրաւոր, աց a. centaine; centuple; adv. à centaines; s. centurion.

Հարիւրբերանեան a. à cent bouches; — դիցուհի, la déesse —, la renommée.

Հարիւրդռնեայ V. **Հարիւրադուռն**.

Հարիւրեակ, եկի, կաց sm. centaine; centurie.

Հարիւրեմեան a. centenaire.

Մահ, ու ou հուան, հուց s. mort, trépas, décès; massacre, tuerie, carnage; peste; մահու չափ, à mort, mortellement; aux dépens de sa vie, de sa propre vie; մերձ ի— լինել, se mourir, être sur le point de mourir, être à l'agonie, à l'extrémité, à son terme, à l'article de la mort, s'en aller, voir la mort de près; մահու պարտ առնել, condamner à mort; երթալ ի—, aller à la mort; ի— մատնել, livrer à la mort, faire mourir; ածել մահունս, porter la mort; մահունք, les mortalités; ի մահու եւ ի կենաս, à la vie et à la mort; մահու վախճանիլ, mourir; մահու հասանել, rencontrer la mort; տալ ի—, faire mourir; ի— ընթանալ, courir à la mort; հիւանդանալ ի—, être malade à la mort; խնդրել — անձին, souhaiter, désirer la mort; մահու պատժանել, faire périr; ի դրունս մահու հասանել, être aux portes de la mort; երջանիկ՝ բռնական՝ յաւերժական՝ անհրաժեշտելի՝ քաղաքական՝ բնական՝ ցաւագին՝ եղերական՝ աղետալի՝ ողբալի՝ յանկարծական՝ փառաւոր՝ սուրբ՝ քաղցր՝ գեղեցիկ՝ ամօթալի՝ նախատական —, mort heureuse, violente, éternelle, assurée, civile, naturelle, douloureuse, tragique, funeste, déplorable, soudaine ou subite, glorieuse, sainte, douce, belle, honteuse, ignominieuse; արհաւիրք մահու, les frayeurs, les affres de la mort; բնական մահուամբ մեռանել, mourir de sa belle mort; դիմագրաւ լինել խիզախել ի—, affronter, braver la mort; երկնչել ի մահուանէ, avoir peur de la mort, craindre, redouter la mort; օր մահուան իւրոյ, le jour de sa mort; * այս հիւանդը՝ հիւանդութիւնը մահուան կդառնայ, ce malade, cette maladie tourne à la mort; վճիռ մահու, arrêt de mort.

Մահաբեր, աց ou ից a. qui porte, qui donne la mort, mortifère, mortel, meurtrier, délétère, funeste, fatal.

Մահագոյժ, Մահագուշակ a. qui annonce la mort, funeste, fatal, funèbre.

Մահադեղ, ոյ s. poison.

Մահադէմ a. pâle, défiguré.

Մահազէնկոյց V. Մահազդոյծ.

Մահազէն a. dont les armes donnent la mort.

Մահաթոյն a. dont le poison donne la mort.

Մահալոյծ a. qui détruit la mort.

Մահածին a. qui engendre la mort, mortel.

Մահակ, ագ sm. bâton, massue.

Մահակից լինիմ vn. mourir avec; — առնել, faire mourir avec.

Մահակոն s. acajou.

Մահակոնեայ a. d'acajou.

Մահակուլ լինիմ vn. être englouti, enlevé par la mort.

Մահահամբոյր a. mortel, funeste, fatal.

Մահահանգիստ քուն sm. repos des morts.

Մահահանգոյն a. semblable à la mort.

Մահահոտ a. qui sent la mort, mortel.

Մահահրաւէր a. qui appelle la mort, à la mort.

Մահանամ, ացայ vn. mourir, périr; se mortifier.

Մահաշշուկ V. Մահազդոյծ.

Մահաշունչ a. qui respire la mort, mortel.

Մահապարտ, ագ a. qui mérite la mort, condamné; — լինել, mériter la mort.

Մահապարտիմ, տեցայ vn. mériter la mort, être condamné à mort.

Մահապարտութիւն s. condamnation.

Մահաբեր a. qui cause la mort, mortel, meurtrier, délétère.

Մահատիպ a. semblable à la mort; — դէմք, visage pâle.

Մահատու, Մահաբար, ագ a. qui donne la mort, mortel.

Մահարձան, ագ s. monument, tombeau; tour, donjon.

Մահացան a. qui répand la mort.

Մահացեալ adj. mourant, mort; mortifié.

Մահացու, ագ a. mortel, qui donne la mort; mortel, qui est sujet à la mort; — պատերազմ, combat à mort; — հիւանդութիւն՝ վէրք, maladie, blessure mortelle; — մեղք՝ թշնամի, péché, ennemi mortel; sm. mortel; —ք, les mortels.

Մահացումն s. mortification.

Մահացուցանեմ, ուցի va. faire mourir, mettre à mort; mortifier.

Մահացուցիչ a. qui fait mourir, meurtrier; mortifiant.

Մահաքուն a. de sommeil de mort.

Մահիկ, հկագ sm. lunule, croissant, corne de la lune; collier; — եղջիւրք, les croissants, les cornes de la lune.

Մահիճք, ճճագ s. lit; երկաթի —, lit de fer; անկեալ դնիլ իմահիճս, s'aliter, garder le lit; իմահիճս մահու, au lit de mort, à l'agonie.

Մահկանացու V. Մահացու.

Մահկանացութիւն s. morta-

lité, condition de ce qui est sujet à la mort.

Մահճնակալ a. alité.

Մահմետական a. s. mahométan, musulman.

Մահմետականութիւն s. mahométisme, islamisme.

Մահուչափ a. mortel, extrême; adv. — ատել, haïr à la mort, mortellement.

Մահտարաժամ sm. peste, contagion.

Մաղ, ից, աց s. crible, tamis, bluteau, blutoir, sas; — մեղուաց, rayon de miel; cellule, alvéole; * մաղէ անցուցանել, passer au crible.

Մաղաքախտութիւն s. divination faite en frappant un tamis.

Մաղաղիմ, ղեցայ vn. se brûler.

Մաղաս, ոյ s. flegme, glaire, pituite, mucosité.

Մաղասալից V. Մաղասոտ.

Մաղասական a. pituitaire.

Մաղասաւոր, Մաղասոտ a. flegmatique, pituiteux, glaireux, muqueux.

Մաղատեսակ a. cellulaire, celluleux.

Մաղեմ, եցի va. tamiser, cribler, bluter, sasser.

Մաղզմայ, ից s. patène.

Մաղթանք, նաց s. prière, supplication, imploration; souhaits, vœux, félicitations.

Մաղթեմ, եցի vn. prier, supplier, implorer, demander en priant; souhaiter, former des vœux, féliciter; բարիս — ումեք, souhaiter du bien à qn., faire des vœux pour sa prospérité.

Մաղթողական a. fait pour supplier, en forme de supplication; de souhait, de félicitation.

Մաղկատեմ, եցի va. mordre; piquer.

Մաղձ, ի, ոյ s. bile, fiel; fig. bile, fiel, colère.

Մաղձաղեղ s. émétique.

Մաղձալից a. bilieux.

Մաղձախտ s. choléra.

Մաղձախտական a. cholérique.

Մաղձական a. biliaire.

Մաղձայոյզ, յուզի a. dont la bile est agitée; cholérique, atteint de choléra.

Մաղձատար աման sm. la vésicule du fiel.

Մաղձաւոր a. bilieux.

Մաղձընկալ V. Մաղձատար.

Մաղձոտ a. bilieux.

Մաղունչք s. criblures.

Մաճ, ոյ, ով s. le manche de la charrue, mancheron.

Մաճակալ a. celui qui tient les mancherons, laboureur.

Մաճառակ s. pain de fromage.

Մամաց, ի s. chyle.

Մամլակ, ի s. étau.

Մամխի, խւոյ, խեաց s. prunellier.

Մամոնայ, ից s. Mammon, dieu de la richesse; fig. richesse.

Մամուլ, մլոց sm. presse; pressoir; — կերպասուց, calandre.

*Մամուռ V. Սարդ; —ի բոյն V. Սարդի ոստայն.

Մամուռ, մռոց s. mousse.

Մամռապատ a. couvert de mousse, moussu.

Մամռավարդ, ի s. rose mousseuse.

Մամռաւոր, Մամռոտ adj. moussu; — վարդ, rose mousseuse.

Մայել, եցի va. bêler; ոչխար մայէ, la brebis bêle.

Մայիւն s. bêlement.

Մայիս, ի s. mai; յամսեանն մայիսի, au mois de mai.

Մայռ, ի s. veine.

Մայր, մօր, մարբ, մարց s. mère, maman; mère, cause; impr. matrice; ի— դարձուցանել, éteindre (la chandelle, la lampe, la bougie); Արեւս արեւգակն իմայրն, le soleil s'est couché; — եկեղեցի՝ եկեղեցեաց, cathédrale, basilique; — քաղաքաց, capitale, métropole; — լեզու, langue mère; մայրն ամենեցուն, notre mère commune, la terre; — վանից, abbesse, supérieure; — ամենայն ախտից, mère, source de tous les vices; ազնիւ՝ բարեգութ ou գորովագութ՝ անպիտան՝ չար —, bonne, tendre, mauvaise, méchante mère; կորուսանել զ— իւր, perdre sa mère; մեծ —, grand'mère.

Մայր, ից, իւք s. cèdre.

Մայրաբար adv. maternellement, comme une mère.

Մայրագիր s. mère adoptive.

Մայրագորով, Մայրագութ a. plein de tendresse maternelle, tendre.

Մայրախողխող a. qui égorge sa mère; qui est égorgé par sa mère.

Մայրական a. maternel,

Մայրակեր a. qui mange sa mère.

Մայրակերտ a. qui est fait de cèdre.

Մայրայարկ a. dont le toit est en cèdre.

Մայրանալ, ացայ vn. devenir mère.

Մայրանման a. semblable à une mère.

Մայրապետ V. Մայրպետ.

Մայրասէր a. qui aime sa mère.

Մայրասպան a. qui tue sa mère, parricide.

Մայրասպանութիւն sm. le crime de tuer sa mère.

Մայրատախտակ a. planche de cèdre.

Մայրատանջ a. qui tourmente sa mère.

Մայրափայտեայ a. de bois de cèdre.

Մայրաքաղաք, աց s. métropole, capitale.

Մայրաքաղաքացի, ցւոյ sm. habitant de la capitale; métropolitain.

Մայրենի, նւոյ, նեաց a. maternel, de mère; maternel, du côté de la mère.

Մայրեւոր, աց s. bûcheron.

Մայրեւորութիւն s. état de bûcheron.

Մայրի, րւոյ, իեաց s. forêt; bois, bocage; repaire, tanière.

Մայրիկ sm. petite mère, maman.

Մայրութիւն s. maternité.

Մայրապետ, աց s. supérieure, abbesse.

Մայրփայտեայ a. de bois de cèdre.

Մայրօրէն V. Մայրաբար.

Մայրօրինակ V. Մայրանըմամն.

Ման, ի s. tour; manne; — առնուլ՝ գալ, faire un tour, tourner.

Մանած s. filure.

Մանանայ, ից s. manne.

Մանանեխ, Մանանիխ, նխոյ s. sénevé; moutarde; ամոթ մանանեխոյ, moutardier; հատ մանանխոյ, grain de sénevé, sénevé.

Մանարան, աց s. filature.

Մանաւանդ adv. surtout, principalement, le plus, plutôt; — զի, surtout, mais surtout, d'autant plus.

Մանգ s. bot. mangue; V. Մանկ.

Մանգաղ, աց s. faux, faucille.

Մանգաղակ, աց s. faucillon, fauchon, fauchette.

Մանգանէզ s. manganèse.

Մանգենի, նւոյ s. manguier.

Մանգղիոն, աց s. machine de guerre.

Մանեակ, եկաց s. collier; — Երեւակի, anneau de Saturne

Մանեկաձեւ a. en forme de collier, annulaire; — կախեալ, pendu en feston.

Մանեկաւոր a. qui porte un collier; annelé; armillaire.

Մանեմ, եցի va. filer la laine; tordre; compliquer; — իմ vn. se filer; se tordre; se compliquer.

Մանեւար, Մանեւոր, աց s. lange, bande, bandelette.

Մանիշակ, աց s. violette.

Մանիշակագոյն a. violet, violacé, violâtre; s. violet, couleur de violette.

Մանիշակաւէտ a. semé de violettes.

Մանիչ s. fileur.

Մանկ, ի, աւ s. fraude, ruse.

Մանկաբար adv. puérilement, comme un enfant.

Մանկաբարձ, աց s. accoucheur; accoucheuse, sage-femme.

Մանկաբարոյ, ից a. enfant de caractère, puéril.

Մանկաբեր, աց adj. qui accouche, qui enfante, accouchée; — լինել, accoucher, enfanter.

Մանկաբերութիւն V. Մանկածնութիւն.

Մանկագոյն a. le plus jeune.

Մանկագործեմ, եցի va. procréer des enfants.

Մանկագործութիւն s. procréation des enfants.

Մանկածնութիւն s. enfantement, accouchement, couches.

Մանկածու, աց s. pédagogue.

Մանկածութիւն sm. pédagogie.

Մանկակալ, աց s. nourrice; bonne; précepteur.

Մանկական, աց a. enfantin, puéril, d'enfant.

Մանկակեր, աց a. qui mange des enfants.

Մանկակոտոր a. qui massacre, qui tue les enfants.

Մանկակրթութիւն V. Մանկավարժութիւն.

Մանկահասակ a. jeune; — աղջիկ, jeune fille.

Մանկամայր, մօր s. mère d'enfant.

Մանկամարդ, աց s. jeune femme.

Մանկամարզ, ից adj. qui forme le corps des enfants par les exercices gymnastiques; s. professeur de gymnastique.

Մանկամարզարան, աց s. gymnase.

Մանկամարզութիւն s. gymnastique.

Մանկամոլ, ից a. qui est fou des enfants, pédéraste.

Մանկամոլութիւն s. pédérastie.

Մանկամիտ a. qui a l'esprit puéril.

Մանկանամ, ացայ va. devenir enfant, redevenir jeune, rajeunir.

Մանկանոց, աց sm. salle d'asile.

Մանկասէր a. qui aime les enfants.

Մանկասիրութիւն s. amour des enfants.

Մանկասնութիւն s. nourriture, soin ou éducation des enfants.

Մանկասպան, աց s. meurtrier d'enfants, infanticide.

Մանկասպանութիւն s. meurtre d'enfants, infanticide.

Մանկավարժ, ից s. pédagogue, précepteur, instituteur, gouverneur.

Մանկավարժական a. pédagogique.

Մանկավարժեմ, եցի va. instruire les enfants, donner de l'éducation aux enfants.

Մանկավարժութիւն s. pédagogie, instruction, éducation.

Մանկատռփի s. pédéraste.

Մանկատռփութիւն s. pédérastie.

Մանկարարութիւն V. Մանկածնութիւն.

Մանկացուցանեմ, ուցի va. rendre comme un enfant, rajeunir.

Մանկերամ, ի sm. troupe, bande d'enfants.

Մանկիկ sm. petit enfant, bambin, poupon.

Մանկլաւիկ s. page (d'un roi).

Մանկութիւն s. enfance; bas âge, jeunesse; անդստին իմանկութենէդ, depuis votre enfance; առոյգ ou քաջառոյգ գեղածիծաղ մատաղ —, vive, enjouée, tendre jeunesse; գեղածաղիկ —, cette fleur si tendre de la jeunesse.

Մանկուկ V. Մանկիկ.

Մանկտեակ s. petits enfants.

Մանկտի, կտւոյ s. les en-

fants, les jeunes gens; les serviteurs; մանրիկ —, de petits enfants; հայ —, la jeunesse arménienne.

Մաննայ, ից sm. offrande, don.

Մանուած, ոց sm. filage; filure; fig. détour, complication, enlacement; détour, sinuosité; — բանից, détours, ambages, circuit de paroles.

Մանուածապատ a. sinueux, tortueux; — շրջան, zigzag.

Մանուածոյ, ից adj. filé; tordu; tortueux, sinueux; plein de détours, compliqué.

Մանուկ, նկան, նկունք, նկանց s. enfant, petit enfant; — տղայ, enfant, jeune enfant; — եմ ես, je suis jeune; ուխտի մանկունք, le clergé; մանկունք առագաստի, les amis de l'époux, les paranymphes; մանկունք, mes enfants; — կնամարդի, jeune efféminé; իշխանական —, le jeune prince; — դու, jeune homme; — նաւի, mousse; — արքայի, page; — տիովք վախճանել, mourir très-jeune.

* Մանտրտիկ V. Մանրիկ.

Մանուշակ, etc. V. Մանիշակ, etc.

Մանր, նու, նունք, նունց a. menu, petit, mince, délié, ténu; fin, subtil; minutieux, détaillé; adv. en parties menues, en petits morceaux, finement; minutieusement, bien; en détail; — պատմել՝ ասել, raconter, dire en détail; մանր ou մանր հատանել, couper par petits morceaux, découper; détailler; — ժպտել, sourire; ոնով — հայել, regarder avec attention; — միտ դնել, considérer, examiner minutieusement; — իքնին արկանել, examiner en détail, à fond.

Մանրագոր, աց s. mandragore.

Մանրադէտ s. microscope.

Մանրադիտական a. microscopique.

Մանրաթել, ից s. fibrine.

Մանրախիճ s. petite pierre, caillou.

Մանրախոյզ a. qui recherche minutieusement, minutieux, vétilleux, curieux; — լինել, rechercher minutieusement, raffiner sur, être curieux; մանրախուզիւ քննել, examiner minutieusement, éplucher, regarder de près; մանրախուզիւ հարցանել, interroger avec curiosité.

Մանրախոտք, ոց s. menues herbes, herbette, gazon.

Մանրակարկատ a. rapiécelé, fig. absurde, futile, artificiel.

Մանրակծծի a. chiche, coriace, avare, sordide, ladre.

Մանրակտիտ պատմեմ va. détailler, raconter en détail.

Մանրակրկիտ a. qui recherche minutieusement, minutieux, pointilleux, vétilleux, éplucheur.

Մանրահետեմ, եցի va. rechercher avec un soin minutieux.

Մանրաճճի s. vermisseau, animalcule.

Մանրամաղ a. tamisé très-fin, menu; — փոշի, poussière très-fine, atome.

Մանրամանր a. très-menu, très-petit.

Մանրամասն, սանց s. la menue, la petite partie d'une chose, détail; a. détaillé, minutieux; իմանրամասունս պարապել, s'appliquer au détail; միտք ցնդեալ իմանրամասունս, esprit épuisé dans le détail; հանճար ամփոփեալ իմանրամասունս, génie borné au détail.

Մանրամասնաբար V. Մանր adv.

Մանրանկար, ու s. miniature.

Մանրաչափ s. micromètre.

Մանրապտուղ a. dont les fruits sont petits.

Մանրապատում a. raconté en détail; — առնել, raconter ou exposer en détail, détailler, circonstancier, entrer dans quelque détail, dans des détails.

Մանրավաճառ, աց s. détailleur.

Մանրավէպ V. Արտավէպ.

Մանրատունկ տունկ s. petite plante.

Մանրացոյց, ուցի s. loupe.

Մանրացօղ s. rosée.

Մանրաքնին a. examiné minutieusement; — առնել, examiner minutieusement, à fond.

Մանրելի a. triturable.

Մանրեմ, եցի va. réduire en menus morceaux, triturer, broyer, briser, concasser, casser, égruger.

Մանրերամ a. dont le troupeau est composé des petits; — ձկունք, menuaille, quantité de petits poissons.

Մանրերգ, ոց s. madrigal.

Մանրերկրորդ, աց s. une seconde.

Մանրիկ, նրկան a. très-petit, très-menu, mignon.

* Մանրկեկ V. Մանրիկ.

Մանրոստ a. qui a de petites branches.

Մանրուած, ոց s. menuaille, cassure, morceaux.

Մանրութիւն s. petitesse, ténuité.

Մանրումն s. action de réduire en petits morceaux, trituration.

* Մանրուք V. Մանրուած; petite monnaie; — ունի՞ք, avez-vous de la monnaie.

Մաշ a. usé, râpé, vieux; s. petit pois.

Մաշական a. qui s'use.

Մաշարբայ, Մաշարբական ou Մաշարբայական ախտ s. consomption, phthisie.

Մաշեալ V. Մաշ.

Մաշեմ, եցի va. user, détériorer; consumer, consommer, épuiser, amaigrir; — իմ vn. s'user, se détériorer; se consumer, maigrir, dépérir; մաշեալ հանդերձ, habit usé, râpé.

* Մաշեցնեմ V. Մաշեմ.

Մաշիչ a. qui use, corrosif.

Մաշկ, կոյ, աց s. épiderme, membrane; cuir, peau; adj. usé, porté.

Մաշկազգեցիկ a. vêtu de cuir, revêtu de peau.

Մաշկաթեւ a. hyménoptère.

Մաշկաճամփորդ V. Մաշկազգեցիկ.

Մաշկանափորտ a. dont le vêtement est de peau, de cuir.

Մաշկեակ, եկաց s. pelisse, fourrure; manteau.

Մաշկեայ, կէից a. de cuir, de peau; membraneux.

Մաշկեկագործ, աց s. pelletier, fabricant de fourrures.

Մաշկեկագործութիւն s. pelleterie.

Մաշկեղէն, Մաշկէ V. Մաշկեայ; գօտի —, ceinture de cuir.

Մաշկեկավաճառ, աց sm. pelletier, marchand de fourrures.

Մաշկեկավաճառութիւն s. pelleterie.

Մաշումն, ոյ. Մաշումն s. usure, détérioration; corrosion; dépérissement.

Մաշուք s. partie usée.

Մաշտիմ, տեցայ vn. perdre ses cheveux, être pelé.

Մաշտոց, ի s. rituel, cérémonial.

Մառ s. brouillard; իմաստ դառնալ՝ մտանել, se coucher (le soleil).

Մառախլամած, Մառախլապատ a. couvert de brouillard, embrumé.

Մառախլիմ, լեցայ vn. se couvrir de brouillard.

Մառախուղ, խղոց ou խլոց s. brouillard.

Մառան, աց s. office, cellier, garde-manger; cave.

Մառն V. Մառ.

Մաս s. pain bénit.

Մասն, սին, սանց s. partie; morceau; part, portion; ration; մասամբ, ըստ մասին ou ըստ մասանց, իմասնէ adv. en partie, partiellement; à demi; մեծաւ մասամբ, ըստ մեծի մասին, բազում մասամբ, ըստ առաւելագոյն մասին, en grande partie, la plupart, pour la plupart; իմասին, pour, au lieu de; յայսմ մասին, en cela; — հաւատոյ, article de foi; ըստ կարեւոր մասին, au fond; ի չարի մասին, en mauvaise part; — բարի, la meilleure part; նմա եղ —, fut son partage; ըստ քաղաքականութեան մասին, quant à la politique.

Մասնական a. partiel; gram. partitif.

Մասնակից a. qui a part à, participant; — լինել, prendre part à, participer, partager.

Մասնակցութիւն s. participation, part.

Մասնատուփ, տփոյ s. ciboire.

Մասնատփիկ s. custode.

Մասնաւոր, աց a. particulier, spécial; —ք, les particuliers.

Մասնաւորաբար, Մասնաւո-

բապէս adv. particulièrement, spécialement, en particulier.

Մասնաւորեմ, եցի va. faire part, communiquer; distribuer, partager, donner; —իմ vn. prendre ou avoir part, participer, partager.

Մասնաւորութիւն s. particularité, spécialité.

Մասնիկ, նկան s. parcelle; particule, molécule.

Մասնիմ V. Մասնաւորիմ.

Մասնկական a. moléculaire.

Մասնմուտ առնեմ va. laisser s'introduire, laisser qn. prendre part à.

*Մատ V. Մատն; — խածնել, s'étonner; մատուըներն լզել, se lécher les doigts d'une chose; բան մի մատին ծայրին պէս գիտել, savoir une chose sur le bout du doigt; մատով ցուցունել, montrer du doigt; մատուընենրն շարժել, remuer les doigts; մատով համրել, compter par ses doigts ou sur ses doigts; մատին ծայրովը դպչիլ, toucher du bout du doigt; մատը վրան դնել, mettre le doigt dessus.

Մատակ, ազ a. femelle (des bêtes); —շուն՝ առիւծ, chienne, lionne.

Մատակախազ a. passionné pour les femelles; — ձի, cheval entier, étalon, roussin.

Մատակախազութիւն s. passion pour les femelles.

Մատակարար, աց s. administrateur; économe; distributeur, dispensateur.

Մատակարարական a. administratif.

Մատակարարեմ, եցի va. administrer, gérer; administrer, distribuer, dispenser, fournir; — զխորհուրդս, administrer les sacrements.

Մատակարարութիւն s. administration, gestion; économie; économat; distribution, dispensation.

Մատակպան, աց s. éleveur de chevaux.

Մատաղ, ոյ a. jeune, tendre, nouveau, nouvel; s. offrande en l'honneur des morts; — մանկութիւն, tendre jeunesse; ի— տիս, en bas âge, dans un âge si tendre; ի— հասակի, dans une extrême jeunesse.

Մատաղածին s. nouveau-né; accouchée.

Մատաղական a. jeune.

Մատաղաձի, ոյ s. poulain, bidet.

Մատաղամայր, մօր s. mère nouvellement accouchée.

Մատաղանամ, ացայ vn. rajeunir, redevenir jeune, reverdir.

Մատաղատունկ, տնկոց s. plant, jeune plante, plançon, marcotte, rejeton, bouture; fig. néophyte, prosélyte; adj. jeune, tendre; Թուփ —, jeune arbrisseau; — ծաղիկ, tendre fleur.

Մատաղեմ, եցի. Մատաղեցուցանեմ, ուցի va. rajeunir, rendre jeune.

Մատաղերամ a. jeune; —

մանկտի, petits enfants; — գառինք, tendres agneaux.

Մատաղորթ a. qui a nouvellement fait un veau; — կով, vache fraîche vêlée.

Մատաղութիւն s. jeunesse; rajeunissement.

Մատաղօրեայ adj. jeune, tendre.

Մատանակ V. Մատնեակ.

Մատանեմ, եցի va. cacheter, sceller.

Մատանեմատն, տին s. doigt annulaire.

Մատանի, նւոյ, նեաց sm. bague, anneau; cachet, sceau; գեղեցիկ —, belle bague; հարսանեկան —, alliance; ոսկի՝ արծաթի՝ ադամանդեայ —, bague d'or, d'argent, garnie de diamants; — կրել, porter une bague.

Մատեան, տենից s. livre; écrit, papier, registre; աստուածային՝ աստուածաշունչ —ք, l'Écriture sainte; — գունդ, la plus brave troupe des Perses; ի մատենի հարկանել՝ տալ, écrire, mettre en écrit, enregistrer; մատենից դարան V. Մատենադարան.

Մատենագէտ a. homme de lettres, savant, érudit.

Մատենագիր, գրաց s. bibliographe, auteur, écrivain; livre, écriture, écrit, manuscrit, registre; adj. bibliographique, historique; ընտիր —, auteur classique; յոռի —, méchant auteur, griffonneur de papier, écrivassier.

Մատենագրական a. bibliographique.

Մատենագրեմ, եցի va. écrire, faire ou composer un livre; enregistrer.

Մատենագրութիւն s. bibliographie; livre, ouvrage; littérature.

Մատենադարան, աց. Մատենակալք, լաց sm. bibliothèque.

Մատենամոլ a. bibliomane.

Մատենամոլութիւն s. bibliomanie.

Մատենայած a. qui s'occupe des livres, versé dans les livres.

Մատենապատում a. raconté dans le livre; adv. en racontant dans le livre.

Մատենապետ, աց s. bibliothécaire.

Մատենասէր s. bibliophile.

Մատենասիրութիւն s. bibliophilie.

Մատենաւոր a. historique.

Մատենիկ, նկան s. opuscule; — գունդ, V. Մատեան գունդ.

Մատզական a. glutineux, gluant, visqueux.

Մատզականութիւն s. viscosité.

Մատզիմ, զեցայ vn. se coller, s'attacher.

Մատիտակալ, աց s. porte-crayon.

Մատիտեղ s. bot. renouée, traînasse.

Մատիտն s. crayon.

* Մատղաշ V. Մատաղ a.

Մատն, տին, տանց s. doigt;

mus. air; doigt (mesure); մատունք դաշնակի, clavier, les touches d'un piano; մատունք սանդղոց՝ որթոյ, les marches ou les degrés de l'escalier, les branches de la vigne; — առնել, montrer qn. au doigt, dénoncer, diffamer; — լինել, trahir; être trahi; — լինել անձին, se trahir; — եւ տուր լինել, trahir, livrer; ի մատանց ոտիցն գնալ, marcher sur la pointe des pieds; — Աստուծոյ, le doigt de Dieu; — անձին իւրոյ գործել, se tuer, se donner la mort; V. *Մատ.

Մատնածաղիկ s. digitale.

Մատնամուխ a. qui enfonce son doigt; adv. en enfonçant le doigt.

Մատնանիշ V. Մատնացոյց.

Մատնանշան ծաղկեցուցանել va. écrire, composer.

Մատնաշուրթն s. panaris, mal blanc.

Մատնաչափ, ի s. un doigt (mesure).

Մատնացոյց a. qui montre, qui indique du doigt; — առնել՝ լինել, montrer du doigt, au doigt; trahir.

Մատնեակ s. ի— արկանել, s'emparer, saisir, soumettre, subjuguer.

Մատնեմ, եցի va. trahir, dénoncer; livrer, abandonner; յատեան —, traduire devant le tribunal; ի մահ —, livrer à la mort; ի պարտութիւն —, vaincre; — ի ձեռս ուրուք, livrer aux mains, à la merci de qn.; — ի վտանգս, exposer aux périls; յաւար —, livrer, donner, au pillage; — զանձն յանարգութիւն, s'avilir; — ի կամս փառամոլ հածոյից իւրոց, immoler à son ambition; — իմ vn. se trahir, être trahi, dénoncé; se livrer, être livré, être en proie à, devenir la proie de; — ի նախանձ սրտմտութեան ուրուք, être immolé, sacrifié aux jalousies de qn.

Մատնէք s. cannelure.

* Մատնի V. Մատանի.

Մատնիչ s. traître.

Մատնոց, աց s. dé à coudre.

Մատնութիւն s. trahison; — ի ձեռս ախտիցն ou յախտս, l'abandon à ses passions.

Մատնստու s. traître; — լինել, trahir.

Մատնցոյց V. Մատնացոյց.

Մատոյց, տուցի s. accès, approche; montée, saillie.

Մատուռն, տրան, տրունք, տրանց s. chapelle.

Մատուտակ, ի s. bot. réglisse; սուտ —, astragale.

Մատուցական adj. présentable.

Մատուցանելի a. celui qui présente, qui offre; présentable.

Մատուցանեմ, ուցի va. approcher; présenter, offrir; զոհ —, offrir un sacrifice; — զոք յառաջ, pousser, avancer qn., le mettre sur les rangs; ի մէջ —, rapporter.

Մատուցարան s. autel, lieu d'offrande.

Մատուցիչ, Մատուցող sm. celui qui présente, qui offre.

Մատուցումն s. offre, oblation, présentation, célébration.

Մատչիմ, ատեայ, մատուցեալ vn. s'approcher, aborder, s'aborder, accoster, s'avancer vers, se présenter, s'offrir; être présenté, offert, célébré; յառաջ —, s'avancer vers, remonter; հուպ —, s'approcher, toucher; ի վեր —, monter plus haut, remonter; ի գործ —, être employé; մատուցեալ ասէ, il s'approcha et lui dit.

Մատռուակ, աց s. échanson.

Մատռուակեմ, եցի va. être échanson, remplir les coupes, verser du vin, verser à boire; administrer, servir, distribuer.

Մատռուակութիւն s. action de verser du vin, emploi d'échanson.

Մատրանապետ, աց s. chapelain.

Մատրանապետութիւն sm. chapellenie.

Մար, ու s. métrète, muid; seigneur; — ձիթոյ, baril d'huile.

Մարագ, ի s. fenil.

Մարախ, ոց s. sauterelle.

Մարաջախտ, ի s. maréchal.

Մարգ, ի, աց. Մարգագետին, տնոյ s. pré, prairie.

Մարգարէ, ից s. prophète; կին —, prophétesse.

Մարգարէաբար adv. prophétiquement, comme un prophète.

Մարգարէագէտ a. qui connaît bien les prophètes.

Մարգարէագիր a. écrit par les prophètes.

Մարգարէազրաւ a. qui tue les prophètes.

Մարգարէածանօթ V. Մարգարէագէտ.

Մարգարէախօսն, Մարգարէական, Մարգարէակիր a. prophétique; — ոգւով, par un esprit prophétique.

Մարգարէախողխող adj. qui massacre les prophètes.

Մարգարէահրաշ a. prophétique.

Մարգարէաճառ a. annoncé par les prophètes, par un prophète, prophétique.

Մարգարէանամ, ացայ vn. prophétiser.

Մարգարէանոց, աց s. temple des prophètes.

Մարգարէաշնորհ a. qui a le don de la prophétie.

Մարգարէապետ, աց s. chef des prophètes.

Մարգարէասպան a. qui tue les prophètes, meurtrier d'un prophète.

Մարգարէատառ պատգամք s. l'Écriture, les prophètes.

Մարգարէաբան V. Մարգարէանոց.

Մարգարէաքարոզ a. prêché par les prophètes.

Մարգարէութիւն sm. prophétie.

Մարգարէուհի sf. prophétesse.

Մարգարիտ, րտոյ ou րտի,

տաց s. perle; bot. marguerite, pâquerette.

Մարգարտազեղ adj. beau comme une perle.

Մարգարտազարդ a. orné de perles.

Մարգարտածաղիկ s. marguerite.

Մարգարտաշիւս, Մարգարտայեռ, Մարգարտաշար adj. enfilé de perles.

Մարգարտատեսիլ a. semblable à une perle.

Մարգարտափայլ a. brillant comme une perle.

Մարգարտեայ a. de perle.

Մարգաց s. ancien mois des Arméniens.

Մարգիզ, աց s. marquis; marquise (ombrelle à manche brisé).

Մարգիզութիւն s.marquisat.

Մարգիզուհի sf. marquise.

Մարգճախին, խնի. Մարգճակ, աց s. prairie marécageuse.

Մարգրիտ V. Մարգարիտ.

Մարդ, ոց s. homme; կին —, femme; *— լինել ցուցուր, montrez-vous homme; Թողուլ զհին մարդն, dépouiller le vieil homme; *ուզած մարդս է, voilà mon homme; Որդի մարդոյ, le Fils de l'homme; յարդէ —, homme de paille; գեղեցիկ —, bel homme; բարի —, homme de bien; *այս բանս ընելու մարդը չէ, il n'est pas homme à faire cette chose.

Մարդաբանութիւն sm. anthropologie.

Մարդաբար V. Մարդկաբար.

Մարդաբնակ, աց a. habité par des hommes.

Մարդագերի s. captif, esclave, prisonnier.

Մարդագին a. qui achète les hommes; s. achat d'hommes, d'esclaves.

Մարդագլուխ a. qui a une tête d'homme.

Մարդագող, ոց sm. voleur d'hommes.

Մարդադաւ, աց a. assassin, meurtrier.

Մարդադաւան adj. qui confesse Jésus-Christ comme homme seulement, qui nie la divinité de Jésus-Christ, nestorien.

Մարդադաւութիւն s. assassinat.

Մարդադէմ a. qui a visage humain.

Մարդազեն լինիմ vn. sacrifier, immoler des victimes humaines.

Մարդազենք s. sacrifice de victimes humaines, victime humaine.

Մարդազոհ V. Մարդազեն.

Մարդազոհութիւն V. Մարդազենք.

Մարդաթափ a.inhabité, dépeuplé, désert.

Մարդաթիւ s. nombre de personnes; ըստ մարդաթուոյ, par personne, par tête.

Մարդալից a. plein d'hommes.

Մարդախանձ a. qui dévore

les hommes, friand ou avide de chair humaine.

Մարդախառն adj. mêlé de nature humaine.

Մարդախիտ a. très-peuplé, rempli d'hommes.

Մարդախնդիր a. qui cherche, qui est à la recherche des hommes.

Մարդախողխող, Մարդախոշոշ a. qui égorge les hommes, homicide, meurtrier.

Մարդածախ a. qui consume, dévore les hommes.

Մարդածին a. qui enfante un homme.

Մարդակ, աց s. lambris, moise.

Մարդակեր, աց a. anthropophage; — լինել, manger la chair humaine.

Մարդակերպ, ից adj. qui a forme humaine.

Մարդակոյտ բազմութիւն s. multitude d'hommes, foule de gens.

Մարդակոտոր a. qui massacre les hommes; — առնել, massacrer, tuer les hommes.

Մարդահաճ, Մարդահաճոյ, ից a. qui cherche à plaire aux hommes, insinuant, flatteur, adulateur.

Մարդահաճեմ, եցի vn. chercher à plaire aux hommes, flatter, aduler.

Մարդահաճութիւն s. désir de plaire aux hommes, flatterie, adulation.

Մարդահասակ, աց s. la taille humaine.

Մարդահարկ, աց s. contribution, capitation.

Մարդահոյլ հօտ V. Մարդակոյտ բազմութիւն.

Մարդաձայն, ի sm. voix humaine.

Մարդաձեւ V. Մարդակերպ.

Մարդամահ, ու s. peste.

Մարդանամ, ացայ vn. devenir homme, se faire homme,

Մարդաշատ adj. rempli d'hommes, très-peuplé.

Մարդաշատութիւն s. grande multitude d'hommes, population considérable.

Մարդաշէն a. peuplé, rempli d'habitants, habité.

Մարդաչափ s. la grandeur du corps humain.

Մարդապայծ քաղ s. loup-garou, chimère.

Մարդապայք s. les satyres.

Մարդապաշտ, ից s. anthropolatre, qui rend un culte aux hommes.

Մարդապաշտութիւն s. anthropolatrie, adoration des hommes.

Մարդապատկեր a. qui a la forme humaine; sm. statue, image humaine.

Մարդապէս V. Մարդկօրէն.

Մարդապուր լինել՝ փախչել, se sauver, à peine pouvoir s'échapper, l'échapper belle; — փախեան, s'enfuirent, ne songeant qu'à sauver leur vie.

Մարդառու a. qui prend, qui mord l'homme.

Մարդասանկ, ի s. litharge d'argent.

Մարդասեր a. qui engendre des hommes.

Մարդասէր a. philanthrope, humain, obligeant, bienveillant, charitable, affable, doux, bénin.

Մարդասիրական a. philanthropique.

Մարդասիրապէս adv. avec humanité, douceur, affabilité, bonté ou bienveillance.

Մարդասիրեմ, եցի va. traiter avec humanité, avec bonté, faire un bon accueil, daigner.

Մարդասիրութիւն s. philanthropie, humanité; bienveillance, bénignité, affabilité, bonté, courtoisie, bon accueil; —բ V. Մարդասիրապէս.

Մարդասպան, աց a.s. homicide, assassin, meurtrier.

Մարդասպանութիւն s. homicide, assassinat, meurtre.

Մարդավաճառ, աց s. marchand d'hommes, d'esclaves.

Մարդավայելուչ a. convenable à des hommes.

Մարդավար, աց a. qui dévore les hommes; poli, civil, courtois.

Մարդավարութիւն s. civilité, politesse, courtoisie, urbanité.

Մարդատեաց, տեցաց, ցից a. qui hait les hommes, misanthrope.

Մարդատեսիլ a. qui a forme humaine.

Մարդատեցիկ V. Մարդատեաց.

Մարդատեցութիւն s. misanthropie, haine des hommes.

Մարդատունկ, տնկոց sm. créature humaine, homme.

Մարդացուլ, ցլոյ s. minotaure, bucentaure.

Մարդացուցանեմ, ուցի va. rendre homme; apprivoiser.

Մարդելոյզ, լուզաց s. flatteur, adulateur.

Մարդելուզութիւն s. flatterie, adulation.

Մարդեղութիւն s. incarnation.

Մարդընտել adj. familier, apprivoisé, privé.

Մարդիկ, դկան, դկանց ou դկաւ s. les hommes, les gens, le monde; —ս յարդարել, faire des hommes; գրագէտ —, les hommes de lettres.

Մարդկաբար V. Մարդկօրէն.

Մարդկախառն V. Մարդախառն.

Մարդկական V. Մարդկային.

Մարդկակերպ, Մարդկակերպարան, Մարդկակերպեալ a. qui a forme humaine.

Մարդկային a. humain; —բնութիւն, la nature humaine.

Մարդկապէս V. Մարդկօրէն.

Մարդկեղէն V. Մարդկային

Մարդկութիւն s. humanité, nature humaine; humanité, le genre humain.

Մարդկօրէն, րինաց a. humain; adv. humainement, selon la nature humaine.

Մարդպետ, աց s. chef des eunuques.

Մարդպետութիւն s. dignité du chef des eunuques.

* Մարեմ V. Շիջուցանեմ.

Մարեմխոտ s. marjolaine.

Մարերի s. un des anciens mois des Arméniens.

Մարզ, ից s. marche, frontière d'un État, province; — դնել, réduire en province; —ք exercice.

Մարզարան, աց s. gymnase.

Մարզեմ, եցի va. exercer, instruire, former, dresser, façonner; aguerrir.

Մարզիկ a. exercé, aguerri.

Մարզիչ a. instructeur, qui instruit, qui aguerrit.

Մարզպան, աց s. gouverneur d'une marche, d'une province.

Մարզպանութիւն s. gouvernement d'une marche.

Մարզպետ V. Մարզպան.

Մարթ է v. unip. il est possible, peut-être.

Մարթանամ V. Մարթեմ.

Մարթանք, նաց s. stratagème; moyen, expédient, ressource.

Մարթելի a. possible.

Մարթեմ, եցի vn. inventer, procurer, trouver un moyen; pouvoir, être capable, en état, à même de.

Մարթեցուցանեմ, ուցի va. rendre possible.

Մարթի v. unip. il est possible, on peut.

Մարթուն, թնոց a. possible; adroit, habile.

Մարթուչ a. adroit, habile.

Մարի, րույ, րեաց s. poule; femelle des oiseaux.

* Մարիմ V. Շիջանիմ; Նուաղիմ.

Մարիխ, ի s. pin résineux.

Մարկեղ s. houe.

Մարմանդ, ի sm. pelouse, gazon.

Մարմաչական a. prurigineux.

Մարմաչեմ, եցի vn. démanger, éprouver des démangeaisons, avoir envie de se gratter; fig. être chatouillé, excité.

Մարմաչեցուցանեմ, ուցի va. donner des démangeaisons, chatouiller; fig. chatouiller, piquer.

Մարմաչիւն, Մարմաչումն s. démangeaison, prurit.

Մարմառոտ a. qui est sujet au fourmillement.

Մարմարակերտ, Մարմարաշէն a. construit de marbre.

Մարմարապատ a. couvert de marbre.

Մարմարեայ a. de marbre.

Մարմարիոն, աց s. marbre.

Մարմարիոնեայ adj. de marbre.

Մարմենի, նւոյ s. fuseau.

Մարմին, մնոց sm. corps; chair; corps, cadavre; homme, personne; corps, ensemble; corps, consistance; — առնուլ, prendre chair, s'incarner.

Մարմնազեղ a. qui a un joli corps.

Մարմնազգած, Մարմնազգեաց, Մարմնազգեցիկ a. revêtu de chair, incarné.

Մարմնածին ծնունդ sm. naissance corporelle, selon la chair.

Մարմնակալ, ի s. corporal.

Մարմնական a. corporel; charnel.

Մարմնակեր, աց a. carnivore, qui mange de la chair.

Մարմնակերութիւն s. usage des viandes pour nourriture.

Մարմնակից s. qui est du même corps.

Մարմնակործան a. qui détruit le corps.

Մարմնակրթութիւն s. exercice corporel.

Մարմնահատ, աց s. anatomiste, disséqueur.

Մարմնահատական a. anatomique.

Մարմնահատեմ, եցի va. anatomatiser, disséquer, faire de l'anatomie.

Մարմնահատութիւն s. anatomie, dissection.

Մարմնահատօրէն adv. anatomiquement.

Մարմնահար, աց a. impotent, infirme.

Մարմնաձեւ, աց a. qui a la forme d'un corps, corporel.

Մարմնամարզ,ից s. gymnastique; professeur de gymnastique.

Մարմնամոլ adj. charnel, sensuel.

Մարմնամոլութիւն s. attachement aux plaisirs du corps, sensualité.

Մարմնանամ, ացայ vn. s'incarner, prendre chair.

Մարմնապահ, աց a. qui conserve le corps; s. garde du corps.

Մարմնապաշտ,ից s. adorateur de la chair.

Մարմնապատ a. enveloppé, couvert de corps, corporel, charnel.

Մարմնապարար a. qui engraisse le corps.

Մարմնապէս adv. corporellement; charnellement.

Մարմնառութիւն s. incarnation.

Մարմնասէր a. qui aime la chair, les plaisirs des sens, charnel, sensuel.

Մարմնասիրութիւն s. amour de la chair, des plaisirs charnels, sensualité.

Մարմնատակ V. Լօշտակ.

Մարմնատեսիլ, Մարմնատիպ a. qui a l'aspect d'un corps; corporel.

Մարմնարան, աց sm. lieu d'incarnation, matrice.

Մարմնաւոր, Մարմնաւորական, աց a. corporel; charnel, de chair; charnel, sensuel.

Մարմնաւորապէս adv. corporellement.

Մարմնաւորութիւն s. corporéité; incarnation.

Մարմնեղ, աց a. charnu, corpulent.

Մարմնեղէն a. corporel; corpulent, charnu.

Մարուխ V. Մատուտակ.

Մարսեմ, եցի vn. digérer.

Մարսեցուցանեմ, ուցի va. faire digérer.

Մարսեցուցիչ, Մարսողական a. digestif.

Մարսողութիւն s. digestion.

Մարտ, ից s. guerre, combat, bataille; dispute, querelle, lutte; Mars; — դնել՝ մղել ընդ ումեք, combattre contre qn., lui faire la guerre; տալ — պատերազմի ընդդէմ ուրուք, livrer la bataille, faire la guerre à qn.; ի— պատերազմի պատրաստել, se préparer à la guerre; — եղեալ կռուել, se battre, combattre, attaquer; առանց մարտի պատերազմաց, sans combattre, sans coup férir; ելանել ի— պատերազմի ի վերայ ուրուք, prendre les armes contre qn.; անագորոյն մարտիւ պատերազմաւ, par une bataille sanglante; միշտ մարտիւ լինել ընդ ումեք, être en guerre continuelle avec qn.; — պատերազմի էր նոցա ընդ միմեանս վասն, ils étaient en guerre pour; V. Անպարտելի, Պատերազմ.

Մարտադիր, դրաց s. agonothète, athlothète.

Մարտածնոյց a. qui suscite une guerre, une querelle.

Մարտական a. de guerre, de combat, guerrier, combattant.

Մարտակից s. compagnon de guerre, allié; ennemi, adversaire.

Մարտակառք, աւց s. char de guerre.

Մարտակցութիւն s. alliance pour faire la guerre, secours.

Մարտամբոխ a. troublé, agité par les guerres.

Մարտայարդար V. Մարտադիր.

Մարտանկար, աց a. qui peint la bataille; — պատկերահան, peintre de batailles.

Մարտասայլ, ից s. caisson.

Մարտավայր, ի s. palestre, champ de bataille.

Մարտընտիր sm. guerrier d'élite; —ք, corps d'élite.

Մարտիկ, տկաց s. combattant, guerrier; —ք, palestre.

Մարտիրոս, աց s. martyr.

Մարտիրոսական adj. de martyr.

Մարտիրոսանամ, ացայ vn. souffrir le martyre, être martyr.

Մարտիրոսարան, աց s. chapelle, tombeau d'un martyr.

Մարտիրոսութիւն s. martyre.

Մարտկոց, աց s. batterie, bastion; tour; ելեկտրական —, batterie électrique

Մարտնչիմ տեայ, տուցեալ vn. combattre, se battre, faire la guerre; lutter, engager une lutte, se quereller, se disputer.

Մարտուսոյց s. professeur de guerre, maître d'armes.

Մարտուցանեմ, ուցի va. faire combattre, exciter à la guerre.

Մացառ V. Մացառք.

Մացառախիտ a. plein ou couvert de buissons, buissonneux, fourré.

Մացառաձեւ a. en forme de broussailles.

Մացառապող a. qui se cache dans les buissons.

Մացառուտ V. **Մացառախիտ.**

Մացառք, ռաց s. buisson; broussailles, hallier; fig. — աչաց, paupières.

Մաւրիտանական a. mauresque; — նկար, la mauresque.

Մաքալուկ s. ornith. martinet.

Մաքառիմ, ռեցայ vn. combattre, lutter, engager une lutte, être aux prises, en venir aux mains, se quereller, se disputer, débattre.

Մաքառող a. qui lutte, adversaire.

Մաքառումն s. lutte, débat, querelle, dispute.

Մաքեաւելեան a. machiavélique.

Մաքեաւելութիւն s. machiavélisme.

Մաքի, քւոյ, քեաց s. brebis; — մայէ՝ բառաչէ, la — bêle.

Մաքման s. mouchoir.

Մաքուր, քրոց a. propre, pur, net; épuré; pur, limpide; pur, chaste; գրել զմաքուրն ou *—ր քաշել, mettre au net.

Մաքս, քից s. douane, droit d'entrée, octroi.

Մաքսանենգ, աց s. contrebandier.

Մաքսանենգութիւն s. contrebande.

Մաքսանոց, աց s. douane; octroi.

Մաքսապետ, աց s. chef des douaniers, des publicains, directeur des douanes, fermier général.

Մաքսատուն, տանց s. m. douane.

Մաքսաւոր, աց s. douanier, publicain.

Մաքսաւորութիւն s. charge de douanier, d'un publicain.

Մաքսեմ, եցի va. douaner, prendre les droits d'entrée, faire payer ou percevoir l'impôt d'une marchandise.

Մաքրագործ, աց adj. qui purifie.

Մաքրագործեմ, եցի va. purifier, rendre pur.

Մաքրագործութիւն s. purification.

Մաքրազարդ a. paré par la propreté, pur, purifié.

Մաքրազարդեմ, եցի va. parer par la propreté, purifier.

Մաքրածին a. qui engendre avec pureté.

Մաքրական V. **Մաքուր.**

Մաքրակենցաղ, Մաքրակրօն a. qui mène une vie pure, chaste.

Մաքրապէս adv. purement, proprement; purement, simplement.

Մաքրասէր a. qui aime la pureté, la propreté.

Մաքրասիրութիւն s. amour de la propreté.

Մաքրարան, ի sm. purgatoire.

Մաքրարար, աց a. qui purifie.

Մաքրափայլ a. brillant de propreté, pur, net, limpide.

Մաքրեմ, եցի va. nettoyer; purifier, purger; — զանօթս խոհակերոցի, récurer, écurer; — զխաւարտս, éplucher les légumes; — զոճ, épurer le style; — զարիւն, dépurer le sang.

Մաքրողական a. dépuratif, purgatif; s. dépuratif; purgatif, purgation; — առնուլ, prendre un purgatif.

Մաքրութիւն s. pureté, netteté; propreté; purification; dépuration.

Մաքրումն s. nettoiement, nettoyage.

Մգլահոտ a. qui sent le moisi.

Մգլիմ, լեցայ vn. moisir; tâcher, faire des efforts.

* Մգլոտիմ, եցայ vn. moisir.

* Մգլոտութիւն sm. moisissure.

Մեզէն, Մեզոյն adv. de nous-même, par nous-même, de nos propres mains.

Մեթր, ից s. mètre.

Մեթրական a. métrique; — դրութիւն, système métrique.

Մելան, ի, աւ s. encre.

Մեխակ, աց s. girofle, clou de girofle; giroflier; œillet.

Մեխակահոտ a. à odeur de girofle.

Մեծ, աց a. grand; gros, haut; fort, puissant; important, notable, considérable; solennel; vaste; — ժամս, pendant plusieurs heures, pendant longtemps; զմեծ ժամս գիշերոյ, une grande partie de la nuit; մեծ արար Տէր զողորմութիւն իւր ընդ նմա, le Seigneur a signalé envers lui sa miséricorde.

Մեծաբան, ից s. hableur, rodomont, fanfaron, sacripant, craqueur, fier-à-bras, vain; a. plein de jactance, emphatique; մեծաբանս բարբառիլ՝ խօսիլ V. Մեծաբանեմ.

Մեծաբանեմ, եցի. Մեծաբանիմ, նեցայ vn. hâbler, faire le grand parleur, parler avec jactance, trancher du grand seigneur, prendre le haut ton, faire de l'embarras, faire l'important, faire claquer son fouet, craquer.

Մեծաբանութիւն s. hâblerie, haut ton, fanfaronnade, grand mot, craquerie, discours plein de jactance, boursouflage.

Մեծաբարբառ a. qui parle haut, qui crie bien fort; qui fait un grand bruit, bruyant, haut; adv. à haute voix, fort, hautement.

Մեծաբաց a. grandement ouvert, large.

Մեծաբեռն V. Ծանրաբեռն.

Մեծաբերան a. qui a une grande bouche.

Մեծաբերձ a. très-haut, très-élevé.

Մեծագանձ a. très-riche, richard, opulent.

Մեծագեղ adj. très-beau, charmant.

Մեծագին, գնոյ. **Մեծագնի**, գնւոյ a. de grand prix, de haut prix, très-cher, très-coûteux, précieux; **Մեծագին** adv. très-cher, à un prix très-élevé; — գնել՝ վաճառել, acheter ou vendre bien cher.

Մեծագլուխ adj. qui a une grosse tête.

Մեծագոչ a. qui crie bien fort, bruyant, qui frémit avec bruit, qui pousse d'affreux rugissements.

Մեծագործ a. qui fait de grandes actions, de grandes choses; magnifique, superbe, grandiose.

Մեծագործութիւն s. grandeur des actions, grande action, magnificence.

Մեծագութ a. très-miséricordieux.

Մեծադէզ a. très-entassé, haut, gros.

Մեծազանգուած a. volumineux, énorme.

Մեծազարդ a. très-orné.

Մեծազարմ a. de haute naissance, noble.

Մեծազբօս a. très-occupé, très-affairé.

Մեծազգի, զգւոյ, զգեաց V. **Մեծազարմ**.

Մեծազօր a. très-puissant, très-fort.

Մեծաթեւ a. qui a de grandes ailes.

Մեծաթիւ a. très-nombreux.

Մեծախոհ, **Մեծախորհուրդ** a. qui a des sentiments élevés, de grandes pensées, de grands desseins, magnanime, généreux; mystérieux.

Մեծախոհութիւն s. élévation des sentiments, des pensées, générosité, magnanimité.

Մեծախումբ adj. très-nombreux.

Մեծախօս V. **Մեծաբան**.

Մեծածախ a. dispendieux, à grands frais, coûteux, somptueux, splendide, magnifique.

Մեծածառ a. qui a de grands arbres.

Մեծածով, ու s. grande mer, Océan.

Մեծականջ adj. qui a de grandes oreilles.

Մեծակառոյց a. magnifiquement bâti, grandiose, superbe.

Մեծակն a. qui a de grands yeux.

Մեծակոհակ adj. qui a de grosses vagues.

Մեծակոյտ a. très-entassé, qui a de grands amas, énorme.

Մեծահամբաւ a. très-célèbre, très-renommé, très-fameux.

Մեծահանդէս a. glorieux, célèbre, illustre; solennel, magnifique; — փառօք՝ տօնել, solennellement, avec solennité, avec pompe, en grande pompe.

Մեծահանճար, եց a. très-intelligent, doué d'un grand talent, qui a un grand génie.

Մեծահառաչ a. qui pousse ou fait pousser de profonds soupirs.

Մեծահասակ a. de grande taille, grand.

Մեծահատոր a. volumineux.

Մեծահաց sm. grand dîner, magnifique repas; adj. somptueux, splendide; — գործել, donner un grand dîner.

Մեծահաւատ a. qui a une grande foi.

Մեծահոգի adj. qui a l'âme grande, magnanime.

Մեծահռչակ V. Մեծահամբաւ.

Մեծահրաշ a. merveilleux, prodigieux, surprenant.

Մեծաձայն a. qui a la voix haute, qui fait grand bruit, sonore, bruyant, retentissant, éclatant; adv. à haute voix, à grands cris, avec de grands cris, à grand bruit, à cor et à cri, hautement; — աղաղակել՝ կարդալ, crier à tue-tête, à toute voix, de toute sa force.

Մեծածիգ adj. très-étendu, diffus; très-éloigné; — բանիւք, diffusément.

Մեծամարմին a. qui a un gros corps, qui a une grande corpulence.

Մեծամարտ adj. de grande guerre.

Մեծամեծ, աց a. très-grand, grandissime, grand, important, considérable; —ք, les grands, le grand monde, la haute société; grandes actions, grandes choses, grandes entreprises; —ս գործել, faire de grandes actions; —ս բարբառել՝ խօսել՝ կոտորել V. Մեծաբանեմ; —ս գործեցեր, vous avez fait de grandes choses.

Մեծամեծար a. très-honoré.

Մեծամեծարար a. qui fait de grandes choses; adv. beaucoup, plus.

Մեծամեղ, աց a. grand pécheur.

Մեծամիտ V. Բարձրամիտ.

Մեծամուր a. très-fort, bien fortifié.

Մեծամտեմ, **Մեծամտիմ** V. Բարձրամտեմ.

Մեծամտութիւն V. Բարձրամտութիւն.

Մեծայաղթ a. grand vainqueur, victorieux; colossal, énorme, grandiose.

Մեծայոյս adj. qui a grand espoir, plein d'espérance, sûr; — լինել, avoir grand espoir, avoir lieu d'espérer.

Մածայտ a. qui a de grosses joues, joufflu, mafflé, mafflu, bouffi.

Մեծանամ, ացայ vn. grandir, devenir grand; grossir, se grossir; s'enrichir, devenir riche; մեծացաւ մեծութիւն յոյժ, devint immensément grand, riche.

Մեծանդամ a. dont les membres sont grands, membru.

Մեծանիստ a. très-étendu, vaste.

Մեծանձն, ձին a. magnanime, généreux; de grande taille, grand, de haute stature.

Մածանձնութիւն sm. grandeur d'âme, magnanimité, générosité; grandeur, hauteur.

Մեծանուն a. qui a un grand nom, très-renommé, célèbre, illustre.

Մեծաշահ a. très-lucratif, très-avantageux.

Մեծաշէն V. Մեծակառոյց.

Մեծաշուրթն adj. qui a de grosses lèvres, lippu.

Մածաշուք a. comblé des plus grands honneurs, magnifique, splendide, pompeux, majestueux, somptueux, solennel; adv. avec de grands honneurs, splendidement, pompeusement, somptueusement.

Մեծապայծառ a. très-brillant, très-clair, éclatant; magnifique, splendide, somptueux, illustre, illustrissime; — յաղթանակ, victoire la plus éclatante.

Մեծապանծ a. très-vanté; qui se vante, qui se glorifie beaucoup; éminent, superbe, excellent, glorieux; — լինել, se vanter, se glorifier beaucoup; — յաղթութիւն, victoire signalée.

Մեծապատիւ a. très-honorable, très-honoré; adv. avec de grands honneurs; — առնել՝ մեծարել, combler, accabler d'honneurs, fêter, fêtoyer, traiter avec de grands honneurs, combler de prévenances, de distinctions.

Մեծապատուեմ, եցի va. combler d'honneurs.

Մեծապատում adj. longuement raconté, long, prolixe.

Մեծապարգեւ a. qui fait de grands présents, généreux, libéral; — առնել՝ մեծարել, combler de présents, de dons, de cadeaux, faire de magnifiques présents.

Մեծապարծ V. Մեծապանծ.

Մեծապէս adv. grandement; beaucoup, fort, considérablement, puissamment; avec grand soin; heureusement; — պայծառանալ, avoir un grand éclat; — սխալել, se tromper grandement; եւ այս — է, c'est un grand avantage; եւ այս նոցա — բազնիպ, c'est pour eux un grand embarras; վկայութիւն նորա — է յայսոսիկ, son témoignage est très-grand, est pour beaucoup en tout ceci.

Մեծաջան a. très-studieux, très-diligent, laborieux; très-difficile, laborieux, pénible.

Մեծասպար a. trochaïque; s. trochaïque, trochée.

Մեծաստատ adj. impérieux, d'un ton terrible, plein d'autorité, sévère, violent.

Մեծասիրտ a. qui a un grand cœur, magnanime.

Մեծասպաս a. somptueux, magnifique, splendide, fastueux.

Մեծաստնի a. qui a de grosses mamelles, mamelu.

Մեծաստանչ V. Մեծաձիրաչ.

Մեծավայելուչ adj. majestueux, plein de majesté, magnifique; — փառք, majesté.

Մեծավաստակ V. Մեծաջան; qui a de grands mérites.

Մեծավերջ, եց s. iambe; a. iambique.

Մեծավերջական a. iambique.

Մեծատարած a. très-étendu, très-vaste.

Մեծատարր a. grand, spacieux, large, vaste.

Մեծատուն, տանց adj. sm. riche, opulent; —ք, les riches, le grand monde, la haute société.

Մեծարանք, նաց s. respect, estime, considération, hommage, révérence, vénération, déférence, prévenance, compliment, honneur; — հասարակաց, estime générale; — նօք, avec respect, avec déférence, avec un air respectueux; մեծարանս դնել V. Մեծարեմ.

Մեծարգեմ V. Մեծարեմ.

Մեծարգի, Մեծարգոյ a. très-respectable, très-estimable, très-honorable, vénérable, précieux, recommandable; — առնել V. Մեծարեմ; — լինել, gagner l'estime, jouir d'une grande considération, tenir le haut du pavé.

Մեծարգութիւն sm. révérence; autorité.

Մեծարեմ, եցի va. respecter, estimer, vénérer, prendre ou avoir en considération, honorer, complimenter, apprécier, considérer, tenir compte de qn.; V. Մեծապատիւ.

Մեծարոյ, Մեծարու V. Մեծարգի.

Մեծացուցէ s. magnificat.

Մեծացուցանեմ, ուցի va. agrandir, faire grandir, rendre grand, puissant; enrichir, rendre riche; glorifier, célébrer, louer, vanter; relever, favoriser.

Մեծացուցիչ s. celui qui agrandit, qui relève; qui enrichit; qui glorifie.

Մեծաւոր, աց s. supérieur, prieur.

Մեծափառ a. très-glorieux, majestueux, très-illustre.

Մեծափառութիւն s. majesté, gloire, illustration.

Մեծափարթամ a. extrêmement ou furieusement riche, richard, richissime; — լինել, rouler sur l'or, être fort riche.

Մեծափափաք a. très-désireux, très-envieux, ardent.

Մեծափոյթ a. très-diligent.

Մեծափոր a. qui a un gros ventre, pansu.

Մեծաքաղաք, աց s. grande ville.

Մեծաքաղաքացի, ցւոյ s. citoyen d'une grande ville.

Մեծաքայլ a. à grands pas; — ընթանալ, courir à toutes jambes.

Մեծաքիթ a. qui a un gros nez.

Մեծեղեռն a. qui commet de grands crimes; — ամպարշտութիւն, crime horrible; — յանցանք, crime.

Մեծիմաստ a. qui a de grandes pensées; très-savant, — քաղաքագէտ, grand politique.

Մեծութիւն sm. grandeur, grosseur, calibre; grandeurs, dignités, puissance, magnificence, majesté, élévation; richesse, fortune; կորուսանել

զմեծութիւնս իւր, perdre sa fortune; մերկանալ իմեծութեանց, sacrifier sa fortune; *— ծախել, se prélasser, affecter un air de grandeur, de dignité; մեծափարթամ —, grande fortune; աշխարհիական —ք, grandeurs humaines; լնուլ —իք, combler de richesses; ի— հասանել, parvenir aux dignités, aux honneurs.

Մեծուհի sf. grande dame.

Մեծվայելչութիւն s. majesté, magnificence.

Մեծօր s. long jour.

Մեկենաս, այ s. Mécène.

Մեկին adj. explicite, clair, évident, net, formel, précis; distinct, unique, seul; simple, ordinaire, obscur; adv. clairement, nettement, explicitement, formellement, expressément; — բանիւ, en termes précis, distinctement.

Մեկ V. Մեկին a.

Մեկնաբար adv. en expliquant, avec explication.

Մեկնագոյնս V. Մեկին adv.

Մեկնաբանեմ, եցի vn. expliquer, éclaircir.

Մեկնաբանութիւն s. explication, éclaircissement.

Մեկնազէն V. Մեկնակազէն.

Մեկնակ a. distinct, seul; V. Մեկին.

Մեկնակազէն s. maraudeur, bandit, bandoulier.

Մեկնակի adv. seulement.

Մեկնակահանդերձ adj. qui n'est couvert que d'un seul vêtement.

Մեկնանամ, ացայ vn. se retirer, s'éloigner.

Մեկնապէս V. Մեկին adv.

Մեկնաւոր, աց a. seul.

Մեկնեմ, եցի va. séparer, détacher, écarter, éloigner; expliquer, interpréter, commenter, traduire; tendre, allonger.

Մեկնեցուցանեմ, ուցի va. séparer, écarter.

Մեկնիմ, նեցայ vn. se séparer, se détacher; s'écarter, s'éloigner, filer, fuir; se retirer, partir, s'en aller; s'expliquer; մեկնէր գնալ իՀայս, il partait pour l'Arménie.

Մեկնելի a. explicable.

Մեկնիչ s. explicateur, commentateur, interprète.

Մեկնողական a. explicatif.

Մեկնոց, աց s. manteau.

Մեկնոցակ, աց s. mantelet.

Մեկնոցիկ s. mantille.

Մեկնութիւն s. explication, interprétation, commentaire; séparation, éloignement.

Մեկնօրէն V. Մեկնաբար.

Մեկոն, աց. Մեկոնիոն sm. pavot.

Մեկուսանամ, ացայ vn. se retirer, s'écarter, s'éloigner, se retirer à l'écart, vivre à l'écart.

Մեկուսացուցանեմ, ուցի. Մեկուսեմ, եցի va. écarter, éloigner, séparer.

Մեկուսի prép. adv. à part, à l'écart, séparément. en particulier; — առնել, mettre à l'écart, de côté, à part; — առ-

նուլ, prendre à part, en particulier.

Մեկուսութիւն s. séparation, écart, éloignement.

Մեհեան, ենի, նաց s. temple, fanum; autel dans les temples; simulacre, idole.

Մեհեկան, ի s. un des mois de l'ancien calendrier arménien.

Մեհենագիրք, գրոց s. archives, bibliothèque d'un temple; hiéroglyphe.

Մեհենազարդ s. néocore, ministre d'un temple.

Մեհենազարդութիւն s. fonctions de néocore.

Մեհենազերծ a. sacrilége, qui dépouille les temples.

Մեհենազերծութիւն s. vol sacrilége.

Մեհենապաշ V. Մեհենազարդ.

Մեհենական a. de temple, qui appartient à un temple; hiéroglyphique.

Մեհենակապուտ V. Մեհենազերծ.

Մեհենային V. Մեհենական.

Մեհենաշէն a. qui construit un temple.

Մեհենասէր a. qui aime les temples.

Մեհենատեղի, ղւոյ s. lieu où est bâti un temple.

Մեհենաւանդ, աց s. bracelet, collier, bijou.

Մեղ s. faute, tort; péché; — առնել, faire tort, du tort; — դնել V. Մեղադրեմ; իմ է մեղն, c'est ma faute, j'ai tort; ոչ իմ է մեղն, ce n'est pas ma faute; քո է մեղն, c'est ta faute, vous avez tort.

Մեղադիր a. blâmable; — լինել V. Մեղադրեմ.

Մեղադրանք V. Մեղադրութիւն.

Մեղադրեմ, եցի va. blâmer, reprocher, accuser, inculper, incriminer.

Մեղադրութիւն s. blâme, inculpation, accusation, répréhension, reproche.

Մեղական V. Մեղանչական.

Նաւակատիք, տեաց s. inauguration, dédicace; առնել զնաւակատիս շինուածոյ, faire la dédicace d'un édifice; նաւակատիս առնել սեղանոյն, dédier l'autel.

Նաւակերտութիւն V. Նաւագործութիւն.

Նաւակիկ s. petit bateau, batelet.

Նաւակից s. compagnon de navigation.

Նաւակոծ adj. naufragé ; — լինել, faire naufrage.

Նաւակոծիմ,ծեցայ vn. faire naufrage.

Նաւակոծութիւն sm. naufrage.

Նաւակռիւք, Նաւակռուութիւն V. Նաւամարտութիւն.

Նաւահանգիստ, գստից, գստաց s. port, port de mer ; անքոյթ՝ գեղեցիկ՝ մեծ՝ ընդարձակ —, un port sûr, beau, grand, large ; մտանել՝ հասանել՝ իջանել ի—, entrer, arriver, descendre dans le port.

Նաւահանդէս, դիսի s. armée navale.

Նաւաձգութիւն sm. remorque, halage.

Նաւաձիգ sm. remorqueur, haleur ; — պարան, la remorque ; — լինել, remorquer, haler.

Նաւաղօղակ, աց sm. navigateur.

Նաւամակոյկ, կուկի s. canot, barque, nacelle.

Նաւամատոյց,ուցի s.échelle.

Նաւամարտ, ից. Նաւամարտիկ, տկաց s. a. combattant sur mer ; combat naval ; —լինել, donner une bataille navale, combattre sur mer.

Նաւամարտութիւն s. combat naval ; naumachie.

Նաւամուտ a. embarqué ; — լինել, s'embarquer.

Նաւաչու s. traversée, trajet ; a. V. Նաւագնաց.

Նաւապետ, աց s. capitaine de vaisseau, commandant.

Նաւապետեմ, եցի va. commander, conduire, manœuvrer un navire, piloter.

Նաւապետութիւն s. commandement, manœuvre d'un navire, pilotage.

Նաւառաջք, չից s. proue.

Նաւասարդ, ի s. le premier mois de l'ancien calendrier arménien.

Նաւաստ, ի. Նաւաստի, տւոյ, տեաց s. matelot, marin, marinier ; —ք, les matelots, l'équipage.

Նաւաստութիւն s. métier de matelot ; manœuvre ; pilotage ; marine.

Նաւավար, աց s. capitaine ; nocher, nautonnier ; matelot, batelier.

Նաւավարեմ V. Նաւապետեմ.

Նաւատորմ, ի s. flotte.

Նաւատորմիկ s. flottille.

Նաւատորմղ, մղի s. flotte.

Նաւարան, աց s. arsenal.

Նաւարկեմ, եցի vn. naviguer, aller sur mer ; V. Նաւեմ.

Նաւարկելի a. navigable.

Նաւարկող sm. navigateur, passager.

Նաւարկութիւն s. navigation, traversée.

Նաւացռուկ s. poulaine (partie de l'avant d'un vaisseau.

Նաւափայտ s. navire.

Նաւաքարշ, etc. V. Նաւաձիգ, etc.

Նաւելաստաց V. Նաւաստ.

Նաւեմ, եցի vn. naviguer, faire voile.

Նաւթ,ից s. naphte.

Նաւթձեմ V. **Նօթձեմ**.

Նաւկնեար, ներոյ s. pl. bateaux.

Նաւորդ, աց V. **Նաւարկող** et **Նաւաստ**.

Նաւուղիղ, ղղի s. pilote.

Նաւվարձեմ, եցի va. affréter.

Նաւվարձութիւն s. naulage, fret, affrétement.

Նափորտ, ի, ամբ, ունք s. manteau; chape.

Նափորտապատ adj. enveloppé, revêtu d'une chape.

Նափորտիկ sm. petit manteau; dalmatique.

Նաքարակիտ, կտի s. obole, denier.

Նգաւբեկեմ, եցի. **Նգախարխար անել** va. détruire avec un levier, démanteler.

Նգոտիմ, տեալ vn. se moisir, se gâter.

Նեարդ, ներդից s. fibre, ligament.

Նեարդապատ adj. fibreux, musculeux; ligamenteux.

Նեխ, ոյ sm. putréfaction, corruption, infection; mauvaise odeur; chim. brome; չարաթոյն —, odeur infecte.

Նեխ, **Նեխական** a. putréfié, corrompu, gâté, infect.

Նեխահալած a. antiméphitique.

Նեխահոտութիւն sm. mauvaise odeur, infection.

Նեխասաստ a. grognard, bourru.

Նեխեմ, եցի va. corrompre, putréfier, gâter; — իմ vn. se corrompre, se putréfier, se gâter.

Նեխութիւն, **Նեխումն** V. **Նեխ**.

Նեխուր s. bot. ache.

Նեկտար, ի s. nectar.

Նեղ a. étroit, serré; ի— արկանել՝ հասուցանել, mettre à l'étroit, à la gêne, réduire à l'étroit, à l'extrémité, mettre dans l'embarras, forcer, serrer les côtes à qn., le mettre au pied du mur; ի— մտանել՝ անկանել, être à l'étroit, dans la gêne, à l'extrémité, être gêné, embarrassé.

Նեղաբերան a. qui a la bouche, l'embouchure étroite.

Նեղագարշապար a. qui a le talon étroit.

Նեղածերպ a. dont le trou est étroit.

Նեղանամ, ացայ vn. devenir étroit; se fâcher; être gêné, être dans la gêne.

Նեղապէս adv. à l'étroit, dans la gêne.

Նեղասիրտ, սրտաց, ից a. impatient; bourru, colère.

Նեղասրտիմ, տեցայ vn. s'impatienter, avoir des impatiences, se faire du mauvais sang; être de mauvaise humeur, se fâcher, s'irriter, s'exaspérer.

Նեղասրտութիւն sm. impatience, mauvaise humeur, irritation, exaspération, emportement, colère.

Նեղացուցանեմ, ուցի va. gêner, tracasser, tourmenter,

Նեղեմ, եցի va. mettre à l'étroit, à la gêne, gêner, presser, tourmenter, affliger, inquiéter, tracasser, incommoder, importuner, donner de la peine, accabler; vexer, opprimer, maltraiter; serrer, resserrer, rétrécir.

Նեղիմ, ղեցայ vn. être à l'étroit, être gêné, tourmenté, s'affliger, avoir de la peine.

Նեղիչ s. a. celui qui tourmente, oppresseur; a. affligeant, vexatoire, inquiétant.

Նեղութիւն s. gêne, oppression, vexation, tribulation, embarras, peine. tourment, inquiétude, anxiété, détresse, importunité, incommodité, ennui, tracas; manque de largeur, étrécissement.

Նեղուց, ի s. détroit.

Նեղսիրտ, **Նեղսրտութիւն** V. Նեղասիրտ, Նեղասրտութիւն.

Նենգ, ի, աւ ou իւ s. fraude, ruse, astuce, artifice, duperie, intrigue; a. V. Նենգաւոր ; — գործել, frauder, duper, prendre par ruse, comploter, machiner; Նենգաւ V. Նենգանաւ.

Նենգագործ, **Նենգամէտ**, **Նենգաձոտ** V. Նենգաւոր.

Նենգախոհ a. qui médite des ruses, rusé, roué.

Նենգախողող a. qui tue par surprise, assassin.

Նենգախօսութիւն s. langage mensonger, parole artificieuse.

Նենգամիտ V. Նենգախոհ,

Նենգանաւ, **Նենգանօրէն** adv. frauduleusement, artificieusement, par ruse, avec fourberie, insidieusement, déloyalement, par trahison

Նենգապատիր a. insidieux, trompeur, artificieux.

Նենգաւոր, աց a. frauduleux, fourbe, insidieux, rusé, astucieux, trompeur, roué. sournois, traître, déloyal; fripon, escroc.

Նենգաւորեմ V. Նենգեմ.

Նենգաւորութիւն V. Նենգութիւն.

Նենգեմ, եցի vn. frauder, frelater, falsifier, ruser, fourber, duper, fausser, tromper, tricher, escroquer; friponner.

Նենգիչ adj. fourbe, rusé, trompeur, falsificateur, fraudeur, faussaire, escroqueur, tricheur, fripon.

Նենգութիւն s. fraude, artifice, ruse, fourberie, duperie, finesse, rouerie, guet-apens, menée, intrigue, déloyauté, perfidie, mauvaise foi, trahison, supercherie; escroquerie, friponnerie, falsification.

Նեպուկ s. cloporte.

Նեռն, ռինք s. Antechrist.

Նեստորական s. a. nestorien.

Նեստորականութիւն s. nestorianisme.

Նետ, ից s. flèche, trait; նետս արձակել, décocher, tirer unè flèche; V. Տեղամ, Ցանձրատարափ.

Նետաթափ լինիմ vn. lancer des traits.

Նետալից առնեմ va. remplir, accabler de flèches.

Նետակալ, աց s. arbalète.

Նետահար adj. percé d'un trait.

Նետաձիգ s. celui qui tire une flèche, archer; portée des traits; a. qui sert à tirer une flèche; — առնել՝ լինել, tirer, décocher ou lancer une flèche, un trait, décocher des flèches.

Նետաձգութիւն s. décochement.

Նետեմ V. Նետաձիգ լինիմ; *jeter, lancer; Նետ՝ ռումբ՝ ատրճանակ —, tirer une flèche, une bombe, un coup de pistolet.

Նետընկէց sm. portée des traits.

Նետող sm. celui qui lance un trait, archer; * celui qui a jeté.

*Նետուիմ, եցայ vn. se jeter, se lancer, se précipiter.

Ներ, ի, ոյ s. belle-sœur (ainsi s'appellent deux femmes qui ont épousé les deux frères).

Ներածեմ, ծի va. introduire.

Ներածու, ի s. introducteur.

Ներածութիւն s. introduction.

Ներանձն, Ներանձնական V. Ներանձնաւոր.

Ներանձնանամ, ացայ vn. se retirer du monde, se livrer à la vie spirituelle.

Ներանձնացեալ, Ներանձնաւոր a. qui vit retiré, solitaire, adonné à la vie spirituelle; spirituel; contemplatif.

Ներանձնութիւն s. solitude, vie spirituelle, contemplation.

Ներբան, նք sm. plante du pied; — կօշկաց, semelle.

Ներբանափոկ s. sous-pied.

Ներբող, ից s. panégyrique, éloge; — յօրինել, faire un panégyrique.

Ներբողաբան, ից s. panégyriste.

Ներբողաբանեմ V. Ներբողեմ.

Ներբողաբանութիւն V. Ներբող.

Ներբողական adj. panégyrique, d'éloge.

Ներբողեան, ենի V. Ներբող.

Ներբողեմ, եցի va. faire le panégyrique, l'éloge de.

Ներբողիչ s. panégyriste.

Ներգեւ V. Նուրբ, Տկար; s. littér. anc. tribrache.

Ներգեւիմ, եցայ vn. devenir mince, maigre, s'affaiblir.

Ներգիւն s. alize; alizier.

Ներգործաբար adv. activement.

Ներգործական a. actif; — բայ, verbe —; — քուէ, voix active; — մեղք, péché actuel.

Ներգործեմ, եցի va. agir, opérer, exercer une action ou une influence, influencer.

Ներգործութիւն s. activité, action, opération, vertu, influence; — հաւատոյ, acte de foi.

Ներդաշնակ a. harmonieux; s. harmonica.

Ներդաշնակապէս adv. harmonieusement, harmoniquement.

Ներդաշնակաւոր a. harmonieux, cadencé, harmonique.

Ներդաշնակութիւն s. harmonie, accord, symphonie.

Ներդեայ a. de fibre.

Ներելի a. pardonnable, excusable, rémissible ; — մեղք, péché véniel.

Ներեայք s. Néréides.

Ներեմ, եցի vn. pardonner, faire grâce, excuser, avoir de l'indulgence pour ; permettre, accorder ; tolérer, endurer, souffrir, supporter, persévérer ; ներեցէք, pardonnez-moi.

Ներընդունական, աց adj. contingent, éventuel, casuel.

Ներկ, ոյ s. teinte, teinture, couleur ; — կօշկաց, cirage ; * ներկի տալ, faire teindre.

Ներկած V. Ներկ.

Ներկած, Ներկածոյ a. teint, colorié.

Ներկայ, ից a. présent, actuel ; gram. présent ; s. présent.

Ներկայանամ, ացայ vn. se présenter, être présenté.

Ներկայացուցանեմ, ուցի va. présenter.

Ներկայութիւն s. présence.

Ներկանեմ, կի va. teindre, colorer ; — զկօշիկս, cirer.

Ներկանիւթ, ոյ s. matière colorante.

Ներկատուն, տան s. teinturerie.

Ներկատուփ, տփոյ s. boîte à couleurs.

Ներկարար, աց s. teinturier.

Ներկարարութիւն s. teinture, teinturerie.

Ներկեմ V. Ներկանեմ.

Ներկէս V. Նարկես.

Ներկոց V. Ներկատուն.

Ներկուած, ոյ V. Ներկ.

Ներկուռ V. Խիտ ; Հմուտ.

Ներհակ V. Հակառակ.

Ներհակակիր a. contraire, incompatible ; antipathique ; — քնութիւն, incompatibilité.

Ներհական V. Հակառակ.

Ներհակութիւն V. Հակառակութիւն.

Ներհմտութիւն V. Հմտութիւն.

Ներհուն V. Հմուտ ; քաղաքականութիւն, profonde politique.

Ներմարմնանամ V. Մարմնանամ.

Ներմարմնութիւն, Ներմարմնութիւն, Ներմարմնաւորութիւն s. incarnation.

Ներշնչական a. spirituel.

Ներշնչիմ, եցայ va. avoir des inspirations, des transports.

Ներշնչութիւն s. inspiration, transport.

Ներշրջական, Ներշրջանական a. encyclopédique.

Ներշրջանակք, կաց s. encyclopédie.

Ներող a. qui pardonne, indulgent, condescendant ; — լինել, être indulgent, montrer de l'indulgence.

Ներողակրօն adj. tolérant ; — միտք՝ խորհուրդ s. tolérance.

Ներողակրօնութիւն s. tolérance.

Ներողամիտ V. Ներող; — քաղցրութեամբ, avec une extrême bonté.

Ներողամտութիւն s. indulgence, condescendance.

Ներողութիւն sm. pardon, grâce; indulgence; —ք, avec indulgence.

Ներումն s. pardon; — խնդրել, demander pardon, faire des excuses.

Ներս, ի— adv. dedans, dans; ընկալաւ զնա ի—, il l'a reçu dedans; եդաք ի— ի սենեակն, nous avons mis dans la chambre; — մտաւ, il rentra.

Ներտ V. Նեարդ.

Ներփակեալ a. ci-inclus; — նամակն, la lettre ci-incluse.

Ներքեւ prép. sous, dessous.

Ներքին, քնոց a. intérieur, interne, intestin; intrinsèque; intime, cordial; intérieur, bas, souterrain, inférieur; — անկիւն, angle interne.

Ներքինանամ, ացայ vn. devenir eunuque.

Ներքինապետ, աց s. chef des eunuques.

Ներքինացուցանեմ, ուցի va. rendre eunuque, châtrer.

Ներքինի, նւոյ s. eunuque; — առնել, —ս խզել, châtrer.

Ներքնաբաժին s. subdivision; — առնել, subdiviser.

Ներքնաբերդ, ի s. citadelle.

Ներքնագիր, գրոյ s. inscription.

Ներքնակ, աց s. vêtement de dessous, chemisette.

Ներքնական adj. inférieur, intérieur.

Ներքնակողմն sm. le côté inférieur, le bas.

Ներքնայարկ, ի s. entre-sol.

Ներքնատուն, տանց s. rez-de-chaussée; cave.

Ներքնուղի V. Ստորուղի.

Ներքոյ a. qui est dessous, qui est sous, en bas; prép. adv. —, ի—, sous, dessous, au-dessous; d'en bas, de dessous, en dessous, par-dessous; du dedans, au dedans; ի ներքոյ անկեալ՝ կացեալ, sujet, soumis, dépendant.

Ներքուստ, ի— adv. du dedans, intérieurement, au dedans, en dedans; de dessous, en dessous, d'en bas, en deçà.

Ներքս. ի— adv. dedans, à l'intérieur, au fond; դժուարութիւնս բազումս ի ներքս ածէր, il offrait de grandes difficultés.

Ներքսագոյն a. intérieur, qui est en dedans, au fond.

Ներքսադրական a. intercalaire; — գիծ, trait d'union.

Ներքսադրեմ, եցի va. intercaler.

Ներքսադրութիւն s. intercalation.

Ներքսածութիւն s. introduction.

Ներքսակողմն s. l'intérieur, la partie interne, fond.

Ներքսամուտ առնեմ va. faire entrer, introduire.

Նեցուկ, ցկի s. soutien, support, appui; étai, tuteur; —ս արկանել, soutenir, étayer; — կալ հաւատոց, être le soutien de la religion, soutenir, appuyer la religion; — ամբողջութեան լինել ումեք, être le soutien de qn., le soutenir.

Նզով, ից sm. anathème; — լինել, être anathématisé; Նզովս արձակել՝ իվերայ կարդալ, frapper d'anathème.

Նզոված, ոյ, ի s. anathème, a. anathématisé.

Նզովանք, նաց s. anathème.

Նզովեմ, եցի va. anathématiser, frapper d'anathème.

Նժար, ից s. plat, plateau, bassin de balance.

Նժդեհ, **Նժդեհական**, **Նժդեհիմ**, **Նժդեհութիւն** V. Պանդուխտ, Պանդխտական, Պանդխտիմ, Պանդխտութիւն.

Նժոյգ, ուգից s. relais, cheval de main, de parade.

Նժոյգածիգ s. écuyer.

Նիազ a. qui a besoin ou qui manque de, nécessiteux.

Նիազութիւն sm. manque, besoin, nécessité.

Նիգ, նգաց s. levier, barre; verrou; նիգս արկանել, barrer; mettre le verrou.

Նիզակ, աց s. lance; անտառախիտ —ք, des lances hérissées.

Նիզակաբեկորք, **Նիզակայեկք** s. les débris des lances.

Նիզակաբուն, բնի s. hampe, le bois d'une lance.

Նիզակախուռն a. hérissé de lances, rempli de lances.

Նիզակակից s. allié, coalisé.

Նիզակակուր առնեմ va. tuer d'un coup de lance.

Նիզակակցիմ, եցայ vn. s'allier, se coaliser, se liguer.

Նիզակակցութիւն s. alliance, coalition, ligue.

Նիզակաձեւ a. en forme de lance.

Նիզակատէգ s. le fer ou la pointe d'une lance.

Նիզակաւոր s. lancier.

Նիզակընկէց լինիմ vn. déserter en jetant ses lances, abandonner son poste.

Նիհ s. taxe, tarif.

Նիհար, աց a. maigre.

Նիհարանամ, ացայ vn. devenir maigre, maigrir.

Նիհարացուցանեմ, ուցի va. maigrir, amaigrir.

Նիհարութիւն s. maigreur, amaigrissement.

Նինջ sm. sommeil, repos, dodo; — տալ արտեւանանց, donner du repos aux paupières.

Նիշ sm. signe, marque; tache, point; այս նիշ, այն նիշ, un tel, une telle.

Նիստ, նստի, իւ s. séant, la posture d'un homme assis; assiette, emplacement, exposition; siége, résidence; possession, propriété; séance, session; ի— լինել, se mettre sur son séant, s'asseoir; ինստի անդ, pendant la séance, séance tenante; երեք նստիւ նկարել զկենդանագիր, faire un portrait en trois séances.

Նիւթամ, **ացի** va. inventer, ourdir, machiner.

Նիրհ sm. sommeil, assoupissement, repos; — առնուլ V. Նիրհեմ.

Նիրհեմ, **եցի** vn. s'endormir, sommeiller, s'assoupir.

Նիրհեցուցանեմ, **ուցի** va. endormir, assoupir.

Նիրհումն V. Նիրհ.

Նիւթ, **ոց** s. matière; matière, substance; matière, sujet, cause; —ք, matériaux; խօսեսցուք զայսր նիւթոյ, parlons sur ce chapitre.

Նիւթական a. matériel.

Նիւթականութիւն s. matérialité.

Նիւթապաշտ, **ից** s. matérialiste.

Նիւթապաշտութիւն s. matérialisme.

Նիւթապէս adv. matériellement.

Նիւթեղէն a. matériel.

Նիւթեմ, **եցի** va. filer, ourdir, tramer, machiner, préparer, former (au prop. et au fig.); չարիս — ումեք, méditer le mal contre qn.; — խորհուրդս չարութեան, méditer de noires pensées; դաւ —, couver, ourdir une trahison, լրբենի սէր նորա մահ նիւթեաց նմա, son infâme amour lui coûta la vie; կործանումն —, causer la ruine, ruiner.

Նիւթիչ s. qui file, filant.

Նիւթծուն V. Թրծուն.

Նիւթութիւն s. matérialité.

Նիւս V. Նուք.

Նխոթեմ, **թի** va. pousser, repousser par force, enforcer.

Նկան, **ազ** s. touace; miche.

Նկանակ, **ազ** s. flûte (pain).

Նկատ լինիմ vn. regarder.

Նկատեմ, **եցի** va. regarder, envisager, entrevoir, distinguer, aviser, admirer, contempler; observer, considérer, examiner; avoir égard.

Նկատիչ a. s. qui regarde, qui observe, contemplateur, observateur.

Նկատութիւն, **Նկատումն** s. observation, contemplation; égard, considération.

Նկար, **ուց** s. peinture, tableau; description; ինկարու հանել, peindre; décrire

Նկարագեղ a. pittoresque.

Նկարագիր, **գրաց** s. description; peinture, tableau; image, figure, portrait, représentation; dessin, plan, modèle; caractère; peintre; adj. peint; décrit; ըստ նկարագրին, littéralement; մեկնել ըստ նկարագրին, expliquer à la lettre; պատկերակերպ —, portrait; — բնութեան, tableau de la nature.

Նկարագրական a. descriptif; caractéristique, littéral; — իմաստիւք, littéralement.

Նկարագրեմ, **եցի** va. peindre, représenter; fig. peindre, dépeindre, décrire, faire la description de; caractériser.

Նկարագրութիւն V. Նկարագիր; *— ընել, faire la description de.

Նկարագրոշմ, իջ s. caractère, lettre.

Նկարակերպ, Նկարակերտ a. peint, bigarré de diverses couleurs; s. peintre; brodeur.

Նկարակերտեմ, եցի va. peindre; broder.

Նկարակերտութիւն s. peinture; broderie.

Նկարապաճոյճ a. peint, orné de peintures; — տախտակ, tableau, peinture.

Նկարապատկեր, ազ s. peinture, tableau.

Նկարատուփ, տփոյ sm. chambre obscure.

Նկարացոյց, ուցի a. qui représente un tableau, une image; s. chambre claire.

Նկարեմ, եցի va. peindre; décrire, dépeindre, écrire; représenter, figurer; — իմիտս, imaginer, se figurer; — իգրի, écrire, décrire.

Նկարէն a. peint, bigarré de diverses couleurs, nuancé; imagé.

Նկարիչ s. peintre; կենդանագիր —, peintre de portrait.

Նկրաուն V. Նկարէն.

Նկարչական a. pittoresque.

Նկարչութիւն s. peinture.

Նկնախոհ a. qui a des sentiments bas, mesquins, peu élevés, d'esprit court; — իմաստք՝ միտք, idées mesquines.

Նկնահասակ a. d'une petite taille, petit.

Նկնաձեւ a. d'une vilaine forme, ignoble, petit.

Նկնութիւն s. bassesse, petitesse, mesquinerie

Նկուղ, իջ s. caverne, caveau, fossé.

Նկուն a. vaincu, humilié, avili; abject, vil, bas, méprisable, ignoble, pauvre; — առնել, vaincre, avoir le dessus, abattre, avilir, humilier, abaisser, effacer, accabler; — լինել, être vaincu, avoir le dessous, se laisser vaincre, succomber, être accablé, s'humilier, s'abaisser.

Նկրտիմ, տեցայ vn. faire des efforts, tâcher de, s'efforcer de, s'étudier à, chercher à, se mettre à.

Նհանգ, ազ s. caïman.

Նհանչեմ V. Նահանչեմ.

Նմա pron. à lui, à elle, lui.

Նման, իջ adj. semblable, pareil, égal, analogue, ressemblant; — է, il ressemble, il est ressemblant; il convient.

Նմանաբոյժ, ուժի s. homéopathe.

Նմանաբուժական adj. homéopathique.

Նմանաբուժութիւն sm. homéopathie.

Նմանագոյն V. Նման, Նմանապէս.

Նմանագործ a. contrefait; s. contrefacteur; contrefaçon.

Նմանագործեմ, եցի va. contrefaire.

Նմանագործութիւն s. contrefaçon.

Նմանագրեմ, եցի va. écrire pareillement; fac-similer.

Նմանագրութիւն sm. fac-simile.
Նմանականն a. imitatif.
Նմանակերպ a. conforme, uniforme.
Նմանակերպութիւն s. conformité, uniformité.
Նմանակիր a. qui est affecté de même, qui éprouve les mêmes affections ou passions.
Նմանակից V. Նման.
Նմանաճան a. qui peint d'une ressemblance frappante; calqué.
Նմանաճանեմ, եցի va. calquer.
Նմանաճանութիւն s. calque.
Նմանաձոյլ, ձուլոյ a. cliché; s. cliché; clichage.
Նմանաձուլեմ, եցի va. clicher.
Նմանաձուլիչ s. clicheur.
Նմպնամասն, սին, սունք a. composé de parties semblables.
Նմանայանգ a. consonnant.
Նմանայանգութիւն s. consonnance, terminaison semblable de deux mots.
Նմանապէս adv. semblablement, pareillement, de la même manière, également, de même.
Նմանասեր a. d'un genre semblable.
Նմանավիշտ a. qui éprouve les mêmes peines.
Նմանատիպ V. Նմանակերպ.
Նմանացեղ V. Նմանասեր.
Նմանելի a. imitable.
Նմանիմ V. Նմանիմ.

Նմանեցուցանեմ, ուցի va. assimiler, rendre semblable, égaler, conformer, contrefaire.
Նմանի, նւոյ, նեաց a. semblable, pareil.
Նմանիմ, նեցայ vn. s'assimiler, être semblable, analogue; s'égaler; ressembler; imiter, suivre, marcher sur les traces de qn.; նմանեալ մարդկան, semblable à des hommes, sous la forme humaine; նմանի եԹէ, il semble, il paraît que.
Նմանող, Նմանողակից sm. imitateur; — լինել, imiter. marcher sur les pas de qn.
Նմանողութիւն s. imitation.
Նմանորդ V. Նմանող.
Նմանութիւն sm. ressemblance, conformité, analogie; comparaison, assimilation; imitation; image, portrait, figure, type, forme; ի—, ըստ —ն, à l'imitation de, à l'instar de; բերել զ—, ressembler à.
Նմանօրինակ V. Նոյնօրինակ.
Նմին իրի adv. c'est pourquoi, par conséquent, aussi.
Ննջարան, ագ s. dortoir.
Ննջեմ, եցի vn. dormir, reposer, se coucher, se mettre au lit; fig. décéder, trépasser, mourir; — ընդ կնոջ, coucher avec une femme; — արտաքոյ, découcher; — իՏէր, s'endormir dans le Seigneur; — մանկանց, faire dodo; — ընդ հարս իւր, s'endormir ou dormir avec ses pères.

Ննջեցեալ a. mort, défunt, feu.

Ննջեցուցանեմ, ուցի va. faire dormir, endormir, mettre au lit, coucher, faire coucher.

Ննջիւն V. Ննջ.

Նշաձէթ, ձիթոյ sm. huile d'amande.

Նշան, աց s. signe, marque; enseigne, signal, caractère, symbole; trace, vestige; preuve, indice; signe, prodige, miracle; enseigne, drapeau, bannière, étendard; les fiançailles; symptôme; — տալ, donner signe; faire les fiançailles; — տալ կենաց, donner signe de vie; — առնուլ, coucher en joue.

Նշանաբան s. mot d'ordre.

Նշանաբանութիւն s. signification.

Նշանագիր, գրաց, գրոց s. caractère, lettre; paraphe; secrétaire; mémoire.

Նշանագործ, աց a. qui fait des prodiges; prodigieux.

Նշանագործեմ, եցի va. faire des prodiges.

Նշանագործութիւն s. signe, prodige.

Նշանագրեմ, եցի va. caractériser; écrire, décrire.

Նշանադէտ s. qui observe les signes, devin, aruspice, augure.

Նշանադրոշմ, ից s. lettre, caractère.

Նշանազգեաց. V. Նշանագործ.

Նշանազգեստ V. Գրաստ.

Նշանացոյց a. qui dénonce, qui interprète les signes, les prodiges, devin.

Նշանախեց, ից sm. iota, pointe ou queue d'une lettre, point; ց—, de point en point.

Նշանախնդիր, դրաց a. qui cherche, qui demande des signes, des prodiges.

*Նշանած, ի a. fiancé, fiancée, futur, future.

Նշանակ, աց sm. signe, marque; enseigne, signal, indice, caractère, indication, désignation, expression, preuve; symbole; emblème; signe, prodige; étiquette; enseigne, drapeau, étendard; — ou — յաղթութեան կանգնել, élever un trophée, un monument de victoire.

Նշանականական, Նշանական a. significatif, expressif, symbolique, caractéristique.

Նշանակաւոր a. significatif; remarquable.

Նշանակեմ, եցի va. signifier, indiquer, désigner, signaler, dénoter, notifier, prendre note, assigner, distinguer, exprimer; marquer, noter figurer, représenter; signifier avoir la signification de; — զգինս, coter; — զվաճառս, étiqueter les marchandises.

Նշանակերտ V. Հրաշակերտ.

Նշանակիչ a. significatif.

Նշանակիր s. porte-enseigne, porte-drapeau, porte-étendard.

Նշանակութիւն s., signifi-

cation; *— ունենալ, avoir une signification.

Նշանացեմ, եցի vn. faire signe, faire entendre par des signes.

Նշանացի adv. par signes, par des signes; —խօսել, parler —; — առնել ձեռամբ, faire signe de la main.

Նշանացոյց a. qui fait voir un signe, qui donne un signal.

Նշանաւոր a. marqué d'un signe, signé; insigne, signalé, distingué, remarquable; significatif; symbolique.

Նշանեմ, եցի va. marquer d'un signe, marquer, noter; fiancer, faire les fiançailles.

Նշաջուր, ջրոյ s. amandé.

Նշատերեւ a. en forme des feuilles d'amandier.

Նշաւակ, աց sm. point de mire, but, visée; fig. spectacle, risée; — լինել՝ գտանիլ՝ կալ, être en butte, exposé à, l'objet de, être en proie à, être victime de; — կալ կշտամբանաց, s'exposer aux reproches; — կացուցանել, afficher, exposer; առակ —ի, objet de moquerie, de dérision; առակ —ի կացուցանել, exposer aux risées du peuple, donner en spectacle, afficher, ridiculiser; V. Առակ.

Նշաւակելի a. infâme, honteux.

Նշաւակեմ, եցի va. donner en spectacle, noter d'infamie, exposer à la risée de tout le monde, couvrir de honte, tympaniser, flétrir, ridiculiser, rendre infâme, diffamer, afficher, dévoiler, découvrir.

Նշաւակութիւն s. exposition aux regards du public, risée, honte publique, infamie, ignominie; sobriquet; chose remarquable.

Նշդարենի, նւոյ, նեաց. Նշդարի, րւոյ, րեաց bot. s. charme.

Նշենի, նւոյ. Նշի, շւոյ s. amandier.

Նշիկ s. anat. amygdale.

Նշխար, աց sm. morceau, fragment, débris; reste; dépouille mortelle, restes; — պատարագի, hostie, pain à chanter; — կնքոյ, pain à cacheter; — սրբոց, relique; տուփ նշխարաց, reliquaire.

Նշխարեալ adj. resté; — կեանք իմ, le reste de ma vie.

Նշխարեմ, եցի va. laisser des restes, des morceaux, rester.

Նշկահեմ, եցի va. se lever, se soulever contre, se révolter, s'insurger; rejeter, mépriser; — իներքուստ ձեռին ուրուք, s'affranchir de la domination de qn.

Նշմար. Նշմարանք, նաց s. vestige, trace, indice; —գեղոյ, restes de la beauté.

Նշմարեմ, եցի va. s'apercevoir, entrevoir, remarquer, aviser, observer, voir, regarder.

Նշմարեցուցանեմ, ուցի va. faire apercevoir, faire voir.

Նշող V. Նշոյլ.

Նշողազարդ V. Նշուլազարդ.

Նշողեմ, եցի vn. éclater, briller, luire, reluire, resplendir, étinceler.

Նշոյլ, շուլից s. éclat, reflet, clarté, lueur; — խնդութեան, rayon de joie; աղօտ՝ մռայլ —, faible, sombre lueur.

Նշուլազեղ V. Նշուլափայլ.

Նշուլազարդ adj. éclatant, radieux.

Նշուլափայլ adj. éclatant, brillant, radieux, étincelant.

Նշուլեմ V. Նշողեմ.

Նշտրակ, աց s. lancette; bistouri.

Նոխազ, ազ s. bouc.

Նոխազադէմ a. qui a la figure semblable à un bouc.

Նոխազեան a. de bouc; s. pl. les boucs.

Նոխազերգու V. Ողբերգակ.

Նոխազերգութիւն V. Ողբերգութիւն.

Նոխազոտն s. chèvre-pied.

Նողկ a. dégoûtant.

Նողկամ, ացայ vn. avoir des nausées, se dégoûter, être dégoûté.

Նողկանք, նաց s. dégoût, bondissement ou soulèvement de cœur, nausée.

Նողկացուցանեմ, ուցի va. dégoûter, répugner, faire bondir le cœur.

Նողկացուցիչ a. dégoûtant, nauséabond.

Նողկութիւն V. Նողկանք.

Նողկտամ V. Նողկամ.

Նոճ, ի. Նոճի, ճւոյ s. cyprès; a. de bois de cyprès.

Նոճիաճաճ a. orné, garni de cyprès.

Նոյեան a. de Noé.

Նոյեմբեր, ի s. novembre.

Նոյն, Նորին, Նովին ou Նովիմբ pron. même, lui-même, elle-même; lui, il, elle; le même, la même; a. même, égal, identique; dito, idem; adv. de même, de la même manière, également; ի—, tout de suite; մի եւ նոյն, le même, la même; — գործել, identifier; * — բան է, c'est la même chose, cela revient au même.

Նոյնաբանեմ, եցի vn. redire la même chose, répéter.

Նոյնաբանական a. tautologique.

Նոյնաբանութիւն s. redite, répétition; rhét. tautologie; traduction littérale.

Նոյնաբար V. Նոյնպէս.

Նոյնագոյ V. Համագոյ.

Նոյնազգի V. Համազգի.

Նոյնակերպ V. Միակերպ.

Նոյնաձայնութիւն s. homophonie.

Նոյնաձեւ a. de même forme, uniforme.

Նոյնայանգ, Նոյնայանգութիւն V. Նմանայանգ, Նմանայանգութիւն.

Նոյնանամ, ացայ vn. être identique, s'identifier.

Նոյնանման a. tout à fait le même.

Նոյնանշան V. Համանշան.

Նոյնանուն a. de même nom.
Նոյնասերմն a. qui est de la même semence, parent.
Նոյնացուցանեմ, ուցի va. identifier.
Նոյնքանութիւն V. Նոյնաքանութիւն.
Նոյնզունակ a. même, égal; V. Նոյնպէս.
Նոյն ընդ նոյն. Նոյն ժամայն. Նոյն ճետայն adv. à l'heure même, à l'instant même, à l'instant, aussitôt, sur-le-champ, immédiatement, tout de suite après.
Նոյնութիւն s. identité.
Նոյնչափ adv. autant.
Նոյնպէս adv. de même, de la même manière, pareillement, également, aussi, idem.
Նոյնպիսի, ւոյ, սեաց adj. même, tel, pareil, égal, semblable.
Նոյնքան adv. autant.
Նոյն օրին adv. le même jour, le jour même.
Նոյնօրինակ a. semblable, pareil; V. Նոյնպէս.
Նովանք s. nouvelles mariées.
Նոտար V. Նօտար.
Նոտարացի s. secrétaire; a. notarié.
Նոտրգիր V. Նոտր.
Նոր, ոց a. neuf; nouveau, nouvel, récent, de nouvelle date, moderne, frais; extraordinaire, étrange; neuf, novice; adv. nouvellement, récemment, fraîchement, depuis peu; արիւն Նորոյս Վարդանայ, le sang de ce second Vartan.
Նորա prон. à lui, à elle, lui.
Նորաբան, ից s. néologue, néologiste.
Նորաբանական a. néologique.
Նորաբանութիւն s. néologie; néologisme.
Նորաբեր a. nouvellement apporté, produit; — տօն, le nouvel an.
Նորաբողբոջ, Նորաբոյս a. germé depuis peu de temps, naissant, jeune, tendre.
Նորագին a. nouvellement acheté.
Նորագիւտ a. nouvellement inventé ou trouvé, récent.
Նորագործ a. nouvellement fait, neuf, nouveau; étrange, surprenant.
Նորադարձ V. Նորահաւատ.
Նորազգեստ a. vêtu de neuf.
Նորալուրք s. les nouvelles.
Նորախայծ ողկոյզ, grappe de raisin déjà colorée.
Նորախողխող a. récemment égorgé.
Նորախոց adj. récemment blessé.
Նորածին, Նորածնեալ adj. nouveau-né, renaissant, naissant; նորածնեալ յաւազանէ, nouveau baptisé.
Նորածնիմ, Նորածնանիմ, ծնեալ vn. renaître.
Նորածնութիւն s. renaissance.
Նորակատար a. récemment achevé; jeune.

Նորակարգ a. nouvellement recruté.

Նորակերտ, աց a. nouvellement bâti ; étrange.

Նորանորոգեմ V. Նորոգեմ.

Նորակնիք, կնքի. Նորակնքեալ a. nouveau baptisé.

Նորակտուտ a. tourmenté d'une manière extraordinaire.

Նորակրօն, ից s. novateur ; superstitieux.

Նորակրօնութիւն s. innovation en matière de religion ; superstition.

Նորահաս, ից a. nouvellement arrivé; récemment mûri; jeune.

Նորահասակ a. jeune.

Նորահարսն, սին, սանց s. nouvelle ou jeune épouse, nouvelle mariée.

Նորահաւատ, ից a. nouveau converti, néophyte, prosélyte.

Նորահնար a. nouvellement inventé.

Նորահրաշ V. Նորանշան.

Նորաձայն a. étrange, innové, inouï.

Նորաձայնութիւն s. innovation ; étrangeté.

Նորաձեւ a. innové, nouvellement formé, inventé, à la mode ; —ք, mode, nouveauté ; նորաձեւս առնել՝ ձեւել՝ մուծանել, innover, amener ou introduire une mode.

Նորաձեւեմ, եցի va. innover, introduire des innovations, des nouveautés, une mode.

Նորաձեւիչ sm. novateur, innovateur.

Նորաձեւութիւն s. innovation ; mode, nouveauté.

Նորադաւան, ից sm. protestant.

Նորադաւանութիւն s. protestantisme.

Նորահաշակ a. qui a un nouveau goût, exquis, délicieux.

Նորամարզ V. Նորավարժ.

Նորամուտ a. entré nouvellement, nouveau, novice ; —ք, innovation ; նորամուտս նորոգել, faire des innovations.

Նորամսութիւն s. le premier jour du mois.

Նորայ, ոց. Նորային, յնոց a. le sien, la sienne.

Նորանամ, ացայ va. devenir neuf, se renouveler.

Նորանկար a. nouvellement peint.

Նորանշան a. prodigieux, étonnant, étrange, paradoxal, monstrueux, phénoménal, curieux ; — իրք, phénomène.

Նորանշոյլ a. d'un nouvel éclat, éclatant ; ընդ այգն —, aux premières lueurs de l'aurore.

Նորանոր a. tout récent, tout nouveau ; adv. à neuf ; —ք, les modes.

Նորաշէն V. Նորակերտ.

Նորապարգեւ adj. donné, accordé récemment.

Նորապէս adv. nouvellement, récemment.

Նորապսակ a. nouvellement couronné.

Նորասէր a. qui aime la nouveauté.

Նորասիրութիւն s. amour de la nouveauté.

Նորասնունդ a. nourri récemment, jeune.

Նորաստեղծ, ից a. créé, inventé nouvellement.

Նորաստեղծեմ, եցի va. créer ou faire nouvellement, recréer; —իմ vn. être recréé, renaître.

Նորասքանչ V. Նորանշան.

Նորավարժ, ից a. nouvellement exercé, inexpérimenté, nouveau, novice.

Նորատեսակ a. d'un nouveau genre.

Նորատեսիլ a. paradoxal, étrange, extraordinaire, prodigieux.

Նորատիք a. d'un âge tendre, jeune.

Նորատունկ, տնկոց a. nouvellement planté; sm. jeune plante; néophyte.

Նորատուր a. nouvellement donné, récent, nouveau.

Նորարար a. nouvellement fait.

Նորացոյց V. Նորանշան.

Նորացուցանեմ, ուցի va. rendre nouveau, renouveler.

Նորափառ, աց. Նորափառախնդիր a. qui a des idées vaines, vaniteux.

Նորափառութիւն s. vaine gloire, vanité.

Նորափետուր a. à qui ont poussé de nouvelles plumes, mué; fig. rajeuni, renouvelé; — զարդարիլ, muer, se remplumer; fig. rajeunir, se renouveler.

Նորափթիթ a. récemment fleuri, fraîchement éclos, épanoui; — ծաղիկ, tendre fleur; — գեղ գարնայնոյ, les grâces naissantes du printemps.

Նորափոր a. nouvellement creusé.

Նորաքաղաք, աց s. nouvelle ville, ville renaissante.

Նորեկ, աց a. nouveau venu, nouvel arrivé, novice.

Նորընծայ, ից a. nouvellement offert; qui débute, nouveau; novice, qui a pris nouvellement l'habit religieux.

Նորընծայարան, ի s. noviciat (la maison).

Նորընծայութիւն s. début; noviciat (l'état).

Նորի, րւոյ, րեաց s. précoce, hatif; —ք s. prémices.

Նորիմաց V. Նորաճնար.

Նորին V. Նորա.

Նորոգ V. Նոր.

Նորոգագործ V. Նորագործ.

Նորոգայարդար a. renouvelé, remis à neuf.

Նորոգապէս V. Նոր adv.

Նորոգատուր V. Նորատուր.

Նորոգեմ, եցի va. renouveler, refaire ou remettre à neuf, raccommoder, restaurer, rafraîchir; régénérer, réformer; fig. renouveler, rajeunir; — զնկար, restaurer, rafraîchir un tableau; —իմ vn. se renouveler, se refaire, se raccommoder; se régénérer; fig. se rajeunir, renaître.

Նորոգիչ sm. réformateur, novateur, régénérateur.

Նորոգութիւն, Նորոգումն s. renouvellement, restauration, réparation, raccommodage; réforme, réformation; renaissance, régénération; rajeunissement.

Նորութիւն sm. nouveauté; innovation.

Նորուն V. Նորա.

Նորօրինակ a. sans exemple, étrange, nouveau, extraordinaire, paradoxal.

Նոցա pron. à eux, à elles, leur.

Նոցայք, այոց. Նոցայինք, այնոց s. les leurs.

Նու, ոց, աց, Նուանք s. belle-fille, bru; belle-sœur, femme du frère.

Նուագ, աց s. chant, chanson, air, accords; sonnet; coupe, tasse; fois, coup; իբազում —ս, ինուագս բազումս, յայլ եւ այլ —ս, plus d'une fois, plusieurs fois, à diverses reprises; լուր զայս վերջին —, écoutez pour la dernière fois; իմիում նուագի, dans une seule fois, une fois; վասն միոյ —ի, pour une fois; իմիում նուագի, une fois; tout d'un coup; յառաջնում —ի, la première fois; առ մի —, pour une fois; զմի — եւս, encore une fois; յերկարագոյն —օք, longuement; longtemps.

Նուագաթուղթ, թղթոյ sm. papier de musique.

Նուագախաղ, ի s. mélodrame.

Նուագածու, աց s. musicien.

Նուագակից s. accompagnateur; — լինել, accompagner.

Նուագակցեմ, եցի va. accompagner.

Նուագակցութիւն s. accompagnement.

Նուագահանդէս s. concert.

Նուագամոլ s. mélomane.

Նուագամոլութիւն s. mélomanie.

Նուագայարդար, ից s. compositeur de musique.

Նուագարան, աց s. instrument de musique.

Նուագաւոր, աց a. musical, harmonieux, cadencé.

Նուագեմ, եցի va. chanter; entonner, donner le ton; jouer d'un instrument, exécuter; — ընդ ումեք, accompagner qn.; — սրնգաւ, jouer de la flûte; — ձեռամբ զքնար, toucher la harpe de sa main, jouer sur la harpe.

Նուագերգութիւն s. chant, mélodie, chant mélodieux.

Նուազ, ից a. peu considérable, peu nombreux, moindre, petit, minime, faible; bas, vil; adv. moins, peu; ոչ ինչ —, pas moins, guère moins; ոչ ինչ — քան զնա հեղաք եւ մեք արտասուս, nous ne pleurions pas moins que lui.

Նուազական a. diminutif, décroissant.

Նուազանամ V. Նուազիմ.

Նուազեմ, եցի. Նուազեցուցանեմ, ուցի va. diminuer, amoindrir, déduire, rabattre, retrancher, rapetisser; rabais

ser, ravaler, avilir, atténuer, exténuer; s'éclipser; — զգինս, diminuer, baisser le prix; — զարժէս, diminuer la valeur, déprécier.

Նուազիմ, զեցայ vn. diminuer, s'amoindrir, s'atténuer, décroître, manquer; s'éclipser.

Նուազութիւն, **Նուազումն** s. diminution, amoindrissement, décroissement, décharge; rareté; rabais, abaissement, déduction; défaut, manque; déclin, décours, éclipse; — գնոյ, rabais, baisse; — արեան, appauvrissement du sang.

Նուաղ, ից a. languissant, langoureux, faible; moindre; obscur, sombre; — ձայնիւ, d'une voix languissante, défaillante.

Նուաղեմ, եցի. **Նուաղեցուցանեմ**, ուցի va. faire languir, affaiblir, atténuer, exténuer, faire tomber en défaillance; obscurcir, éclipser; diminuer.

Նուաղիմ, ղեցայ vn. défaillir, s'évanouir, se trouver mal, tomber en défaillance, en pamoison, se sentir défaillir ou s'affaiblir, perdre ses sens, pâmer, se pâmer; languir, s'affaiblir, s'exténuer; diminuer, s'amoindrir; s'obscurcir, s'éclipser; Նուաղէր սիրտ իմ, mon cœur tombait en défaillance, le cœur me manquait; Նուաղեալ անկանել, tomber sans connaissance; Նուաղեալ ձայն, voix défaillante.

Նուաղութիւն, **Նուաղումն** s. évanouissement, défaillance, langueur, pamoison, faiblesse, exténuation, syncope; diminution, amoindrissement.

Նուաճեմ, եցի va. dompter, subjuguer, réduire, vaincre, assujettir, soumettre; յինքն —, s'emparer, envahir; — զինուք, conquérir; — զզայրոյթ, maîtriser, réprimer son ressentiment, sa colère.

Նուաճող s. dompteur.

Նուաճութիւն s. assujettissement, asservissement; soumission, obéissance.

Նուամ, ացի vn. miauler.

Նուաստ, ից a. bas, humble, vil, inférieur, rampant, plat, servile.

Նուաստաբար adv. bassement, humblement.

Նուաստախոհ a. qui a des sentiments peu élevés, esprit bas, vil, mesquin; — միտք, petits esprits.

Նուաստական V. **Նուաստ**.

Նուաստանամ, ացայ va. s'abaisser, s'humilier, s'avilir, se ravaler, se dégrader.

Նուաստացուցանեմ, ուցի va. abaisser, rabaisser, humilier, avilir, ravaler, dégrader; — զանձն, s'avilir, s'abaisser.

Նուաստացուցիչ adj. avilissant.

Նուաստութիւն s. bassesse, abaissement, avilissement, humiliation, abjection, dégradation, vileté, infériorité; առանց —ն, sans bassesse.

Նուաբտակ, աց s. bot. passerage.

Նուաբտան, աց s. couverture.

Նուէր, ուիրաց sm. offre, offrande, présent, oblation: libation; —ք, libéralité; աբգաղիր —, ex-voto.

Նուիկ, Նուիճ s. serpentaire, serpentine, estragon.

Նուիրաբեր, աց a. qui porte, qui fait une offrande.

Նուիրագործեմ, եցի va. sacrifier, célébrer les mystères; consacrer, offrir.

Նուիրագործութիւն s. célébration des mystères, sacrifice, oblation.

Նուիրակ, աց s. huissier, lecteur; nonce; député.

Նուիրական a. sacré, saint; — եւ փրկաւէտ երգ, toast.

Նուիրակապետ, աց s. chef des huissiers.

Նուիրակութիւն s. nonciature; députation.

Նուիրան, աց s. temple; sacre; sacrifice.

Նուիրանոց, աց s. coupe à libations.

Նուիրատու, աց s. celui qui fait une offrande.

Նուիրեմ, եցի va. offrir, présenter, dédier, sacrer; consacrer, inaugurer; vouer, dévouer; faire des libations; — զանձն, se dévouer, se sacrifier; — յուսումն զժամանակն, consacrer tout son temps à l'étude.

Նուիրումն sm. offre, oblation; dédicace, inauguration; — անձին, dévouement.

Նուկի V. Ունկի.

Նունուփար s. bot. nénufar.

Նուշ, Նշոյ s. amande.

Նուռն, Նռան s. grenade; Նռան ծաղիկ, fleur du grenadier sauvage.

Նուս V. Նուք.

Նուսխայ, ի s. recette, ordonnance, formule.

Նուրբ, Նրբից a. fin, mince, subtil, délié, ténu, grêle, chétif; étroit.

Նուք s. dos; ինուս երիվարի ելանել նստել, monter à cheval.

Նոքա, Նոքին pron. eux, ils, elles.

Նպաստ, ից s. secours, assistance, subside, subvention, faveur; ի—, à l'appui, en faveur; — լինել V. Նպաստեմ.

Նպաստամատոյց, Նպաստաւոր a. qui aide, favorable, propice; — լինել V. Նպաստեմ.

Նպաստաւորեմ V. Նպաստեմ.

Նպաստաւորութիւն V. Նըպաստ.

Նպաստեմ, եցի vn. contribuer, seconder, secourir, favoriser, aider, subvenir, se prêter, prêter son concours.

Նպատակ, աց s. but, point de mire, visée; fig. but, point de mire, fin, intention, vue, objet; ուղղել ի—, coucher en joue, viser; հարկանել ի—, frapper au but, atteindre le but; կէտ —ի, point de mire.

Նպար, Նպարակ, աց sm. provision, approvisionnement.

Նպարակաւոր a. chargé de provisions.

Նպարակեմ, եցի va. approvisionner.

Նռնագոյն a. de couleur grenat, grenat; s. couleur grenat; — Թաւիշ, velours grenat.

Նռնաձեւ, իզ a. en forme de grenade.

Նռնաքար,ի s. min. grenat.

Նռնենի, նւոյ, նեաց s. bot. grenadier.

Նսեհ, Նսիհ s. destinée, fortune, bonheur; վեհ —, haute destinée; վայելել ի—, être dans la prospérité.

Նսեմ, Նսեմական, աց adj. sombre, foncé, obscur.

Նսեմանամ, ացայ vn. s'obscurcir, devenir obscur, se rembrunir, s'éclipser, se ternir.

Նսեմաստուեր a. obscur; — անտառ, sombre forêt.

Նսեմացուցանեմ, ուցի va. obscurcir, éclipser, offusquer, ternir.

Նսեմութիւն s. obscurité, ternissure.

Նստական V. Նստողական.

Նստարան, աց sm. banc, banquette.

Նստիմ, տայ, նիստ vn. s'asseoir; se placer, prendre place, siéger; résider, demeurer; — խնդան, se mettre à table; — յաթոռ իպէտս, satisfaire ses besoins.

Նստող sm. celui qui est assis.

Նստողական a. sédentaire; — կեանք, vie sédentaire.

Նստոյ տեղի s. fondement, cul, anus.

Նստուցանեմ, ուցի va. asseoir, faire asseoir, placer; pousser, enfoncer.

Նրան, աց s. sabre.

Նրբաբան a. subtil, argutieux.

Նրբաբանեմ, եցի vn. subtiliser, raffiner, se servir de subtilités.

Նրբաբանութիւն s. subtilité, argutie.

Նրբաբար adv. subtilement.

Նրբալեզու a. qui bégaye.

Նրբախնդիր a. pointilleux, minutieux.

Նրբախօս V. Նրբաբան.

Նրբակաճան V. Նրբուղի.

Նրբական V. Նուրբ.

Նրբակտաւ s. batiste.

Նրբաճայեաց adj. subtil, perçant.

Նրբաձայն, իզ a. qui a la voix grêle.

Նրբամարմին a. qui a le corps mince, grêle, fluet.

Նրբամիտ a. esprit délié, subtil, pénétrant, fin, sagace.

Նրբամտութիւն s. finesse d'esprit, subtilité, sagacité.

Նրբացուցանեմ, ուցի va. subtiliser, rendre subtil, délié, amincir, affiner.

Նրբաւարտ a. terminé en pointe, pointu.

Նրբափողոց, աց s. ruelle.

Նրբաքիթ a. qui a le nez mince.

Նրբեմ V. Նրբացուցանեմ.

Նրբին a. subtil, fin.

Նրբոստ a. qui a des branches minces.

Նրբութիւն sm. subtilité, finesse, ténuité.

Նրբուղի s. chemin étroit, sentier.

Նքթեմ, եցի. Նքթիմ, եցայ vn. être affamé, mourant de faim, mourir de faim.

Նքողիմ, ղեցայ vn. languir, s'exténuer, défaillir.

Նքողումն s. atonie, langueur.

Նքոյր, քուրի s. crible.

Նօթ, ի s. minium.

Նօթի, թւոյ a. qui a faim, qui est à jeun; adv. à jeun, sans manger.

Նօթճեմ, եցի va. annoncer.

Նօթութիւն s. faim.

Նօսր, etc. V. Անօսր, etc.

Նօսրասանտր s. démêloir.

Նօտար, աց s. notaire.

Նօտարեմ, եցի va. écrire en cursive; notarier.

Նօտարութիւն s. notariat.

Նօտոս, աց s. autan, vent du midi.

Նօտր ou Նօտր գիր sm. cursive.

Շ (cha) s. vingt-troisième lettre de l'alphabet et dix-huitième des cousonnes; cinq cents, cinq-centième.

Շաբաթ, ու s. sabbat, jour du repos, repos; samedi; semaine.

Շաբաթագիր, գրոյ s. journal hebdomadaire.

Շաբաթախտիր V. **Շաբաթապահ**.

Շաբաթական a. sabbatique; hebdomadaire.

Շաբաթամուտ, մտից sm. semainier, hebdomadier; la veille de samedi.

Շաբաթանամ, ացայ vn. observer le sabbat, se reposer, cesser de travailler, chômer.

Շաբաթապահ a. qui observe le sabbat.

Շաբաթապահք, հոց s. jeûne ou maigre pendant une semaine.

Շաբաթացուցանեմ, ուցի va. faire observer le sabbat, faire reposer, faire cesser le travail, faire chômer.

Շաբաթաւոր a. semainier, hebdomadaire.

Շաբաթումն s. observation du sabbat, repos, cessation de travail, chômage, vacance.

Շաբաթչէք s. semaine (salaire d'une —); — **առնուլ**, recevoir sa semaine.

Շագանակ, աց s. châtaigne; — **մեծ**, marron.

Շագանակագոյն a. châtain.

Շագանակավաճառ, աց s. marchand de marrons.

Շագանակենի, նւոյ s. châtaignier, marronnier.

Շալակ, ի s. dos, épaule; charge; brancard, civière; sac.

Շալակեմ, եցի va. mettre sur le dos, charger; vn. mettre sur son dos, se charger.

Շալկոց, ի s. crochet.

Շականչեմ, եցի vn. dresser les oreilles, prêter les oreilles.

′ **Շահ**, ուց ou ից sm. gain, profit, intérêt; bénéfice, avantage, utilité; ի— ածել ou *շահու դնել, placer l'argent; իշահս հարկանիլ, շահու զհետ լինել՝ կրթիլ՝ մտանել, s'adonner au gain, être avide de gain; շահս առնել, danser; —բերել, rapporter, produire, donner du profit; քառնալ զ— ուրուք, rogner les ongles à qn., diminuer son profit; ոչ առ ի— ինչ օգտի բարբառիմ, je parle sans intérêt; —ք օգտութեանց, utilités; ի—օգտի իւրեանց, pour leur profit, pour leur bien.

Շահաբեր a. qui procure du gain, lucratif, utile.

Շահադէտ s. spéculateur.

Շահադիտեմ, եցի vn. spéculer.

Շահադիտութիւն s. spéculation.

Շահախնդիր a. intéressé, vénal.

Շահական, **Շահականացու** a. lucratif, utile.

Շահակից s. associé de gain.

Շահապ, **Շահապետ**, աց s. maire, gouverneur, seigneur, chef; — անտառաց, sylvain; — դաշտաց, dryade.

Շահասէր a. qui aime le gain, avide de gain, intéressé, vénal.

Շահասիրութիւն s. amour du gain, intérêt, vénalité, cupidité.

Շահասպրամ, ի sm. bot. basilic.

Շահաստան, ի s. ville capitale, commerçante.

Շահավաճառ, աց s. commerce, trafic, négoce; négociant, commerçant.

Շահավաճառութիւն s. commerce, négoce, trafic.

Շահատակ V. **Նահատակ**.

Շահատակեմ, եցի. **Շահատակիմ**, կեցայ vn. assaillir, attaquer valeureusement, s'élancer intrépidement sur, braver.

Շահատակիւն, **Շահատակութիւն** s. attaque, assaut; expédition, conquête, haut fait, exploit, valeur, succès, victoire.

Շահարար V. **Շահաւոր**.

Շահարունի, նւոյ s. sylvain.

Շահաւետիմ V. **Շահիմ**.

Շահաւէտ, աւէտաց. **Շահաւոր**, աց a. lucratif, avantageux, intéressant, favorable.

Շահաւորիմ V. **Շահաւետիմ**

Շահաւորութիւն s. profit, gain, avantage.

Շահեկան, **Շահեկանացու** V. **Շահական**.

Շահեկանութիւն V. **Շայեկա-նութիւն**.

Շահեստ, ից V. **Շահ**.

Շահեցուցանեմ, ուցի va. faire gagner ou profiter; placer de l'argent.

Շահէն, ենի s. épervier.

Շահիմ, հեցայ vn. gagner, profiter de, s'acquérir, tirer profit ou parti de, trouver son compte, remporter; — զկեանս անձին, gagner sa vie; — զմահ, échapper à la mort, l'échapper belle; բազում —, gagner beaucoup, gros; չիք ինչ շահելոյ, il n'y a rien à gagner.

Շահոքրամ s. bot. giroflée.

Շաղ V. **Յօղ**.

Շաղախ, ոյ s. ciment, mortier; a. barbouillé, souillé.

Շաղախեմ, եցի va. cimenter; barbouiller, souiller, contaminer, salir; —իմ vn. se barbouiller, se souiller, s'imprégner ou s'imbiber de.

Շաղախումն s. contamination, souillure.

Շաղակրատ, աց sm. charlatan.

Շաղակրատանք, նաց sm. charlatanerie.

Շաղակրատեմ, եցի vn. charlatanner, faire du charlatanisme.

Շաղակրատութիւն s. charlatanisme.

Շաղաղեմ, եցի va. bégayer.

Շաղամաթ, ի s. fil; ficelle.

Շաղաշարութիւն s. entrelacement.

Շաղաշոյտ, **Շաղաշուտ** a. chenapan, faquin, ganache, goujat, gamin, effronté.

Շաղաշտութիւն s. faquinerie, gaminerie, effronterie.

Շաղապ V. **Շաղափ**.

Շաղապատ a. entortillé, entrelacé.

Շաղապատեմ, եցի va. entortiller, entrelacer, impliquer; —իմ vn. s'entortiller, s'entrelacer.

Շաղաւաշուրթն, շրթանց a. trompeur, rusé; bavard, hâbleur, flatteur.

Շաղափ s. tarière, foret.

Շաղափիկ s. vrille.

Շաղգամ V. **Շողգամ**.

Շաղեմ, եցի va. envelopper, impliquer, engager dans, enlacer; pétrir; détremper, délayer, mouiller; barbouiller, souiller.

Շաղիղ, ղղոյ s. charogne, cadavre.

Շաղկապ, աց s. jonction, lien; gram. conjonction.

Շաղկապեմ, եցի va. attacher ensemble, conjoindre.

Շաղկապումն s. jonction, enchaînement.

Շաղղակեր, աց a. carnivore, carnassier.

Շաղղակերութիւն s. action de manger des charognes, de la viande.

Շաղղայեղց a. corpulent, gros et gras.

Շաղփաբանութիւն V. **Շաղ-փաղփանք**.

Շաղփաղփ, ից a. hâbleur, jaseur, babillard, caqueteur,

discoureur, brailleur, bavard, cancanier.

Շաղփաղփանք, նաց s. hâblerie, bavardage, babil, babillage, caquet, caqueterie. jaserie, cancan; rêverie, délire, niaiseries, balivernes.

Շաղփաղփեմ, եցի vn. habler, bavarder, babiller, jaboter, jaser, caqueter, faire des cancans; dire des niaiseries, des balivernes, parler à tort et à travers.

Շաղփաղփութիւն V. Շաղփաղփանք.

Շամանդաղ, աց, ից sm. brouillard, obscurité.

Շամբ, ից s. cannaie.

Շամբակ, ի s. petite cannaie.

Շամբշաբար adv. follement.

Շամբշական V. Շամբուշ.

Շամբշանք V. Շամբշութիւն.

Շամբշիմ, շեցայ vn. être ou devenir fou, furieux, passionné; fig. être agité de violents transports, être fou d'amour, aimer à la folie, éperdument, être transporté d'une grande passion, s'affoler; — ի կանայս, courtiser les femmes.

Շամբշութիւն s. folie, fureur, manie; fig. fureur, passion violente, amour, transport, galanterie: débauche.

Շամբուշ adj. fou, furieux; fig. fou, transporté, maniaque, passionné, amoureux, galant.

Շամբուտ adj. plein de roseaux; s. cannaie.

Շամշիմ V. Շամբշիմ.

Շամշտութիւն s. tétrarchie,

Շամրիա. Շամրացի, ցւոյ s. Samaritain.

Շամփուր, փրոյ s. broche; ի— հարկանեմ V. Շամփրեմ.

Շամփրակ, ի sm. diadème, couronne.

Շամփրեմ, եցի va. embrocher, mettre à la broche; embrocher, percer, transpercer.

Շայեկան, etc. V. Շահեկան.

Շանաբարոյ a. cynique.

Շանագլուխ, լխոյ, լխի adj. qui a une tête de chien; s. tête de chien; zool. cynocéphalon, babouin.

Շանազգեաց a. cynique.

Շանակնճիթ adj. qui a un museau de chien.

Շանաձուկն, ձկան s. requin, squale.

Շանաճանճ, ից s. tique.

Շանդ V. Շանթ.

Շանթ, ից sm. foudre, tonnerre; étincelle; fer rouge; lingot; —ս, արձակել, lancer la foudre; հրավառ՝ բոցավառ՝ կայծականացայտ՝ հրաշունչ՝ սպառնալից՝ ահաւոր —, la foudre ardente ou embrasée, enflammée, étincelante, fumante, menaçante, terrible.

Շանթակէզ առնեմ va. brûler par la foudre, foudroyer.

Շանթահար, աց a. foudroyé, adv. par un coup de tonnerre; — լինել, être foudroyé, frappé de la foudre; — առնել V. Շանթահարեմ.

Շանթահարեմ, եցի va. frapper de la foudre, foudroyer.

Շանթահարութիւն sm. fou-

droiement, coup de tonnerre.

Շանթաձիգ V. Շանթընկէց.

Շանթարգել sm. paratonnerre.

Շանթաքար, ի s. aérolithe.

Շանթընկէց a. foudroyant, fulminant ; — բարկութիւն, foudre, tonnerre.

Շանթի V. Շանթ.

Շանթիչ V. Շանթընկէց.

Շանի s. nourriture de chien.

Շանախուր s. prix d'un chien; salaire d'une prostituée.

Շանփին, նի s. excrément de chien.

Շաչեմ, եցի vn. claquer, craquer, craqueter, croquer, cliqueter ; petiller, éclater, crépiter, bruire.

Շաչիւն, Շաչումն s. craquement, éclat, petillement, explosion, fracas ; — զինուց, cliquetis, bruit des armes.

Շապիկ, պկաց s. chemise ; — քահանայական, aube ; — փոխել, changer de chemise.

Շառագոյն a. roux, rousseau.

Շառագունանք V. Շառագունութիւն.

Շառագունացուցանեմ, Շառագունեցուցանեմ, ուցի va. faire rougir de honte, rendre confus, confondre.

Շառագունեմ, եցի. Շառագունիմ, նեցայ vn. rougir, rougir de honte, de pudeur.

Շառագունութիւն s. rouge, rougeur ; fig. rouge, pudeur, honte.

Շառայլք V. Նշոյլ.

Շառաշիղ s. grand morceau de sel gemme ; — սառի, glaçon, banc de glace.

Շառաչ V. Շաչիւն.

Շառաչեմ V. Շաչեմ.

Շառաչիւն, Շառաչուկ, Շառաչումն V. Շաչիւն.

Շառաւեղ, Շառաւիղ, աց s. rejeton, pousse, bourgeon, jet, surgeon, drageon ; fig. rejeton, enfant, descendant ; trait de lumière, rayon ; — անուոյ, rais ; — օրհնութեան, germe béni ; — դառնութեան, rejeton maudit.

Շառաւիղեմ, եցի va. pousser, rejeter, produire des bourgeons, germer, drageonner.

Շառաւն, ուռք s. chameau.

Շառափնատ V. Կառափնատ.

Շատ, ից a. beaucoup de, plusieurs, un grand nombre de, nombreux, copieux, considérable, en grande quantité ; adv. beaucoup, longtemps ; assez, suffisamment ; — ասել, être content ; — է, c'est assez, assez, cela suffit ; — է այդ, cela suffit, c'est bon ; — է զի՝ il suffit que, pourvu que ; — իսկ, suffisamment ; փոքր ի շատէ, un peu, en partie ; plus ou moins ; — կամ սակաւ, plus ou moins ; շատք յայնցանէ, la plupart d'eux ; — համարիլ, se contenter de.

Շատաբանութիւն s. parlage, verbiage, loquacité, verbosité.

Շատախօս, աց a. qui parle beaucoup, bavard, grand par-

leur, babillard, jaseur, moulin à paroles; լինել V. Շատխօսեմ.

Շատախօսութիւն s. bavardage, jaserie, verbiage, verbosité, babil, loquacité.

Շատակեաց V. Երկարակեաց.

Շատակեր, աց a. qui mange beaucoup, grand mangeur, glouton, vorace.

Շատակերութիւն V. Շատկերութիւն.

Շատահանճար adj. qui a beaucoup de talent, très-intelligent.

Շատահմտութիւն s. grande érudition, grande expérience.

Շատանամ, ացայ vn. se contenter de; suffire; se multiplier, s'augmenter; — սակաւուք՝ փոքու, se contenter de peu.

Շատաշուրջ, Շատաշրջիկ a. s. rôdeur, flâneur; — լինել, rôder, flâner.

Շատաշրջութիւն s. flânerie.

Շատաջուր adj. qui a beaucoup d'eau, abondant en eau.

Շատացուցանեմ, ուցի va. augmenter, multiplier.

Շատերդում adj. qui fait beaucoup de serments, jureur.

Շատիմ V. Շատանամ.

Շատխօս V. Շատախօս.

Շատխօսեմ, եցի vn. parler beaucoup, bavarder, jaser, babiller, caqueter.

Շատխօսութիւն V. Շատախօսութիւն.

Շատկերութիւն s. voracité, gloutonnerie.

***Շատնամ, ցայ** vn. se multiplier, s'augmenter.

Շատութիւն s. grande quantité, grand nombre, abondance, multitude.

Շատրուան, աց sm. tente, pavillon, marquise; jet d'eau.

***Շատցնեմ** V. Շատացուցանեմ.

***Շատւոր** a. nombreux.

Շար, ից s. fil, file, enfilade, série, suite, rangée, rang, ordre, chaîne; composition; siècle époque; crêpe; իշարի արկանել, enfiler, ranger; իշարի հարկանել, enregistrer.

Շարաբ, ոյ, ի s. sirop.

Շարաբանեմ, եցի vn. faire un syllogisme.

Շարաբանութիւն s. syllogisme.

Ոտն, տին, տամբ, ոտք sm. pied; pied (d'une montagne); pied (mesure des vers); pied (mesure de longueur); յոտից գլուխ, յոտից մինչեւ գլուխ, des pieds à la tête, depuis la tête jusqu'aux pieds, de pied en cap; ոտն ոտն, ոտն առ ոտն, pied à pied, pas à pas; petit à petit; յոտս՝ առ ոտս, aux pieds; auprès, chez; յոտն իմատին յառնել, se dresser sur le bout des pieds, se hausser ou marcher sur la pointe du pied, des pieds; անկանել յոտս ուրուք ou * մէկուն ոտքն իյնալ, se jeter, se prosterner ou tomber aux pieds, aux genoux de qn.; ոտն հարկանել, առ ոտն հարկանել՝ կոխել, ընդ ոտն հարկանել, fouler aux pieds, mettre sous les pieds, mépriser; ոտն յոտանէ փոխել, faire un pas, marcher; զոտս ամբարձեալ փախչել, lâcher pied, filer; յոտն կալ, se tenir debout; se lever, se dresser, s'élever; կալ իվերայ ոտից, se tenir debout; յոտին կալ ou * ոտքի վերայ կենալ, se tenir sur ses pieds; se tenir debout, être sur pied; se soutenir, se maintenir, subsister; ոտն զոտամբ արկանել ou ոտք ոտքի վերայ դնել, mettre un pied sur l'autre; զոտսն հարկանել առ. բարկութեան, frapper du pied, piétiner de colère; ոտն ընդ ոտին, pied contre pied; յոտին ունել, tenir debout, soutenir; յոտն կանգնիլ, se lever, s'élever, se remuer; * ոտքի վերայ լինել, être sur pied; * մէկուն ոտքը սահեցնել, couper l'herbe sous les pieds de qn., le supplanter; * ոտքը կտրել, empêcher de venir, de fréquenter; * ոտքը դնել, mettre ses pieds; * բոբիկ ոտքով քալել, marcher pieds nus, nu-pieds; * ոտքով զարնել, donner un coup de pied; * ոտքի վերայ նկարել, peindre qn. en pied; բոլոր քաղաքն ոտք ելաւ. toute la ville est sur pied; փոքրիկ՝ մեծ՝ լայն՝ երկայն՝ տձեւ ոտք, petit, grand, large, long, difforme pied.

Ոտնալուայ, ի s. lavement des pieds, pédiluve, bain de pieds; —ք, bain de pieds, baignoire.

Ոտնակապ, աց s. entraves; պնդել յոտնակապս, mettre des entraves, entraver.

Ոտնակապեմ, եցի va. entraver.

Ոտնակառեմ, եցի vn. s'arrêter, être embarrassé.

Ոտնակացութիւն s. acti de rester debout.

Ոտնակոխք sm. action de

fouler sous les pieds; յոտնակոխս ընկենուլ, jeter sous les pieds.

Ոտնահար V. Ոտնհար.

Ոտնահարութիւն V. Ոտնհարութիւն.

Ոտնահետ, ից s. trace des pas, marque du pied.

Ոտնաձայն, ից s. bruit des pieds; — անձրեւի, bruit de pluie.

Ոտնաման s. souliers.

Ոտնաչափ, ի s. pied (mesure).

Ոտնասահ a. glissant.

Ոտնասահեմ, եցի vn. glisser, faire un faux pas, broncher.

Ոտնասահութիւն s. glissade, faux pas; méd. goutte.

Ոտնատեղիք, ղեաց s. lieu pour placer les pieds, place des pieds.

Ոտնատրոփ a. qui frappe avec ses pieds; — լինել, frapper du pied.

Ոտնացաւութիւն s. goutte aux pieds.

Ոտնաւոր a. qui reste à pied; qui a des pieds.

Ոտնափոխ լինիմ vn. faire un pas, marcher.

Ոտնբեկ adj. qui a le pied cassé.

Ոտնխիթի adv. tout doucement en introduisant les pieds.

Ոտնկայ s. place du pied; a. qui reste debout, domestique; յոտնկայս, debout.

Ոտնկապ V. Ոտնակապ.

Ոտնկելիք, լեաց s. l'action de rester debout; marchepied; բառնալ զթշնամին յոտնկելեաց, enlever de terre son ennemi; անկանել յոտնկելեաց ի գետին, tomber étendu sur la terre; կործանել յոտնկելեաց, renverser, ébranler.

Ոտնկոխ s. place pour poser les pieds.

Ոտնհար, աց a. qui se réjouit du mal d'autrui, malveillant; — լինել, se réjouir du mal d'autrui, aux dépens de, insulter, mépriser, prendre plaisir à se jouer de qn., être malveillant; donner des coups de pied; — լինել Թշուառութեան ուրուք, insulter qn. dans son malheur.

Ոտնհարեմ V. Ոտնհար.

Ոտնհարութիւն s. malveillance, insulte; coup de pied.

Ոտնփոխ V. Ոտնափոխ.

Ոտնքայլեմ, եցի vn. faire un pas, marcher.

Ոտք V. Ոտն.

Որ, ոյ, ով pron. qui, quel, quelle, lequel, laquelle; lesquels, lesquelles; celui qui, ce qui, ce que; այրն որ գայ, l'homme qui vient; զոր դու գտեր, celui que tu as trouvé; եւ որ չար եւս է, որ չար քան զամենայն է, ce qui est le pire de tout; չգիտէ զոր գործէն, il ne sait ce qu'il fait; յորմէ, d'où; որ զինչ եւ իցէ, quoi qu'il en soit; որ եւ իցէ, qui que ce soit, quoi que ce soit; որ ինչ, ce qui, tout ce qui; որ միանգամ, որ ոք, qui, quiconque, celui qui, celle

որք միանգամ, tous ceux qui.

Ո՞ր qui? lequel? laquelle; որո՞վ իշխանութեամբ, par quelle autorité? որո՞վ իւիք, par quoi? յո՞ր վայր, jusqu'où?

Որ conj. que; որ զի, afin que; puisque.

Որակ, աց s. qualité.

Որակական a. qualitatif.

Որականամ, ացայ vn. être qualifié, se qualifier.

Որակացուցանեմ, ուցի va. qualifier.

Որակութիւն s. qualité.

Որայ, ոյ sm. botte de blé, gerbe; — կապել, gerber, enjaveler.

Որբ, ոց a. orphelin, orpheline; — մնալ իհօրէ՝ իմօրէ, perdre son père, sa mère; — մնալ՝ յումեքէ, être privé de qn.

Որբանամ, ացայ vn. devenir, être orphelin.

Որբանոց, աց s. orphelinat.

Որբասէր adj. qui aime les orphelins.

Որբար V. Որպէս.

Որբութիւն s. état, position d'un orphelin.

Որգոն V. Որպէս.

Որգունակ adv. comme.

Որդ, աց s. V. Ուրդ.

* Որդ V. Որդն.

Որդան, Որդան կարմիր s. cochenille; kermès, cramoisi.

Որդանենի, նւոյ s. nopal.

Որդեակ, դեկաց sm. petit enfant, fils ou fille en bas âge; — իմ, mon fils, mon enfant.

Որդեբար V. Որդիաբար.

Որդեգիր, գրաց s. fils adoptif, fille adoptive.

Որդեգրական a. adoptif.

Որդեգրեմ, եցի va. adopter, prendre pour fils; adopter, affilier.

Որդեգրութիւն s. adoption; affiliation.

Որդեծնութիւն s. procréation d'enfants, enfantement.

Որդեկեր a. qui mange ses enfants.

Որդեկոտոր a. qui tue, qui détruit ses enfants; — լինել, tuer, détruire ses enfants; avoir ses enfants tués.

Որդեկորոյս a. qui a perdu son enfant, ses enfants.

Որդեսէր a. qui aime son enfant, ses enfants.

Որդեսիրութիւն sm. amour de ses enfants.

Որդեսնոյց a. qui élève des enfants.

Որդեսպան, աց a. infanticide, meurtrier de son propre enfant.

Որդեսպանք, Որդեսպանութիւն s. infanticide, action de tuer ses enfants.

Որդի, դւոց s. fils, enfant; — իհօրէ, de père en fils; որդիք խաւարի՝ լուսոյ, les enfants des ténèbres, de la lumière; — Աստուծոյ, fils de Dieu.

Որդիաբար adv. filialement, en fils, comme un fils.

Որդիական a. filial, de fils.

Որդիանամ, ացայ vn. devenir le fils de, être adopté par.

Որդեատեաց a. qui hait son fils. ses enfants.

Որդեգրացուցանեմ, ուցի va. prendre pour fils, affilier, adopter.

Որդեութիւն s. qualité de fils, filiation.

Որդն, դան, դունք, դանց s. ver, vermine.

Որդնալից a. plein de vers, véreux.

Որդնահար adj. piqué des vers, vermoulu, véreux; — լինել, être piqué des vers, se vermouler.

Որդներուաց a. grouillant de vers.

Որդնիմ, եցայ vn. se vermouler.

Որդնոտ a. véreux.

Որդնոտիմ V. Որդնիմ.

Որդնուկ s. cochenille.

Որեար, երոյ sm. gens, hommes; աւագ —, les nobles, la noblesse.

Որզան V. Որպէս.

Որ էն s. celui qui est, Dieu.

Որթ, ուց s. veau; — եղանց, faon.

Որթ, ոց s. vigne, cep; panier. corbeille.

Որթագլուխ, գլխի, գլխոյ a. qui a la tête d'un veau; s. tête de veau.

Որթատունկ, տնկոց sm. vigne, cep.

Որթափայտ, ի sm. bois de vigne.

Որթի mot. gr. tenez-vous droit, levez-vous.

Որթիկ V. Որթուկ.

Որթիք, թեաց s. les vignes.

Որթուկ s. petit veau.

Որի, րւոյ s. corneille.

Որիզ s. riz.

Որիշ adj. distinct. séparé, différent, autre; adv. séparément, à part; որիշ որիշ, séparément; distinctement.

Որիւքս s. zool. oryx.

Ործ s. rot, rapport.

Ործամ, ացի vn. roter; vomir.

Ործացուցանեմ, ուցի va. faire roter; faire vomir.

Ործացուցիչ a. qui fait roter; vomitif.

Որկան sm. les choses présentes, le présent; մի' վստահիր յորկանդ, ne comptez pas sur le présent.

Որկոր, ոյ sm. œsophage, gosier.

Որկորածէտ, Որկորածէտութիւն V. Որկորամոլ, Որկորամոլութիւն.

Որկորամոլ, աց adj. gourmand, glouton, goulu, goinfre, vorace; — լինել, être gourmand, être sur sa bouche.

Որկորամոլութիւն s. gourmandise, gloutonnerie, goinfrerie, voracité; —բ, goulûment, avidement.

Որկորեայ, րէից. Որկորուստ, րստաց V. Որկորամոլ.

Որկորստութիւն V. Որկորամոլութիւն.

Որկրամոլ, Որկրամոլութիւն V. Որկորամոլ, Որկորամոլութիւն.

Որձ, ից a. mâle.

Որձակոտոր առնեմ va. détruire les mâles.

Որձատ, ի s. chapon.

Որձաքար, աց s. pierre de taille; a. de pierre de taille.

Որձեւէգ a. hermaphrodite.

Որմ, ոյ s. mur, muraille; որմ զորմայն, de mur en mur.

Որմած s. clôture, enceinte; —ք, maçonnerie.

Որմածակ s. trou de mur, ouverture, brèche.

Որմածերպք s. fente, trou de mur, brèche.

Որմածու, աց s. maçon.

Որմածութիւն sm. maçonnage.

Որմայեց a. appuyé contre un mur; — ծառ, arbre en espalier.

Որմանկար, ուց s. fresque.

Որմաշէն, շինաց s. maçon.

Որմարգել a. muré, entouré de murailles.

Որմարգելոց, աց s. clôture, endroit entouré de murs.

Որմափոր a. qui troue le mur; — լինել, trouer le mur.

Որմեմ, եցի va. murer, entourer de murailles; maçonner.

Որմիզդ, մզդի s. Ormuzd, Oromase.

Որմիսկ, մսկի sm. petit collier.

Որոգայթ, ից s. piége, embûches, filets, lacs; — լարել V. Որոգայթեմ; — դնել ումեք բանիւք, surprendre qn. dans ses paroles; անկանել յ— ou *—ի մէջ իյնալ, tomber dans un piége, dans un guet-apens.

Որոգայթադիր, դրաց a. qui tend des piéges; rusé, trompeur, séditieux.

Որոգայթեմ, եցի va. tendre ou dresser des piéges, des embûches à, attraper.

Որոճ V. Որոճք.

Որոճամ V. Որոճեմ.

Որոճային a. ruminant.

Որոճան V. Որոճք.

Որոճեմ, եցի. Որոճիմ, ճեցայ vn. ruminer, remâcher; fig. ruminer, rouler dans son esprit, méditer.

Որոճող a. ruminant.

Որոճումն, Որոճք s. rumination; méditation.

Որոմն, ման sm. ivraie, zizanie; fig. — ցանել, semer la zizanie parmi...

Որոմնացան s. semeur de zizanie.

Որոնեմ, եցի va. chercher, rechercher, fouiller, fureter, scruter; épouiller.

Որոշ a. distinct; séparé; décisif, précis, certain; —ք s. échelon, degré, marche.

Որոշաբար, Որոշակի adv. distinctement; séparément.

Որոշեմ, եցի va. distinguer; diviser, séparer; affecter, allouer; choisir; décider.

Որոշութիւն s. distinction, division, séparation.

Որոշումն V. Որոշութիւն; décision; — առնել ou *որոշում ընել, se décider, prendre une décision, un parti.

Որոշտեմ, եցի va. détruire, gâter.

Որոջ, աց s. agneau.

Որովայն, ից sm. ventre, panse; խճողել զ—, se remplir la panse; կաղ յորովայնէ մօր իւրոյ, boiteux dès le sein de sa mère, dès sa naissance; անկանիլ իվերայ —ի, tomber à plat ventre; պտուղ —ի, fruit des entrailles.

Որովայնամեծութիւն s. gastronomie.

Որովայնամէտ sm. gastronome.

Որովայնախօս V. Որովայնակոչ.

Որովայնածութիւն sm. dévoiement, diarrhée.

Որովայնամաշկ, ի s. péritoine.

Որովայնամոլ, աց s. gastromane.

Որովայնամոլութիւն s. gastromanie.

Որովայնապաշտ s. gastrolâtre.

Որովայնապարար, աց adj. gourmand; — լինել, remplir le ventre.

Որովայնապարարութիւն s. gourmandise, gloutonnerie.

Որովայնասէր adj. qui ne pense qu'à son ventre, gourmand.

Որովհետեւ conj. puisque, attendu que.

Որոտ V. Որոտումն.

Որոտաձայն sm. bruit de tonnerre.

Որոտամ, ացի vn. tonner, gronder.

Որոտընդոստ a. tonnant.

Որոտող s. tonnant.

Որոտումն s. tonnerre.

Որոր, ի s. mouette; — աշխարէ, la mouette se lamente.

Օրորան, աց s. berceau.

Որորեմ, եցի va. bercer.

Որորոց V. Որորան.

Որորք V. Օրօրք.

Որչափ, ից, փիք ou փոյք a. combien de, combien grand, combien nombreux, aussi grand que, aussi considérable que, quelque; adv. combien, autant que, autant, que; — եւս, — եւս առաւել, combien plus; — հնար է, autant que possible; —եւ մեծ իցէ, quelque grand qu'il soit; — մարդիկ, նոյնչափ կարծիք, autant d'hommes, autant d'opinions; — կարեմ, autant que je puis; եւ — յառաջ մատչէր, à mesure qu'il s'avançait; զորս — որ հաւաստագոյն քննեսցէ, plus on les approfondit, plus on....; — յիս է, autant qu'il est en moi, de mon mieux; ո՞րչափ ժամանակ, combien de temps? ո՞րչափ անգամ, combien de fois?

Որչափութիւն s. quantité.

Որպէս adv. comme, de même que, de la manière que, ainsi que; lorsque, lors; — զիարդ եւ իցէ, en tout cas, quoi qu'il arrive; — զիարդ եւ կամք իցեն, en quelque sorte qu'ils veuillent, en quelque façon qu'on veuille; — զի, afin que; parce que, car; — թէ, comme si.

Որպէ՛ս, որպէ՛ս զի interj. combien! que! comme! —, մեռա՛ւ ուրեմն, quoi! il est mort!

Որպէսն s. le comment, le pourquoi; V. Զիարդ.

Որպէտ a. n'importe lequel, le premier venu.

Որպիսի, սւոյ, սեաց a. quel; tel que; — ինչ, tel que, par exemple; որպիսի՞ ինչ իցէ ողջոյնս այս, quelle pouvait être cette salutation? գիտես — ինչ տօնքն էին, vous savez ce que c'était que les fêtes.

Որպիսութիւն sm. qualité, condition, état.

Որջ, ոց s. tanière, repaire, terrier, gîte.

Որջամուտ լինիմ vn. entrer dans un repaire.

Որջանամ, ացայ vn. se terrer, se tapir dans une tanière; fig. nicher, se cacher.

Որջիլ, ջլաց V. Ոջիլ.

Որջլալից V. Ոջլալից.

Որս, ոց s. chasse, vénerie; proie; gibier, venaison; — ձկանց, pêche; յորս ճեմանել ou * որսի երթալ, aller à la chasse, chasser.

Որսաքաղեմ, եցի va. tâcher d'arracher quelque chose de la bouche de qn.

Որսալից V. Որսաշատ.

Որսական a. de chasse; s. chasseur; pêcheur; Թռչուն —, oiseau de proie; շուն —, chien de chasse, braque.

Որսակից s. compagnon de chasse, de pêche.

Որսամ, ացայ, ացի va. chasser, aller à la chasse; fig. chercher à gagner, à séduire, envelopper dans ses filets, attraper; ձուկն —, pêcher, aller à la pêche; — ինչ բանս իբերանոյ ուրուք, surprendre quelques paroles de qn.; — զսիրտ ուրուք, gagner le cœur de qn.; — զյաջողութիւն աւուրց, épier le moment favorable.

Որսայս V. Յորսայս.

Որսանք, նաց sm. chasse; instrument de chasse ou de pêche; fig. attrape.

Որսաշատ a. giboyeux, qui abonde en gibier.

Որսասէր a. amateur de la chasse, giboyeur.

Որսասիրութիւն s. passion de la chasse.

Որսող, Որսորդ, աց sm. chasseur.

Որսորդախաբ a. qui trompe le chasseur.

Որսորդապետ, ի s. grand chasseur, grand veneur.

Որսորդութիւն sm. chasse, vénerie.

Որրան, Որրոց, աց s. berceau (d'enfant).

Որքան V. Որչափ.

Որքանութիւն s. quantité.

Որքին, Որքիւն s. dartre.

Որքինոտ a. dartreux.

Ու conj. et.

*** Ուզեմ**, Ուզենամ V. Կամիմ.

Ութ,ից a. huit.

Ութածալ a. in-octavo.

Ութամասնեայ, Ութամասնի a. qui a huit parties.

Ութամեան, Ութեմեան, մենի a. qui a huit ans.

Ութանիստ a. octaèdre.

Ութանկիւն s. octogone.

Ութանկիւնի, նւոյ a. qui a huit angles, octogone.

Ութեակ, Ութերեակ, եկաց a. huit; s. huitaine.

Ութերորդ, աց a. huitième; — **ձայն**, octave.

Ութեւտասն V. **Ութուտասն**.

Ութեւտասանածալ a. in-dix-huit.

Ութիցս adv. huit fois.

Ութկանգնեայ a. de huit aunes.

Ութուտասն, սին, սանց a. dix-huit.

Ութուտասներորդ, աց adj. dix-huitième.

Ութսնամեայ a. octogénaire.

Ութսներորդ, աց a. quatre-vingtième.

Ութսուն, սնից a. quatre-vingts.

Ութօրեայ, րէից a. de huit jours.

Ութօրէք, էից s. octave.

Ուժ V. **Ոյժ**.

Ուժաբանութիւն s. dynamique.

Ուժաթափ a. épuisé, abattu, défaillant; — **լինել**, s'épuiser, être abattu.

Ուժաչափ, ի sm. dynamomètre.

Ուժաւոր V. **Ուժեղ**.

Ուժգին a. fort, violent, intense, véhément, impétueux, vigoureux; adv. fortement, vigoureusement, violemment, avec vigueur, avec véhémence.

Ուժգինս, Ուժգնաբար, Ուժգնագոյն, Ուժգնակի V. **Ուժգին** adv.

Ուժգնանամ, ացայ vn. se fortifier, se renforcer, devenir fort, intense; l'emporter, prévaloir, dominer.

Ուժգնապէս V. **Ուժգին** adv.

Ուժգնապիրկ a. bien ou trop tendu, serré.

Ուժգնասիրտ a. courageux.

Ուժգնացուցանեմ, ուցի va. donner de l'intensité, rendre violent, impétueux, renforcer.

Ուժգնութիւն s. intensité, véhémence, impétuosité, violence, force, vigueur.

Ուժեղ, աց a. fort, vigoureux, robuste.

Ուժեղանամ, ացայ vn. se fortifier, devenir fort.

Ուժեղութիւն s. force, vigueur.

Ուժեմ, եցի vn. avoir la force, pouvoir, résister.

* **Ուժով** V. **Ուժեղ**.

* **Ուժովնամ** V. **Ուժեղանամ**.

Ուլ, ուց, ոց sm. chevreau, biquet.

Ուլենի, ենւոյ, ենեաց sm. chevreau, la peau de chevreau.

Ուլն, լան s. col, cou; V. **Ուլունք**; **զուլամբ երթալ**, tomber la tête la première, s'abattre; fig. s'en donner, se livrer aux plaisirs, à la débauche.

Ուլունք, լանց sm. perle; osselet.

Ուխտ, ից sm. vœu; vœu, souhait; pacte, traité, alliance;

clergé; ordre, congrégation, communauté; pélerinage; մանկունք —ի, le clergé; — դնել ou յ— մտանել ընդ ումեք, faire un pacte, un traité, une alliance avec qn., traiter avec lui; ուխտս կռել հրապարակաւ, conclure un traité solennel; կնքել — հաշտութեան, — հաստատութեան առնել, faire la paix; կալ յուխտին, rester fidèle à son vœu; — դնել, faire vœu, faire des vœux; — դնել աղքատութեան, faire vœu de pauvreté; *ուխտը կատարել՝ աւրել, accomplir, rompre ou violer son vœu; *— ընել, faire vœu, vouer; *ուխտի երթալ, aller en pèlerinage; պարզ —, vœu simple; անխորհուրդ՝ անխոհեմ՝ անլուծանելի —, vœu indiscret, imprudent, indissoluble.

Ուխտադիր, դրաց a. qui fait un vœu; qui conclut un traité, allié; — լինել, faire vœu; conclure un traité.

Ուխտադրութիւն s. action de faire vœu, de conclure un traité; vœu, souhait; vœux, profession.

Ուխտադրուժ, Ուխտազանց, ից a. s. violateur d'un vœu; qui viole les traités, la foi des traités, qui déroge aux conventions, infidèle, perfide.

Ուխտազանցութիւն s. violation d'un vœu, d'une convention, infraction aux traités, perfidie.

Ուխտակալ, աց a. qui tient à son vœu, qui observe son vœu; qui tient à son traité, qui l'observe, fidèle.

Ուխտական a. votif.

Ուխտակատար, աց a. qui accomplit son vœu.

Ուտակից s. compagnon de vœu; allié, confédéré.

Ուխտանենգ V. Ուխտազանց.

Ուխտանենգութիւն V. Ուխտազանցութիւն.

Ուխտապահ V. Ուխտակալ.

Ուխտապահութիւն s. observation d'un vœu, d'un traité.

Ուխտատեղի, ղւոյ s. pèlerinage (le lieu).

Ուխտաւոր, աց a. qui a fait un vœu; allié; pèlerin; profès; nazaréen; moine, religieux.

Ուխտաւորիմ, րեցայ vn. faire ses vœux, se consacrer à Dieu; fig. se priver, s'abstenir.

Ուխտաւորութիւն s. vœux, profession; pèlerinage.

Ուխտեալ a. profès, professe.

Ուխտեմ, եցի va. vouer, faire un vœu, faire vœu de; faire ses vœux (en parlant d'un religieux); conclure un traité; նուէրս —, promettre des offrandes.

Ուխք V. Ողխք.

Ուծանամ, ացայ vn. se refroidir, s'éloigner.

Ուծացուցանեմ, ուցի va. refroidir, éloigner.

Ուղ եւ ծուծ s. quintessence.

Ուղեգնաց, աց s. voyageur.

Ուղեգնացութիւն s. voyage.

Ուղեկից s. compagnon de voyage; —ք, cortége, suite, train; — լինել V. Ուղեկցիմ.

Ուղեկցիմ, ցեցայ vn. faire route ensemble, voyager ensemble, accompagner qn.

Ուղեկցութիւն s. voyage fait de compagnie, accompagnement, suite.

Ուղեղ, ուղղոյ s. cerveau, cervelle; moelle; մինչեւ ց— ոսկերաց, jusqu'à la moelle des os; V. Թափեալ.

Ուղեչափ, ի s. odomètre.

Ուղերձ am. don, présent, hommage; adresse; — մատուցանել, présenter une adresse.

Ուղերձեմ, եցի va. faire présent, offrir, présenter; adresser; s'attirer, séduire par des présents.

Ուղեցոյց, ցուցի s. guide; itinéraire, carte itinéraire; — օտարականի, cicérone.

Ուղեւոր, աց s. voyageur, passager.

Ուղեւորեմ, եցի va. conduire, guider, indiquer le chemin.

Ուղեւորիմ, րեցայ vn. voyager, faire voyage, des voyages, être en route, en voyage.

Ուղեւորութիւն s. voyage; itinéraire.

Ուղէշ V. Ուստ.

Ուղի, ղւոյ s. route, chemin, voie; trajet; յ— անկանել, ուղւոյ լինել, se mettre en route, en chemin, s'acheminer, partir; յ— արկանել, mettre en route, faire partir.

Ուղիղ, ղղոյ a. droit, vertical, dressé, direct; droit, juste, équitable; correct; adv. tout droit, droitement, directement; droitement, justement, bien; s. V. Ուղեղ; — գնալ ինպատակն, aller droit au but; — առնել, aplanir, frayer; — դատեցար, vous avez bien jugé; — խօսել, parler distinctement, correctement; — միտք՝ սիրտ՝ կողմն, esprit, cœur, côté droit; — գիծ, ligne droite.

Ուղխ V. Ուղխք.

Ուղխաջուր a. abondant en eau, impétueux; —ք s. l'eau d'un torrent, torrent d'eau.

Ուղխացան s. qui disperse, produit un torrent.

Ուղխինահոս a. qui tombe comme des torrents, impétueux.

Ուղխք, խից s. torrent, avalaison, ravine; հեղին յաչացն — արտասուաց, il versa un torrent, un ruisseau de larmes; — փափկութեան, fleuve de délices; — արեան, ruisseau de sang; — հոսանաց՝ հեղեղաց, torrents.

Ուղխօրէն adv. par torrents, comme un torrent, à torrents, à flots, comme un fleuve, comme un ruisseau.

Ուղկեան adj. long d'un palme.

Ուղղաբան, etc. V. Ուղղախօս.

Ուղղաբերձ a. qui a la taille droite, droit, dressé, élancé.

Ուղղագիծ, գծից a. rectiligne.

Ուղղագիր a. écrit correctement, correct.

Ուղղագնաց a. qui marche droit; plein de droiture.

Ուղղագործ, աց a. qui opère avec droiture, droit, juste.

Ուղղագրական adj. orthographique.

Ուղղագրեմ, եցի va. corriger, rectifier; orthographier; écrire correctement.

Ուղղագրութիւն s. orthographie; correction, rectification.

Ուղղադատ a. qui a le jugement droit, qui juge avec équité.

Ուղղադաւան, աց a. orthodoxe.

Ուղղալից a. moelleux.

Ուղղախոհ V. Ողջամիտ.

Ուղղախոհութիւն V. Ողջմտութիւն.

Ուղղախօս, աց a. qui parle correctement.

Ուղղախօսեմ, եցի vn. parler correctement, bien.

Ուղղախօսութիւն s. orthologie.

Ուղղածուծ առնեմ va. sucer la moelle, épuiser.

Ուղղական a. droit; s. gram. nominatif.

Ուղղակի a. droit; adv. tout droit, droitement, directement.

Ուղղակտուր a. coupé droit.

Ուղղահայեաց a. perpendiculaire; — գիծ, perpendicule.

Ուղղահայեցութիւն s. perpendicularité.

Ուղղահաւատ, ից a. orthodoxe.

Ուղղահաւատութիւն s. orthodoxie.

Ուղղաձիգ adj. qui va en ligne droite, droit, vertical, d'aplomb, à plomb.

Ուղղաձգութիւն s. aplomb.

Ուղղամիտ, մտաց a. qui a l'esprit droit, judicieux, probe.

Ուղղամտութիւն sm. rectitude ou droiture d'esprit, probité.

Ուղղային a. cérébral.

Ուղղանկիւն, կեանց s. à rectangle.

Ուղղանկիւնի, նւոյ a. rectangle, rectangulaire, orthogonal.

Ուղղաշաւիղ a. qui va en ligne droite, qui marche droit.

Ուղղաշունչ a. qui souffle en ligne droite.

Ուղղաչափ, ի s. équerre.

Ուղղաջերմ s. fièvre cérébrale.

Ուղղապէս V. Ուղիղ adv.

Ուղղասիրտ a. qui a le cœur droit.

Ուղղաւորեմ V. Ուղղեմ.

Ուղղափառ, աց. Ուղղափառահաւատ a. orthodoxe, catholique.

Ուղղափառութիւն s. orthodoxie, catholicité, catholicisme.

Ուղղեակ, ղեկի s. gouvernail, timon; régulateur.

Ուղղելի a. corrigible.

Ուղղեմ, եցի va. dresser, re-

dresser, rendre droit; adresser; diriger, conduire, gouverner, régler; corriger, rectifier, amender; ramener dans la bonne voie, corriger; réformer, rétablir; élever, ériger, dresser; — զխաչականս, réparer ses fautes; — զբան՝ զխնդիր, adresser la parole, la question; — զգնացս, régler la conduite, les actions.

Ուղղիչ s. correcteur; réformateur; recteur, directeur; conducteur; cocher; timonier; timon, gouvernail.

Ուղղորդ, աց a. droit, direct, perpendiculaire; adv. directement, tout droit, perpendiculairement, à plomb, à pic.

Ուղղորդութիւն s. perpendicularité.

Ուղղութիւն s. direction en ligne droite; fig. droiture, rectitude, justesse, probité; correction; rectification, amendement; direction, tendance; réforme, réformation; morale; ածել յ—, ramener dans la bonne voie, corriger; յ— գալ, se corriger, revenir de ses égarements, revenir à soi, se convertir; — վարուց, conduite des mœurs, la morale; — բարուց, correction des mœurs.

Ուղուկ, ղկի s. palme (mesure).

Ուղտ, ուց s. chameau; մատակ —, chamelle; տաճիկ —, dromadaire.

Ուղտապան, ի s. chamelier.

Ուղտափուշ s. chardon.

Ուղտաքաղ s. chimère.

Ուղտենի, նւոյ s. peau de chameau.

Ուղտերամակ, աց s. troupeau de chameaux.

Ուղփ V. Արփի.

Ուղփաճեմ V. Արփենի.

Ումպ s. action de boire; trait, gorgée.

Ումպէտ a. inutile, futile; adv. inutilement.

Ունակ, աց a. contenant.

Ունակաբար adv. habituellement.

Ունակական adj. habituel, routinier.

Ունականամ, ացայ vn. s'habituer, s'accoutumer.

Ունակացուցանեմ, ուցի va. habituer, accoutumer.

Ունակութիւն s. habitude, routine; —բ, par routine.

Ունայն, ից a. vide; vain, inutile.

Ունայնաբան V. Ընդունայնաբան.

Ունայնաբանութիւն V. Ընդունայնաբանութիւն.

Ունայնախոհ a. qui pense à des choses futiles.

Ունայնահաւատ, ից a. qui a une religion fausse, infidèle, mécréant.

Ունայնաձայն բան. **Ունայնաձայնութիւն** s. mot ou discours vide de sens.

Ունայնաձեռն a. qui a les mains vides; adv. avec les mains vides, à vide.

Ունայնամիտ a. qui a l'esprit futile, vain.

Ունայնամտութիւն s. esprit vide de sens, vanité.

Ունայնանամ, ացայ vn. se vider ; s'évanouir, devenir vain, inutile ; se dégarnir, se dépouiller, se priver.

Ունայնապարծ a. vain, vaniteux.

Ունայնաքան V. Զրաչան.

Ունայնասէր a. vain, qui aime les vanités.

Ունայնասիրութիւն s. vanité.

Ունայնավաստակ V. Զրավաստակ.

Ունայնացուցանեմ, ուցի va. rendre inutile, détruire; — զանձն, s'anéantir, s'abaisser, s'humilier.

Ունայնացուցիչ a. qui rend vain, qui détruit.

Ունայնութիւն s. vanité; inutilité, futilité; —ն պաշտամունք, superstition.

Ունգ s. brin, fétu.

Ունդ, ընդոց sm. légume; grain.

Ունդակեր V. Ընդակեր.

Ունելի a. qui tient; —ք s. pinces, pincettes; tenailles; mouchettes.

Ունեւոր a. riche.

Ունեւորութիւն s. richesse, fortune.

Ունիմ, կալայ, կալ vn. avoir, tenir, occuper, posséder, jouir de; tenir, contenir, retenir, arrêter, saisir, prendre, s'emparer; contenir, renfermer, enfermer; porter, supporter, soutenir; pouvoir, savoir; — զտեղի, tenir lieu de: — առ' իբրեւ, estimer, croire, prendre pour, regarder comme; զի ձիհս առ իմաստունս ունէին, se croyaient sages; ոչ առ ... ունիմ զձեզ, je ne vous prends pas pour des menteurs: ... զմարգարէ ունէին 'զնա, ... le regardaient comme un prophète; — ունէին իւղ, ... qu'ils eussent de l'huile; ... սիրել ոչ ունիմ, ոչ ունիմ ... je ne puis pas, je ne saurais parler, dire; խօսել կալ... il commença à parler; ... ունել, retenir; V. Մի... սրտմտութիւն կալաւ զնա, ... fut indigné; — զաղանդ' ... սումն, suivre la secte, la doctrine; V. Տալ, Հնազանդ... թիւն, Սոսկումն, Աջ, etc.

Ունկի, կւոյ s. once.

Ունկն, կան s. oreille; V. Ունկունք; — դնել' մտադ... նել, prêter l'oreille, écouter; — դիր, attention! խօսել յակ... կանէ, dire à l'oreille; ... յ— նորա, parvint jusqu'à ses oreilles.

Ունկնալուր V. Ականջալուր.

Ունկնախից a. qui a fermé ses oreilles.

Ունկնական a. auriculaire.

Ունկնականքինք s. conque de l'oreille.

Ունկնամուտ V. Ականջամուտ.

Ունկնացաւ s. otalgie, mal d'oreille.

Ունկնդիր, դրաց s. auditeur; a. docile, obéissant; — լինել, prêter l'oreille, écouter;

obéir, être docile à; exaucer; —ք, auditoire, audience.

Ունկնդրասէր a. qui aime à écouter.

Ունկնդրեմ V. Ունկնդիր լինիմ; ausculter.

Ունկնդրութիւն s. l'action d'écouter; audience; obéissance; auscultation.

Ունկունք s. anse.

Ունողութիւն s. possession.

Ունչատ adj. qui a le nez coupé.

Ունչք, ընչաց s. nez; moustache; զընչովք առնել, se faire la moustache; յընչաց ցերել, ունչս առնել՝ ունել, narguer, faire nargue à qn., le braver avec mépris, faire fi de, railler, mépriser; սրբել զունչս, se moucher.

Ունջ, ընջոց, աց s. la partie intérieure, fond, les fondements; ընդ — տանել, raser jusqu'aux fondements.

Ուշ, ի s. mémoire, souvenir; attention; intelligence, esprit, sens; *tard; — առնել՝ առնուլ՝ դնել՝ ունել, faire attention, fixer l'attention, être attentif, attacher son esprit, avoir en vue, ne pas perdre de vue, s'appliquer à; faire attention, prendre garde, être sur ses gardes; tendre, chercher à, tâcher, s'efforcer de; — ունել յոք, suivre qn. des yeux; յ— ածել՝ առնել՝ արկանել, rappeler, faire ressouvenir, rappeler la mémoire d'une chose; յուշ գալ՝ լինել, զուշով գալ, se rappeler, se souvenir, se ressouvenir; յուշի ունել՝ կալել, garder dans sa mémoire, avoir mémoire de, n'oublier jamais; ինձ յուշ անկանի, je me rappelle; ուշի ուշով adv. avec attention, attentivement, à tête reposée; ուշ եւ ուրուշ, les sens; զուշ եւ զուրուշ մոգել՝ գրաւել, enchanter, charmer, entraîner, séduire; ընդոստուցանել զուշ, exciter l'attention; — իկուրծ adv. avec attention, attentivement; V. Կուրծք; — իկուրծս արկանել, prendre au sérieux; — իկուրծս անկաւ գրել, l'idée lui est venue d'écrire; — իկուրծս առնել, penser, songer, concevoir le dessein de; *— մնալ, rester tard, être en retard; *շատ — է, c'est trop tard.

Ուշաբերեմ, եցի va. rappeler, faire ressouvenir; faire revenir d'un évanouissement; —իմ vn. revenir, recouvrer sa connaissance, reprendre ses sens, l'usage de ses sens.

Ուշադիր V. Մտադիր.

Ուշադրեմ V. Մտադիր լինիմ.

Ուշադրութիւն V. Մտադրութիւն.

Ուշաթափ a. V. Մտաթափ; qui a perdu connaissance; — լինել, perdre la tête; perdre connaissance.

Ուշաթափութիւն s. amnésie.

Ուշակալ, Ուշակալու, Ուշատու, Ուշարար V. Մտադիր.

* Ուշանամ V. Յապաղիմ.
* Ուշացնեմ V. Յապաղեմ.
* Ուշացող s. retardataire.

Ուշեղ, աց a. qui a bonne mémoire; intelligent; — Արտաշէս, Artaxerce Mnémon.

Ուշեղութիւն s. bonne mémoire; intelligence.

Ուշիմ a. intelligent, spirituel, sensé, judicieux, sagace.

Ուշիմութիւն s.intelligence, présence ou pénétration d'esprit, esprit, sagacité.

Ուպան, ի sm. galbanum; benjoin.

Ուռ, ոց s. sarment; branche; saule; if; — վարսագեղ, pampre.

Ուռենի,նւոյ,նեաց s. saule; վայրակախ —, saule pleureur; —ք, saussaie.

Ուռենամ V. Այտնում.

Ուռեց, Ուռէց a. gonflé; —ք s. tumeur, enflure.

* Ուռեցնեմ V. Ուռուցանեմ.

Ուռթեմ, եցի va. rendre fertile; V. Յուռթեմ.

Ուռի, ռւոյ V. Ուռենի.

* Ուռիմ V. Ուռնում.

Ուռկան, աց s. filet, rets; fig. filet, piége.

Ուռկանարկ, Ուռկանաւոր s. a. qui pêche au filet; pêcheur.

Ուռկանեմ, եցի va. pêcher au filet; fig. prendre comme dans un filet, faire tomber dans ses filets.

Ուռճացարդ a. bien poussé, en pleine végétation, verdoyé, fleuri; plein, comble.

Ուռճանամ, ացայ vn. être en pleine végétation, pousser, monter, venir, croître, verdoyer, fleurir; fig. être florissant, dans sa fleur, dans un état florissant; être plein, rempli, comblé de, au comble de.

Ուռն, ռանք, ռունք s. marteau.

Ուռնադղորդ a.adv. à coups de marteau; — բոմբիւն, coup de marteau; — հնչէին սալք, le marteau résonnait sur l'enclume.

Ուռնակ, ի s. martelet.

Ուռնաւոր s. marteleur.

Ուռնում,ռեայ,ռուցեալ vn. s'enfler, se gonfler, bouffir; fig. s'enfler, être bouffi d'orgueil.

Ուռոյց adj. enflé, gonflé, bouffi; —ք s. V. Ուռեցք.

Ուռուցանեմ, ուցի va. enfler, gonfler, bouffir, boursoufler; tuméfier.

Ուռուցիկ a. qui enfle, qui gonfle, bouffant; enflé, gonflé; fig. bouffi, boursouflé; — ոճ, style bouffi, boursouflé; հողմն —, bouffée de vent, vent impétueux, ouragan; — հերք, cheveux bouffants.

Ուռուցումն s. enflure, gonflement, bouffissure; fig. enflure, orgueil.

Ուս, ոց s. épaule; *ուսը զարնել, mettre sur ses épaules.

Ուսանիմ, ուսայ, սիր, սեալ vn. apprendre, étudier, s'instruire, s'exercer à; — իբերան, apprendre par cœur; — զդաս, apprendre, étudier sa leçon.

Ուսանող s. étudiant.

Ուսանոց, աց s. épaulette.

Ուսին s. avalanche.

Ուսող, աց s. étudiant; mathématicien.

Ուսողութիւն s. V. Ուսումն; mathématiques.

Ուսումն s. étude, enseignement, instruction; science, connaissance.

Ուսումնական adj. scientifique; mathématique; s. mathématicien; savant.

Ուսումնականն, **Ուսումնականութիւն** s. mathématiques.

Ուսումնակից s. compagnon d'études.

Ուսումնապետ V. Ուսուցչապետ.

Ուսումնասէր a. qui aime l'étude, qui aime à s'instruire, studieux, diligent.

Ուսումնասիրական a. philomathique.

Ուսումնասիրութիւն s. m. amour ou goût de l'étude, désir d'apprendre, amour pour l'étude, pour les lumières, amour des sciences, philomathie.

Ուսումնատեաց a. qui déteste l'étude.

Ուսումնատենչ V. Ուսումնասէր.

Ուսումնատեցութիւն s. haine pour l'étude.

Ուսումնարան, աց s. école, institution, collége.

Ուսուցանել, **Ուսուցանող** V. Ուսուցիչ.

Ուսուցանեմ, ուցի va. enseigner, apprendre, professer, instruire.

Ուսուցանող V. Ուսուցիչ.

Ուսուցանողութիւն s. professorat.

Ուսուցիչ, **Ուսուցող** s. professeur, maître, précepteur, instituteur.

Ուսուցչական a. professoral.

Ուսուցչապետ, աց s. préfet ou directeur des études.

Ուսուցչապետութիւն s. fonctions du préfet d'études.

Ու՞ստ, **Ու՞ստ ուստեք** adv. d'où? de quel endroit? par où?

Ուստեմն V. Ուստեք.

Ուստեք adv. de quelque part, de quelque endroit; — ուստեք, de part et d'autre, de plusieurs ou de divers endroits; ամենայն —, de tous côtés, de toutes parts; այլ ou այլուստ —, d'un autre côté, d'une autre part; բազում ou յոլով —, de beaucoup d'endroits, de plusieurs endroits; ոչ —, de nulle part, d'aucun côté ou d'aucune part.

Ուստի adv. de quoi, dont; conj. d'où, par où, c'est pourquoi, ainsi, donc, conséquemment, par conséquent.

Ուստի՞, d'où? de quel endroit? par où? — ես, d'où es-tu? — գաս, d'où viens-tu? ուստի՛ եւիցէ, de quelque part que ce soit; — է ինձ այս զի, d'où me vient que! — ճանաչես զիս, d'où me connais-tu?

Ուստր, տեր, տերք, տերաց s. fils, garçon.

Ուտելի a. mangeable, comestible; sm. mangeur; —ք, comestibles, nourriture.

Ուտեմ, կերի ou կերայ, կեր va. manger; fig. manger, dépenser, consommer; manger, ronger, corroder; ունի՞ք ինչ ուտելոյ, avez-vous quelque chose à manger? *բոլոր ունեցածն ուտել, manger sa fortune, son bien; անյագաբար —, manger avidement, dévorer; *ոտքի վերայ ուտել, manger debout, sur le pouce; *բառերն ուտել, manger ses mots.

Ուտեստ, ից sm. manger, vivres, comestibles, nourriture, aliments.

Ուտիճ, տճայ s. ver, teigne, gerce, chenille; rouille; cancer; — ցորենոյ, charançon; — պանրոյ, mite.

Ուտիչ s. celui qui mange, mangeur.

Ուտիք s. gras, jours gras; — ուտել, faire gras; *վաղն — է, — պիտի ընեմք, demain est gras, nous ferons gras.

Ուր adv. où, l'endroit où; au point où; tandis que; lorsque; ուր զի, au lieu que; ուր ուրեմն, à peine, enfin; ուր ուրեք, où, en quelque endroit, quelque part que, partout où; ո՛ւր եւ իցէ, en quelque lieu que ce soit; ո՛ւր եւ իցեն, quelque part qu'ils soient.

Ո՞ւր adv. où? dans quel endroit? ո՞ւր եմ իցեմ, où suis-je? ո՞ւր է նա, où est-il?

Ուրագ, ագ sm. hachette, hachereau.

Ուրախ a. joyeux, enjoué, charmé, bien aise; — առնել V. Ուրախացուցանեմ; — լինել, se réjouir, s'égayer, éprouver de la joie, être charmé, bien aise; faire bonne chère; ուրախ լեր, réjouissez-vous; je vous salue.

Ուրախաբեր a. qui porte la joie, réjouissant.

Ուրախալի, **Ուրախալիր**, **Ուրախալից** a. plein de joie, joyeux, réjouissant.

Ուրախակից s. compagnon de joie; — լինել, prendre part à la joie de qn., se réjouir ensemble, partager la joie de qn.; féliciter, faire des compliments; faire festin ensemble, se régaler ensemble.

Ուրախակցութիւն V. Խնդակցութիւն.

Ուրախամիտ V. Խնդամիտ.

Ուրախանամ V. Խնդամ.

Ուրախարար a. qui inspire la joie, réjouissant, joyeux.

Ուրախացուցանեմ, ուցի va. réjouir, causer de la joie, égayer, faire plaisir.

Ուրախացուցիչ V. Ուրախարար.

Ուրախաւէտ V. Ուրախարար.

Ուրախութիւն s. joie, réjouissance, allégresse; réjouissances, festin, bonne chère; —ը ուրախ լինել, être au comble de la joie; *—ը, avec joie, avec plaisir.

Ուրանալի a. niable.

Ուրանամ, ացայ va. nier, renier; renier, désavouer, méconnaître; — զհաւատս՝ քրիստոնէութեան, abjurer la foi, apostasier; — զանձն, faire abnégation de soi-même, renier à soi-même.

Ուրանոս, ի s. Uranus.

Ուրանօր V. Ուր.

Ուրաստ V. Ուրացութիւն; յ— լինել՝ կալ V. Ուրանալ.

Ուրար, ի s. étole.

Ուրացական a. négatif.

Ուրացեալ, Ուրացող a. renégat, apostat.

Ուրացութիւն, Ուրացումն s. reniement; négation, dénégation; désaveu; apostasie, abjuration; — անձին, abnégation.

Ուրացուցանեմ, ուցի va. faire nier ou renier, faire abjurer.

Ուրբաթ, ու sm. vendredi; աւագ —, vendredi saint.

Ուրդ, ից s. conduit d'eau, rigole, canal; draine.

Ուրդեմ, եցի va. drainer.

Ուրդոց s. drainage.

Ուրեմն conj. donc, par conséquent; adv. en quelque endroit, en quelque lieu; a. un, une; զքառասնամենիւք — էր, il avait quarante ans.

Ուրեք adv. quelque part, en quelque endroit; a. un, une; ամենայն —, partout; ուրեք —, en quelque endroit; quelquefois; իտեղւոջ —, dans un endroit; ի քաղաքի —, dans une ville; ոչ —, nulle part, en aucun endroit, en aucun lieu.

Ուրիշ a. séparé; *autre.

Ուրկանամ V. Բորոտիմ.

Ուրկանոց, աց s. léproserie, hôpital pour les lépreux.

Ուրկութիւն sm. lèpre, ladrerie.

Ուրոյն a. séparé, différent, distinct; particulier, propre, spécial, individuel; adv. à part, séparément, isolément, en particulier, individuellement; prép. hormis, à l'exception de, excepté, sans.

Ուրոյնանամ V. Մեկուսանամ.

Ուրու V. Ուրուականք.

Ուրուագիր a. dessiné; dessinateur.

Ուրուագրեմ, եցի va. dessiner.

Ուրուագրող s. dessinateur.

Ուրուագրութիւն s. dessin.

Ուրուադիտակ, ի s. fantasmagorie.

Ուրուադիտական a. fantasmagorique.

Ուրուական a. fantastique; s. spectre, fantôme; simulacre, idole; ébauche, esquisse; —ք, mânes, ombres, apparitions.

Ուրուապաշտ a. idolâtre.

Ուրուկ, րկի V. Բորոտ.

Ուրուշ V. Ուշ.

Ուրուր s. ornith. buse.

Ուրջու, աց sm. beau-fils belle-fille.

Ուրց s. bot. thym.

Ոփ, ոց s. fosse, fossé, trou.

Ոփի, փոյ, փեաց s. obier.

Ոփիտէս s. ophite.
Ոփռանտ s. offrande.
Ոք, ուրուք sm. quelqu'un, personne; adj. quelque, un, certain; այր ոք, un homme; կին ոք, une femme; ամենայն ոք, իւրաքանչիւր ոք, chacun, chaque personne; մի՛ ոք, ոչ ոք, pas un seul, pas un, personne; ո՞ ոք, ո՞վ ոք, qui? ոք ոք, celui qui.
Ոքող V. Ակքան.
Ոքսալային a. oxalique.
Ոքսիտ s. oxyde.
Ոքսիտացումն s. oxydation.
Ոֆֆրանտ s. offrande.

Չ (tcha) s. vingt-cinquième lettre de l'alphabet et dix-neuvième des consonnes ; sept cents, sept-centième.

Չ adv. ne, pas ; չէ նա, ce n'est pas lui ; չասեմ, je ne dis pas ; չգիտել, ignorer, ne pas savoir.

Չազգ, ի sm. mauvaise ou méchante nation.

Չազգականութիւն, **Չազնուութիւն** sm. naissance obscure.

Չախորժական, **Չախորժելի** a. désagréable, déplaisant.

Չակերտ s. guillemet.

Չահագին a. qui n'est pas énorme.

Չաման, ոյ s. cumin.

Չամիչ, մչոյ, մչի s. raisin sec.

Չամչեայ, չէից s. baba.

Չամչեղէն a. de raisin sec.

Չայ, ի s. thé.

Չայաման, ի s. théière.

Չանձնաւոր a. qui n'est pas personnel.

Չանսական a. qui n'obéit pas, indocile.

Չանսացութիւն s. désobéissance.

Չանցաւոր a. qui n'est pas passager, éternel.

Չաշմակեմ V. Կործանեմ.

Չաջողութիւն s. insuccès.

Չաստուած, ոց s. faux dieu idole.

Չաստուածուհի sf. déesse, divinité.

Չար, ալ a. mauvais, méchant; méchant, malin, malicieux; s. mauvais génie, démon; չար ou չարաւ adv. mal; sans pitié; չար առնել՝ գործել, faire du mal, du tort à qn.; եւ որ չար քան զամենայն է, այլ որ չար եւս է, le pis est que, qui pis est, ce qu'il y a de plus fâcheux, de plus désagréable; զի մի՛ չար եւս ինչ լինիցի քեզ, de peur qu'il ne vous arrive quelque chose de pire; — ջուր՝ ամօթ, mauvaise eau ou honte; — խորհուրդ, mauvais conseil; չարաւ կորուսանել, perdre sans pitié, faire périr misérablement; * փոքրագոյն չարն ընտրել, choisir le moins mal.

Չարաբան, Չարաբանեմ, Չարաբանութիւն V. Չարախօս, Չարախօսեմ, Չարախօսութիւն.

Չարաբախտ, Չարաբաստ, Չարաբաստիկ a. malheureux, infortuné.

Չարաբաստութիւն s. mauvais sort, mauvaise fortune, malheur, infortune.

Չարաբար V. Չարաբարոյ.

Չարաբարեմ, եցի vn. devenir méchant, prendre un air méchant.

Չարաբարոյ, ից a. qui a un caractère méchant, d'une nature maligne, malin, malicieux, malveillant; immoral; — լինել, n'avoir point de mœurs.

Չարաբարոյք, Չարաբարոյութիւն sm. méchanceté, malignité, malveillance; immoralité.

Չարաբեր a. qui porte du mal, qui porte malheur, malheureux, funeste.

Չարաբերան a. mal embouché.

Չարագազան sm. mauvaise bête.

Չարագան a. bien battu, roué de coups.

Չարագանեմ, եցի va. bien battre, accabler, rouer ou échiner de coups.

Չարագոյժ a. qui annonce une mauvaise nouvelle, funeste.

Չարագոյն a. plus mauvais, pire, pis; plus méchant; d'une vilaine couleur, d'un mauvais teint; եւ որ չարագոյնն էր, et ce qui était le plus déplorable.

Չարագործ, աց a. s. malfaiteur, malfaisant, méchant, scélérat.

Չարագործութիւն s. malfaisance, mauvaise action, méchanceté, trait de méchanceté.

Չարագուշակ a. qui annonce du mal, de mauvais augure, funeste, sinistre.

Չարագրգիռ a. qui excite au mal, malicieux, méchant.

Չարադեւ, դիւի s. mauvais génie; a. de mauvais génie.

Չարադէմ a. qui a un mauvais visage, laid.

Չարադիւթ, ից a. maléfique.

Չարաթոյն a. d'un mauvais poison, fort venimeux, viru-

lent; empoisonné, envenimé, funeste, très-dangereux.

Չարաժանի a. qui a des dents, des griffes très-aiguës.

Չարաժողով, ոց s. conciliabule.

Չարաւեզու sm. mauvaise langue, médisant.

Չարալլուկ adj. fort tourmenté, maltraité; — լինել, être fort tourmenté, maltraité; — տանջել, tourmenter ou maltraiter beaucoup, torturer.

Չարալուր adj. qui prête l'oreille à de mauvaises nouvelles, à des méchancetés; —ք s. mauvaise nouvelle.

Չարախնամ a. porté au mal.

Չարախնդաց a. qui se réjouit du mal, malveillant.

Չարախոհ, Չարախորհուրդ adj. qui médite le mal, mal pensant, qui a une mauvaise pensée, de mauvais desseins, mal intentionné, malveillant.

Չարախորհրդութիւն s. mauvais dessein, méchanceté.

Չարախոց a. qui a une mauvaise blessure.

Չարախտական a. nuisible, pernicieux.

Չարախտավատ adj. très-mauvais, cruel; — ցանկութիւնք, les mauvaises passions.

Չարախտավար adj. cruel, inhumain; adv. cruellement.

Չարախօս, աց, ից a. qui dit du mal, médisant, détracteur, cancanier; — լեզու, langue médisante, langue d'aspic; — լինել V. Չարախօսեմ.

Չարախօսեմ, եցի vn. dire du mal ou médire de qn., détracter, accuser; cancaner, faire des cancans, des commérages.

Չարախօսութիւն s. médisance, détraction, coup de langue; cancan, commérage; — մատուցանել զումեքէ, porter une accusation contre qn.

Չարածառայ,ից s. mauvais ou méchant serviteur.

Չարածեր s. méchant vieillard.

Չարակամ a. malévole, malveillant, malintentionné, méchant.

Չարակամութիւն s. mauvaise volonté, malveillance, méchanceté.

Չարակեաց կեանք sm. vie traînée misérablement, misérable vie.

Չարակեղ a. qui présente les caractères d'un ulcère malin; s. peste.

Չարակն, Չարակնեայ adj. qui a des yeux méchants, qui regarde de mauvais œil, malveillant, envieux.

Չարակնեմ, եցի vn. va. regarder de mauvais œil, porter envie.

Չարակնծիռ V. Չարակամ.

Չարակնութիւն s. mauvais regard, malveillance, jalousie, envie; regard indécent, lascif.

Չարակրութիւն s. souffrance; mauvais traitement.

Չարահալած a. qui chasse le mal, les maux.

Չարահամբաւ a. mal famé, diffamé.

Չարահամբաւեմ, եցի va. diffamer, dénigrer, noircir.

Չարահատոյց լինիմ՝ գտանիմ vn. rendre le mal pour le bien.

Չարահաւ, աց adj. d'une mauvaise origine, mauvais, méchant ; mauvais, désagréable.

Չարահաւակ s. auteur du mal.

Չարահնար, ից a. qui médite le mal, malicieux, méchant, malin.

Չարահոտ a. qui sent mauvais, puant, fétide, infect.

Չարահոտութիւն s. mauvaise odeur, odeur infecte, fétidité.

Չարահռչակ V. Չարահամբաւ.

Չարաձայն, ից a. qui a une mauvaise voix, un son désagréable.

Չարաձայնութիւն s. voix ou son désagréable, cacophonie.

Չարաղէտ a. très-malheureux, infortuné, misérable.

Չարաճճի s. mauvaise bête ; a. méchant, espiègle, fin.

* **Չարաճճիութիւն** sm. méchanceté, espièglerie, finesse.

Չարամահ a. d'une mort malheureuse, douloureuse ; — սպանել՝ սատակել, tuer cruellement ; — լինել, mourir misérablement, d'une mort malheureuse.

Չարամայր, մօր s. mauvaise mère ; mère malheureuse.

Չարամէտ a. enclin au mal.

Չարամիտ, մտաց a. malintentionné, malveillant, malin, méchant, malicieux.

Չարամոյն adv. misérablement, d'une manière pitoyable.

Չարամոռաց, աց a. qui oublie le mal.

Չարամտութիւն s. malveillance, méchanceté, malignité.

Չարայաչաղ a. bassement envieux, malveillant.

Չարայոյզ V. Չարամիտ.

Չարայուշ, ից adj. qui se souvient d'une injure, rancunier ; — լինել, se souvenir d'une injure.

Չարայուշութիւն s. souvenir d'une offense, rancune, ressentiment.

Չարայօժար adj. enclin au mal, méchant.

Չարանախանձ a. extrêmement jaloux.

Չարանամ, ացայ vn. se conduire mal, agir méchamment, devenir méchant ; s'aigrir, s'envenimer ; V. Նախանձիմ.

Չարանենգ adj. perfide ; — դաւաճանութիւն, noire trahison.

Չարանիւթ V. [illegible]

Չարաշահ a. intéressé.

Չարաշահութիւն sm. gain honteux ou illicite, intérêt.

Չարաշշուկ a. malheureux, funeste.

Չարաշունչ a. dont l'air est mauvais, infect, fétide, funeste.

Չարաշուք a. mauvais, méchant, vil, ignoble, infâme; mauvais, méchant, cruel; malheureux, misérable, piteux, triste.

Չարաչար a. pis, très-mauvais, le plus mauvais, le plus méchant, excessif, extrême, abusif, énorme; atroce, cruel, insupportable, misérable; adv. très-mal, pis, méchamment, cruellement; excessivement, fortement, gravement, extrêmement, misérablement; — վարել՝ ինչիր աճել, abuser de.

Չարապաշտ, Չարապարիշտ V. Ամպարիշտ, Հերետիկոս.

Չարապէս V. Չարաչար adv.

Չարասաց V. Չարախօս.

Չարասերմն a. qui produit de mauvaises semences.

Չարասէր a. qui aime à faire le mal, méchant, malin, malveillant.

Չարասիրութիւն s. amour du mal, méchanceté, malignité, malveillance.

Չարասիրտ adj. qui a un mauvais cœur, méchanceté ou mauvaise disposition de cœur.

Չարատանջ a. qui tourmente beaucoup, violent, rude; — լինել, être sur le gril, souffrir beaucoup.

Չարատեաց, տեցայ a. qui déteste le mal.

Չարատես, Չարատեսիլ a. d'une vilaine apparence, laid.

Չարարար, աց a. qui fait du mal, malfaisant; qui rend méchant.

Չարարարեմ, եցի vn. faire du mal, malfaire.

Չարարարութիւն s. malfaisance.

Չարարուեստ,ից a. malicieux, artificieux, intrigant, fourbe; — ճնարք, artifices, intrigues.

Չարարուեստութիւն s. artifice, intrigue.

Չարացուցանեմ, ուցի va. rendre mauvais, méchant ou pire, empirer; aigrir, exciter au mal.

Չարափառ, աց a. hétérodoxe.

Չարափառութիւն s. hétérodoxie.

Չարեացպարտ a. coupable du mal, auteur des maux.

Չարըմբերութիւն s. action de supporter les maux.

Չարիմաստ, Չարիմաց V. Չարամիտ.

Չարիմացութիւն V. Չարամտութիւն.

Չարիք, րեաց s. les maux, les malheurs, adversité, calamité, désastre; mauvaises actions; mauvais traitement, violence; չարիս գործել, faire du mal, malfaire; չարիս խօսել զումեքէ, dire du mal de qn.; զփոքրագոյնն ընտրել ի չարիս, choisir le moins mal; — ախտից, les effets des passions.

Չարեօք V. Չար adv.

Չարճոտ s. assa fœtida.

Չարուեստ s. mauvais métier.

Չարութիւն s. méchanceté,

malice, malignité; —ւ, méchamment, malicieusement, malignement.

Չարուտ V. Չար a.

Չարչարական a. passible, passif.

Չարչարակից s. compagnon de souffrances.

Չարչարակցիմ, ցեցայ vn. partager les souffrances de qn.

Չարչարակցութիւն s. participation à la souffrance de qn.

Չարչարանք, նաց s. passion, souffrance, supplice, tourment, mauvais traitement.

Չարչարելի V. Չարչարական.

Չարչարեմ, եցի va. tourmenter, maltraiter, faire souffrir; —իմ vn. être tourmenté, maltraité, souffrir, pâtir.

Չարչարելութիւն s. passibilité.

Չարչարիչ s. celui qui tourmente, qui fait souffrir.

Չարչարութիւն V. Չարչարանք.

Չարփուք V. Չար adv.

Չաւատալի a. incroyable.

Չաւատամ, ացի vn. ne pas croire, ne pas ajouter foi.

Չափ, ուց, ոց s. mesure; cordeau; mesure, dimension, étendue; dose, quantité; mesure, modération, juste milieu; mesure, proportion; mesure, règle, bornes, limites; mus. mesure; mesure, rhythme, cadence; âge viril, âge de raison; a. mesuré, modéré, réglé; moyen, médiocre, modique; prép. jusque, à, environ, comme, autant, avec; մահու չափ, à mort, à la mort, jusqu'à la mort; ոգւոյ չափ, comme son âme; ըստ չափու, à mesure de, à mesure que; հինգ հարիւրով չափ, environ cinq cents; չափ ինչ, un peu peu; ի չափ հասեալ, qui a l'âge, adulte, formé, déjà grand; ի չափ հասանել, parvenir ou être à l'âge viril, dans la force de l'âge; atteindre l'âge de raison, avoir l'âge, se former, être adulte; գիտել զչափ անձին, ի չափու ունել զանձն, se modérer, se conduire avec modération; se retenir, se posséder; ի չափու ունել, retenir dans de justes bornes, modérer, tenir dans le devoir, contenir, réprimer; չափով, avec mesure ou modération, par mesure, modérément; en vers; չափով բան, vers; միտք նորա չափով, son esprit a des bornes; զամենայն ինչ առնել չափով եւ կշռով, faire tout avec poids et mesure; զչափ առնուլ, essayer, éprouver, ressentir; — հասակաւ, d'une taille moyenne; անդր քան զ— անցուցանել, անցանել զ— ou *չափն անցուցանել, pousser trop loin, pousser jusqu'à l'excès; *այս չափը կանցնի, cela passe toute mesure; — դնել, — եւ սահման դնել, mettre des bornes à, modérer, restreindre; լրացեալ է չափն, la mesure est comble; անձնել

զչափ հանդերձի ou * հագուստի չափն առնուլ, prendre mesure d'un habit; կալ ի չափու, se modérer; չկալ ի չափու, abuser de; ունի սա — ժամանակի առաւել քան զինն հարիւր ամաց, il dura plus de neuf cents ans; ունի — ժամանակի հարիւր ամաց, c'est un espace de cent ans.

Չափաբան, ից s. versificateur.

Չափաբանութիւն s. versification, vers.

Չափաբեր a. qui a la juste mesure, symétrique; modéré.

Չափաբերական a. mesuré, symétrique, proportionné; métrique, rhythmique.

Չափաբերապէս adv. avec mesure, symétriquement, régulièrement.

Չափաբերութիւն s. mesure, symétrie, proportion; mètre, rhythme.

Չափագէտ s. mathématicien.

Չափագիտական a. mathématique.

Չափագիտութիւն s. mathématiques.

Չափազանց a. exagéré, excessif.

Չափազանցութիւն s. exagération, excès.

Չափախօս a. modéré dans ses discours.

Չափաձոյ a. mesuré; métrique, rhythmique.

Չափական a. métrique.

Չափակից adj. symétrique, proportionnel; commensurable.

Չափակցութիւն s. symétrie, proportion, justesse des proportions.

Չափահաս, ից. Չափահասակ a. adulte, qui a atteint l'âge de raison, pubère.

Չափան, աց s. mesure.

Չափարան s. calibre.

Չափաւոր a. qui a la juste mesure, mesuré, convenable; médiocre, modique, passable; modéré, modeste.

Չափաւորապէս adv. avec mesure, modérément, modestement, modiquement, passablement.

Չափաւորեալ adj. modéré, borné, renfermé dans de justes bornes, tempéré.

Չափաւորեմ, եցի va. renfermer dans de justes bornes, modérer, tempérer, contenir.

Չափաւորութիւն s. mesure, juste milieu, modération, modestie; médiocrité.

Չափելի a. mesurable.

Չափեմ, եցի va. mesurer; versifier, faire des vers.

Չափողութիւն sm. la métrique.

Չափոյք, ոյից sm. mesure, modération; չափոյիւք, avec modération; պատկառ կալ չափոյից, être modéré.

Չափումն s. mesurage.

Չափչգիտութիւն s. l'action de ne pas connaître sa position.

Չքարերարութիւն s. la disposition à ne pas faire du bien.

Չքարի a. qui n'est pas bon, mauvais.

Չբնականոր, Չբնաւոր a. qui n'est pas naturel.

Չգիտանք sm. ignorance; առ ի չգիտանս, par ignorance, sans connaître, à l'insu.

Չգիտու, Չգիտուն a. ignorant.

Չգիւտ. առ —, à défaut de, au défaut de.

Չգոյ, ից s. rien, néant; առ ի չգոյէ, à défaut de, au défaut de; ի չգոյէ իգոյ ածել, créer du néant.

* Չեխ, Չեխեմ V. Կշտամբանք, Կշտամբեմ.

Չեչաքար, ի s. pierre ponce.

Չեչոտ a. marqué de petite vérole.

Չեպիսկոպոս, աց s. faux ou indigne évêque.

Չերէց, րիցու s. mauvais ou indigne prêtre.

Չեւ, չեւ եւս conj. pas encore, pas jusqu'à présent; չեւ էին տեսեալ, il n'avait pas encore vu; չեւ տեսեալ, avant de voir; չեւ եւս գիտէր, il ne savait pas encore.

Չզարդ s. qui n'est pas un ornement, mauvaise parure.

Չէ, ից V. Չգոյ, Չիք, * Ոչ; չէ ինչ, ce n'est rien, de rien.

Չէական a. qui n'est pas essentiel.

Չէզոք, աց adj. neutre; * — մնալ՝ կենալ, rester neutre.

Չէզոքանամ, ացայ vn. se neutraliser.

Չէզոքապէս adv. neutralement, d'une manière neutre.

Չէզոքացումն s. neutralisation.

Չէզոքացուցանեմ, ուցի va. neutraliser.

Չէզոքութիւն s. neutralité.

Չէութիւն s. nullité, néant.

Չէք, էից s. tous ceux qui ne sont pas.

Չժողովուրդ, վրդեան s. qui n'est pas un peuple, mauvais ou bas peuple.

Չիղչ, չղչից s. chauve-souris.

Չինչ, չնչի V. Ոչինչ.

Չինացի, ցւոյ a. s. chinois.

Չիչխան s. bot. brusc.

Չիք v. déf. il n'y a, il n'y a pas, il n'existe pas; չիք իմ տեսեալ, je n'ai pas vu, je n'ai jamais vu; չիք ոք չիք ուրեք, il n'y a personne; չիք ինչ, il n'y a rien, il n'en est rien; չիք ոք գիտիցէ զայդ, personne ne sait cela.

Չիք, չքի s. rien, néant; չիք լինել, չիք յաչաց լինել, s'anéantir, disparaître des yeux; ի չիք դարձուցանել, anéantir, réduire à rien, à néant.

Չլուելոյն առնել, faire semblant de ne pas entendre, de ne pas écouter.

Չլուր a. inouï.

Չխաղոյք s. qui ne sont pas des jeux, choses sérieuses.

Չխոստովանութիւն s. l'action de ne pas confesser.

